

ԲԱՆԻԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
REVIEW OF ARMENIAN STUDIES
ВЕСТНИК АРМЕНОВЕДЕНИЯ



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES



2021 N 2 (26)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԳԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ

TRI-ANNUAL JOURNAL PUBLISHED SINCE NOVEMBER 2013

Գլխավոր խմբագիր՝ Խառատյան Ա.

Խմբագրական խորհուրդ

Աղասյան Ա., Ավետիսյան Պ., Գասպարյան Ս., Գևորգյան Հ.,
Դերիկյան Վ., Իսահակյան Ա., Կատվալյան Վ., Հարությունյան Վ.,
Հովակիմյան Վ., Մելքոնյան Ա., Պողոսյան Գ., Սաֆրաստյան Ռ.,
Սուվարյան Յու.

Главный редактор: Харатян А.

Редакционная коллегия

Аветисян П., Агасян А., Арутюнян В., Гаспарян С., Геворгян Г., Деври-
кян В., Исаакян А., Катвалян В., Мелконян А., Овакимян В., Погосян Г.,
Сафрастян Р., Суварян Ю.

Editor-in-Chief: Kharatyan A.

Editorial Board

Aghasyan A., Avetisyan P., Devrikyan V., Gasparyan S., Gevorgyan H.,
Harutyunyan V., Hovakimyan V., Isahakyan A., Katvalyan V., Melkonyan A.,
Poghosyan G., Safrastyan R., Suvaryan Y.

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2021 Թ. N 2 (26)

Ընտրությունները ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում..	5
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ · HISTORY	
<hr/>	
Hayrapetyan A. – Activities of Alexandrapol Municipal Autonomy Bodies in 1918–1920	8
Շահնազարյան Ա. – Խաղխաղի տեղադրության շուրջ	20
Hovhannisyán L. – The USA Policy on the Armenian Question from the Treaty of Sèvres to W. Wilson’s Arbitral Award	27
Bablumyan A. – The Armenian Population of Arghana Maden Sanjak of Province Diarbekir (Tigranakert) at the End of XIX – Beginning of XX Centuries	43
Bakhchinyan A., Matiossian V. – Eleonora Duse and the Armenians ..	63
Fishenkjian A. – The Syrian-Armenians’ Assistance to the Iraqi-Armenians Sheltered in Syria as a Result of the 2003 Iraq War ..	79
Հովհաննիսյան Հ. – Գեներալ Վասիլ Բեհրուբով	89
Պետոյան Ս. – Շուշիի Մահաեսի-Հակոբյանցների տպարանը (1877–1905 թթ.)	107
ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ · ARCHAEOLOGY	
<hr/>	
Bobokhyan A., Khomutova T., Hovsepyan R. – “Soil Memory” and “Cultural Memory” of Historical Landscapes of Armenia: Launching of a Multidisciplinary Study of Bronze and Early Iron Age Sites	129
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ · ART	
<hr/>	
Асатрян А. – «Плпун Аварайри» («Соловей Аварайра») Гевонда Алишана в музыке	145
Muradian Sh. – Ara Bekaryan’s Papers on Armenian Art in “The Soviet Art” Journal	158

**ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ · MEDIA THEORY**

Gasparyan S., Hayrapetyan Z. – The Recent War Against Karabakh:
a Clash of Interests 169

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ · PHILOLOGY

Dolukhanyan A. – La Correspondance de Nicolas Adonts 187
Խաչատրյան Լ., Խաչատրյան Լ. – Ածականի թվի քերականա-
կան կարգի արտահայտությունը հին հայերենում 197
Apresyan A. – Grigor Narekatsi and the Translators 213
Իսահակյան Բ. – Մայրական սիրո և պանդխտության թեման
Ավետիք Իսահակյանի պոեզիայում 223

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ · BOOK REVIEWS

Makhmourian G. – *Hovhannisyán Lilit. The Elucidation of the
Armenian Question, 1915–1923* 244
Խառատյան Ա., Կարապետյան Ա. – *Հիշողության և պահանջի
անժամանցելի ներուժը* 252

ՀՈՒՐԵԼՅԱՆՆԵՐ · JUBILEES

Եղիազարյան Ա. – Էդիկ Գարեգինի Մինասյան *Ծննդյան 65-
ամյակի առթիվ* 258

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԳԱԱԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հունիսի 28-ին տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ ղեկավար կազմի ընտրություններում ՀՀ ԳԱԱ նախագահ ընտրվեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը:

Աշոտ Սաղյանը ծնվել է 1957 թ.՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետը, 1980–1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեմեյանովի անվան էլեմենտորգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:



Իր թեկնածուականատենախոսությունը Աշոտ Սաղյանը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1996 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նրա գիտական գործունեության բնագավառն է ոչ սպիտակուցային ամինաթթուների ապիմետրիկ բիոմիմետիկ սինթեզը, մանրէաբանական սինթեզի կուլտուրալ հեղուկներից ամինաթթուների անջատումը և մաքրումը: Աշոտ Սաղյանը շուրջ 350 գիտական հոդվածի, 2 դասագրքի, 2 մենագրության հեղինակ է:

Աշոտ Սաղյանն աշխատել է ԽՍՀՄ Բժշկական և մանրէաբանական արդյունաբերության նախարարության գենետիկայի և սելեկցիայի համամիութենական ինստիտուտի Չարենցավանի մասնաճյուղում, այնուհետև՝ Ամինաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: 2000 թ. նշանակվել է ինստիտուտի տնօրեն: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ՊՈԱԿ-ի տնօրեն: Աշոտ Սաղյանը 1998 թ.-ից աշխատում է նաև Երևանի պետական համալսարանում՝ սկզբում որպես դեղագործական քիմիայի ամբիոնի դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, իսկ 2003

Ընտրությունները ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում

թ.-ից՝ ամբիոնի վարիչ: 2016 թ. դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծվել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, որի տնօրեն է նշանակվել Աշոտ Սաղյանը:

Նա 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար է:

2001 թ. Աշոտ Սաղյանն արժանացել է Եվրամիության Դեկարտի անվան մրցանակի: 2002 թ. պարգևատրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարական «Բարեկամություն» շքանշանով: 2004 և 2011 թթ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակների, 2009 թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի: 2014 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 2015 թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի:



ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը ծնվել է 1947 թ., Երևանում: 1970 թ. ավարտել է ԵՊՀ-ի Ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 1997 թ.՝ դոկտորի: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հրանտ Մաթևոսյանը 2011-2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, 2021 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ Գիտության զարգացման հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը ծնվել է 1960 թ., ԼՂՀ Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 2004 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական դոկտորի կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:



Արթուր Իշխանյանի գիտական գործունեության բնագավառն է ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկա, մակերևութային ֆիզիկա, քվանտային սակավալիճակ համակարգեր, գերսառը ֆոտոն և մագնիսաաոցիացիա, ոչլեյաստիվիստա-

Ընտրությունները ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում

կան և ռեյսատիվիստական ալիքային հավասարումներ, ոչգծային ֆիզիկա, մաթեմատիկական ֆիզիկա, Հոյնի ֆունկցիաների տեսություն:

1994–2005 թթ. Արթուր Իշխանյանը ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» Ճարտարագիտական կենտրոնի գիտքարտուղարն էր, 2005–2006 թթ.՝ նույն կենտրոնի տնօրենի պաշտոնակատարը: Նա 2007 թ.-ից ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի «Նյութական ալիքների ֆիզիկայի» լաբորատորիայի վարիչն է:

2015 թ. Արթուր Իշխանյանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարների պաշտոններում վերընտրվեցին.

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենաեր Աղալովյան

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյան

ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունք, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Թավադյան

ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սովարյան:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռադիկ Մարտիրոսյանը, Աշոտ Մելքոնյանը, Գեղամ Գևորգյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արսեն Հախումյանը, Վազգեն Մելիքյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանի առաջարկությամբ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

HISTORY

ARMEN HAYRAPETYAN*

PhD in History, Associate Professor

The NAS RA Shirak Center for Armenological Studies

armenani@mail.ru

ACTIVITIES OF ALEXANDRAPOL MUNICIPAL AUTONOMY BODIES IN 1918–1920

Key words: autonomy, occupation, municipal council, municipal administration, P. Levonyan, RA Government, Revolutionary Committee.

Introduction

The restoration of an independent Armenian state in 1918 was significant for the Armenian people. Despite the difficult and unstable political and socio-economic situation of the First Republic of Armenia, in 1918–1920 large-scale processes took place in the field of state formation in newly independent Armenia, one of which was the formation of local self-governing bodies. They were some of the most important means of exercising the system of public administration and public power of the newly independent republic.

The study of local self-governing bodies is important for making the history of the state system of the First Republic of Armenia more complete. The gained experience can be useful from the point of view of developing the current system of territorial administration and local self-governing bodies of the Republic of Armenia.

* Հոդվածը ներկայացվել է 17.05.21, գրախոսվել է 21.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

Alexandrapol Municipal Autonomy Bodies during the First Turkish Occupation

The first bodies of municipal autonomy were formed in Alexandrapol in 1896 under the leadership of G. Ter-Petrosyan¹. They remained operational with minor changes until the beginning of 1917. After the February Revolution, the Provisional Government established a democratic electoral system for the formation of urban autonomies, enabling cities to establish municipal councils and administrations. Unfortunately, the municipal autonomy of Alexandrapol, formed on democratic principles in 1917, did not last long. In the morning of May 15, Turkish troops occupied the city and most of the Alexandrapol uyezd². At that crucial moment for Alexandrapol, the members of the municipal council and administration, the heads of public and state organizations, as well as the municipal police in their entirety, fled the collapsing city, so that the municipal autonomy ceased to exist³.

Following the seizure of Alexandrapol, the Turks reestablished the municipal autonomy. On May 17, the General Assembly of Citizens, chaired by the director of the Commercial Gymnasium L. Sargsyan, formed a 29-member municipal council (16 Armenians, 3 Greeks, 3 Muslims, 3 Russians, 2 Georgians, 2 Jews)⁴. The next day, the council elected a 15-member municipal board with 16 committees (sanitation, food, auditing, finance, inventory, etc.)⁵. The mayor of Alexandrapol, L. Sargsyan, was elected chairman of the municipal council, his assistants were P. Merkurov, Haji Yusuf-Oghli-Yusufov, the secretary was Tsikhistov, and the translator was Mubayajyan⁶.

On May 19, the Turkish command recognized the legitimacy of the municipal authorities, and on May 22, Vehib Pasha, who arrived in Alexandrapol, met with the members of the newly elected council at the Trade Gymnasium. The Council presented a petition consisting of 9 articles, demanding to respect the personal

¹ Հայրապետյան 2006, 42–50:

² Խատիսեան 1968, 73:

³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 3, Ատրպետ 1918, N 262, 2:

⁴ Ալեքսանյան 2011, N 1, 28:

⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 125, թ. 8, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 30:

⁶ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 5:

inviolability of property and honor, to stop looting, arbitrary rule and violence, to allow the Armenians migrated from Kars region to return their homes⁷.

On June 26, the municipal administration was reorganized, and all affairs were concentrated under five general sections: financial-economic (Ter-Martirosov), administrative (S. Ghazaryan), sanitary-medical (Tsikhistov), technical (Chakhmasazov) and food (Yusufov)⁸.

The justice system in the war-torn uyezd was not launched. Turks simply allowed the Commission for the Investigation of Legal Disputes between citizens under the Municipal Autonomy to investigate light offences⁹. Instead, they created a new police system. According to contemporaries, patrols appeared in the streets of the city in the morning of May 16¹⁰, and four days later a 50-member Turkish-Armenian mixed police force was formed¹¹.

The solution to the food issue became the priority task of the municipal authorities. On July 26, 1918, the Municipal council set up a committee to organize the bread trade, which in its turn set about returning 1,200,052 rubles to the Alexandropol Bank, which had been taken to Tbilisi (Georgia) by members of the former administration. The financial dispute between the old and new municipal authorities was settled only in September 1918, after A. Jamalyan, the diplomatic representative of the Republic of Armenia in Georgia, at the request of L. Sargsyan, who arrived in Tbilisi (Georgia), intervened in the case¹².

The fight against epidemic diseases also became a matter of concern for municipal autonomy. Steps were taken to invite doctors from Yerevan, Tbilisi (Georgia), bury the bodies of cholera victims in special places, and open hospitals for the treatment of venereal diseases¹³. Attempts were also made to revive the school work by bringing back Alexandropol teachers who had fled to Tbilisi (Georgia)¹⁴.

In fact, during the Turkish rule, Alexandropol municipal authority, in the absence of national parties and other state institutions, became the only body that

⁷ Ատրպետ 1918, N 262, 3:

⁸ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2710, թ. 5:

⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 125, թթ. 9–10:

¹⁰ Ալեքսանդրապոլում, 1918, N 116, 2:

¹¹ Յովսէփեան 1918, N 6 (206), 2:

¹² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 103–114:

¹³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2710, թ. 62:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 97, թ. 26:

concentrated all the public and state affairs of the uyezd. At the same time, acting as a mediator between the people of the city and the uyezd and the Turkish command, it **tried to suppress the Turks' violence as much as possible and to ensure the physical existence of the Armenians**¹⁵. In his report sent to the Ministry of Foreign Affairs dated to December 4, 1918, the RA diplomatic representative in Alexandrapol G. Khoyetsyan wrote about the activities of the structure headed by L. Sargsyan. "When the former administration left the city, L. Sargsyan and his teammates stayed to help the martyred people. "What they endured during the Turkish rule, their self-renounced support of the people's interests, honesty and courage, awakens a deep sense of respect in me"¹⁶.

Activities of Alexandrapol Municipal Autonomy BODIES in 1919–1920.

In the fall of 1918 the situation changed dramatically. The Ottoman Empire, defeated in World War I, withdrew its troops from the occupied territories. On December 4, 1918, the Armenian troops entered Alexandrapol with great solemnity. On the same day, the uyezd of Alexandrapol was declared part of Armenia¹⁷. However, the new uyezd was significantly different from the previous one in terms of territory. The precinct of Mets (Great) Gharakilisa was removed from the uyezd by October 7 decision of the Council of Ministers of the Republic of Armenia, and merged with the precincts of Dilijan and Karavansara to become part of the newly formed province of Dilijan¹⁸. The new province of Alexandrapol, established in early December, included only the territory of Eastern Shirak, with 4 precincts and 129 villages¹⁹.

In the grip of famine and epidemics, it was necessary to restore the activities of state and public institutions in the province, and the city authorities of Alexandrapol played a major role in this. In order to establish order, on December 14, 1918, the city militia was made up of 350 policemen, and 3 judges (A. Tayants, G. Khoyetsyan, Ter-Hakobyan) were elected to investigate the urgent criminal cases.

¹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 125, թ. 8:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 126, թթ. 90–96:

¹⁷ **Հեռագիրներ Ալեքսանդրապոլի գրաման մասին**, 1918, N 78, 4:

¹⁸ **Ղարաքիլիսեի յանձնումը**, 1918, N 20, 4:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 4, թ. 20:

An emergency commission chaired by the mayor was set up to prevent epidemics. The city was divided into four districts, with regional doctors appointed in each of them, bathhouses and orphanages opened²⁰.

The Migration Commission chaired by M. Ghazaryan played an invaluable role in ensuring the living conditions of the migrants²¹. In just four months, from December 10, 1918, to April 2, 1919 (after April, the American Middle East Relief Committee took over the food supply)²², the commission provided shelter to the migrants in Alexandrapol and opened 9 feeding stations²³.

Unfortunately, the tense relations between the central authorities of the Republic of Armenia and mayor L. Sargsyan did not allow to register serious results in the restoration of the city economy. Those relations became more tense during the Armenian-Georgian war. Hoping to save the population of an economically devastated province from starvation, Alexandrapol municipal authorities asked the Armenian government to stay away from an extremely undesirable war²⁴, but to no avail. When the railway communication between Kars and Jajur was interrupted due to the winter snowstorms, the province found itself in the grip of famine²⁵.

The controversy between the non-Dashnak city authorities of Alexandrapol and the center made up of predominantly ARF members, was in fact politically motivated. The municipal authority was trying to maintain its power, while the ARF, on the contrary, was trying to regain its influence in the city of strategic importance.

On February 25, 1919, the ARF demanded that Alexandrapol municipal administration hold municipal council elections²⁶. Those took place on May 4, 1919 and gave the following results: 38 representatives were elected to Alexandrapol municipal council from the ARF (Dashnaksutyun), 9 from the People's Party of Armenia (PPA), and 5 from the Socialist Union (an alliance of Independent Socialists led by Menshevik L. Sargsyan and SRs – Socialist Revolutionaries).

²⁰ ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 2711, թ. 153–154, 166, 172–174, 190:

²¹ ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 2715, թ. 3:

²² ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 2715, թ. 50:

²³ ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 2715, թ. 7–10, 50:

²⁴ ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 3003, թ. 3:

²⁵ ՀԱԱ, ֆ. 205, գ. 1, զ. 689, թ. 45-49:

²⁶ ՀԱԱ, ֆ. 105, գ. 1, զ. 2799, թ. 11:

Considering such a ratio of political forces in the newly elected municipal council as a result of electoral fraud and abuse, the Socialist Union and PPA tried to challenge the election results in court (the court hearing ended on December 1, 1919. The administrative department of Yerevan District Court dismissed the election complaint)²⁷. L. Sargsyan also appealed to the RA Prime Minister and the Ministry of Internal Affairs not to convene sessions with the new council before the court decision was announced, but the RA Government decided that the judicial process was not an obstacle for convening a newly formed council²⁸. At the first session convened on June 4, 1919, H. Budaghyan was elected chairman of the newly elected council of Alexandrapol, and M. Simonyan – as the secretary²⁹. The issue of electing a mayor lasted relatively long. H. Melkonyan was elected to the post on September 23, after only six months, and on March 22, 1920, he resigned³⁰.

After H. Melkonyan, the post of the mayor of Alexandrapol remained vacant again, which had a negative impact on the efficiency of the city's autonomy. The issue was resolved only due to the intervention of the central authorities. After the defeat of the May uprising, the Minister of Internal Affairs and the Military, R. Ter-Minasyan simply demanded that the governor of Shirak “restore the activity of municipal autonomy as soon as possible.” On June 16, 1920, the council invited the deputy governor of Yerevan P. Leonyan to the post of mayor of Alexandrapol³¹. The activities of the economic, food, financial-budgetary, police, medical-sanitary, audit and other temporary and permanent commissions were regulated³².

1919–1920 Alexandrapol lived through a difficult and controversial period: chaos in the local self-government bodies, complicated relations with the Center, inter-party struggle, famine, emigration, orphans, the May Uprising. However, due to the steps taken by the local authorities since 1919 from the middle of the XIX century, life in the city started slowly normalizing.

²⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2799, թ. 264:

²⁸ **Նոր կեանք**, 1919, N 60, 4:

²⁹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 219:

³⁰ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2807, թ. 1–3, 12:

³¹ **Քաղաքային խորհրդի 1920թ. յունիսի 16-ի նիստի որոշումներից**, 1920, N 25, 4:

³² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2807, թ. 27:

The first positive steps were taken in the field of education. After the establishment of the government of the Republic of Armenia in Alexandrapol, the tuition fees were reduced by 50% in 6 elementary schools under the jurisdiction of the city³³. In the 1920 academic year, the number of elementary schools reached 10. The Armenian government gave 2 million rubles for their renovation³⁴.

Proceeding from the principle of sequence of education and upbringing, the board decided to open mixed gender kindergartens. Despite financial constraints, the first kindergarten opened on February 4, 1920. 122 children from poor families were admitted here³⁵.

Based on the decision of the Government of the Republic of Armenia of September 22, 1920 to open a music school, the city administration invited the merited composer Romanos Melikyan³⁶ to Alexandrapol for the position of headmaster. The department also expressed readiness to open the university, providing the necessary building facilities. Later, when the government decided to move the university to Yerevan, the municipal autonomy set up a special commission to negotiate with the government to let the university stay in Alexandrapol³⁷.

The city council approved a number of other bills for the renovation of streets, their renaming, the establishment of taxes, duties and tariffs. A toll was imposed on vehicles in favor of the city. Because of the difficult economic situation on June 16, 1920, the land tax was reduced³⁸. A “Council of Elders” was set up under the city administration to prevent unnecessary increases in the prices of food and other basic necessities³⁹.

Serious steps were also taken to renovate the streets. The meeting of engineers convened at the suggestion of the city council decided to pave the central streets with cobblestones⁴⁰ and announced a tender for contractors to

³³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 172, թ. 5–8:

³⁴ Նույն տեղում, թ. 121:

³⁵ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2891, թ. 6, 15–16:

³⁶ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2779, թ. 91:

³⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2889, թ. 69:

³⁸ Քաղաքային խորհրդի 1920 թ. յունիսի 16-ի նիստի որոշումներից, 1920, N 25, 4:

³⁹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2889, թ. 63:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2813, թ. 90–91:

carry out the work⁴¹. With the funds provided by the government, the city's water supply network was restored⁴².

Practical steps were also taken to electrify the city. In February 1920, the city council municipalized the power plant on a private basis, and when the lighting problem was not resolved, it decided to build one, that should belong to the town hall⁴³.

An integral part of the social policy of the municipal authority was the management of public catering establishments. From the end of 1919, one of the main tasks of the authority became the distribution of bread to the poor immigrants. Grain purchases were made in Sharur region⁴⁴, and the distribution was entrusted to cooperatives⁴⁵.

Unfortunately, the Turkish-Armenian war, which began in late September 1920, disrupted the normal functioning of the city authorities. At dawn on November 5, Mayor P. Lyonyan, members of the board and heads of almost all state structures, contrary to the decision of the Armenian authorities not to leave Alexandrapol in case of invasion, left the city, abandoning it to anarchy⁴⁶: At that crucial moment, L. Sargsyan again took the initiative to prevent the physical extermination of the defenseless Armenian population of the province. Forming a **coalition body of 15 people from the Peoples' and Social-Democratic Party** (with E. Mirakyan and P. Shermazanyan as advisors)⁴⁷, L. Sargsyan, allegedly, at the instructions of General Silikyan the representative of the Armenian government in Alexandrapol, started negotiations with the Turks, with the hope to prevent the Turkish-Bolshevik reapproachment, but in vain. The Turks who entered Alexandrapol preferred to negotiate with the Bolsheviks, thus discrediting the coalition authority led by L. Sargsyan, thus reaching the establishment of the Soviet order in the city⁴⁸. On November 17, a body of the Soviet government, the Revolutionary Committee (RevCom), was established⁴⁹. The Turkish command re-

⁴¹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2897, թ. 12:

⁴² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2866, թ. 93:

⁴³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2866, թ. 220:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 147, թ. 81:

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2779, թ. 111:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2863, թ. 226:

⁴⁷ Ալեքսանդրապոլի դէպքերը, 1920, N 182, 1:

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թթ. 1–3:

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 5:

cognized the Soviet power in Alexandrapol as much as required to complete the last act of the annihilation of the Eastern Armenians⁵⁰. The Section of Internal Affairs and the Emergency Commission, in particular, became a real scourge on the population of the uyezd of Alexandrapol, where the Turkish horrors had been taking place. Only on January 25, 1921, the Revolutionary Committee, realizing its mistake, laid down its authority⁵¹.

The Turkish command immediately set about forming new local government bodies. With their support, the city police chief S. Matinyan declared himself mayor⁵². The city council and the department started their work on March 18. The situation remained unchanged until the end of April 1921, when Turks left the uyezd of Alexandrapol.

Conclusion

The local self-government bodies of Alexandrapol experienced a rather difficult and controversial period in 1918–1920. The Turkish double invasion in 1918 and 1920 dealt an irreversible blow to both the socio-economic situation of the city and the demographic picture. In addition, the inter-party struggle, hunger and thousands of migrants left their mark on the work of autonomy. But still, the city authorities did an invaluable job in bringing life back to normal in this difficult situation.

BIBLIOGRAPHY

Ալեքսանյան Կ., Փաստաթղթեր 1918թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ձևավորման վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2011, N 1, էջ 27–40:

Ալեքսանդրապոլի դեպքերը, «Ժողովուրդ», Երեւան, 1920, N 182, 9 նոյեմբերի:

Ալեքսանդրապոլում, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 116, 20 յունիսի:

Ատրպետ, Ալեքսանդրապոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 262, 21 դեկտեմբերի:

Խատիսեան Ալ. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը, «Համազգային», Պէրոյթ, 487 էջ:

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 126:

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 172:

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 127, թ. 29:

⁵¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թթ. 54–57:

⁵² ՀԱԱ, ֆ. 114, ց. 3^ա, գ. 70, թ. 4:

- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2710:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2779:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2799:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2807:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2813:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2863:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2866:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2889:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2891:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2897:
- ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 3003:
- ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10:
- ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33:
- ՀԱԱ, ֆ. 114, ց. 3^ա, գ. 70:
- ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 147:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 97:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 125:
- ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 4:
- ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 689:
- ՀԱԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 127:

Հայրապետյան Ա., Ցարական կառավարության քաղաքային ռեֆորմները XIX դ. Երկրորդ կեսին և Ալեքսանդրապոլը, ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2006, էջ 42–50:

Հեռագիրներ Ալեքսանդրապոլի գրաման մասին, «Զանգ», Երեան, 1918, N 78, 11 դեկտեմբերի:

Ղարաքիլիսէի յանձնումը, «Մշակ», Թիֆլիս, 1918, N 20, 18 հոկտեմբերի:

Յովսէփեան Մ., Ալեքսանդրապոլը՝ գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը), «Աշխատանք», թերթ, Եր., 1918, N 6 (206), 8 (26) յունիսի:

Նոր կեանք, Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրութիւնների շուրջ, «Ժողովուրդ», Երեան, 1919, N 60, 6 հունիս:

Քաղաքային Խորհրդի 1920թ. յունիսի 16-ի նիստի որոշումներից, «Շիրակի աշխատաւոր», Ալեքսանդրապոլ, 1920, N 25, 20 յունիսի:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918–1920 ԹԹ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ա.

Ամփոփում

*Քանայի բառեր*¹ ինքնավարություն, քաղաքային խորհուրդ, քաղաքային վարչություն, Հ. Մելքոնյան, Պ. Լևոնյան, ՀՀ կառավարություն, հեղափոխական կոմիտե:

1918 թ. մայիսի 15-ին գրավելով Ալեքսանդրապոլը, թուրքերը վերականգնեցին քաղաքային ինքնավարության գործունեությունը: Հաջորդ վեց ամիսներին Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը դարձավ միակ մարմինը, որը ստանձնեց քաղաքի և գավառի հասարակական-պետական գործառույթների ղեկավարումը՝ միաժամանակ հանդիսանալով միջնորդ՝ քաղաքի ու գավառի ազգաբնակչության և թուրքական հրամանատարության միջև:

Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիան 1918 թ. աշնանը դուրս բերեց իր զորքերը ռազմակալված տարածքներից և դեկտեմբերի 4-ից Ալեքսանդրապոլի գավառը հայտարարվեց ՀՀ մաս: Հաջորդ երկու տարիների ընթացքում Ալեքսանդրապոլն ապրեց բարդ ու հակասական ժամանակահատված՝ խառնաշփոթ տեղական ինքնակառավարման մարմիններում, Կենտրոնի հետ բարդ հարաբերություններ, միջկուսակցական պայքար, սով, գաղթականություն, որբեր, Մայիսյան ապստամբություն: Այդուհանդերձ տեղական իշխանությունների հետևողական քայլերի շնորհիվ՝ սկսած 1919 թ. կեսերից, կյանքը քաղաքում մտավ բնականոն հունի մեջ:

1920 թ. աշնանն իրավիճակը կրկին փոխվեց: Թուրք-հայկական պատերազմի արդյունքում քաղաքն ու գավառը երկրորդ անգամ ռազմակալվեցին թուրքերի կողմից: Ալեքսանդրապոլ մտած թուրքերը գավառում խորհրդային կարգեր հաստատեցին և համագործակցելով բոլշևիկների հետ, փորձեցին ավարտին հասցնել արևելահայության բնաջնջման վերջին գործողությունը: Այդ իրավիճակը տևեց մինչև 1921 թ. ապրիլի վերջերը:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНОВ ГОРОДСКОГО САМОУПРАВЛЕНИЯ АЛЕКСАНДРОПОЛЯ В 1918–1920 гг.

АЙРАПЕТЯН А.

Резюме

Ключевые слова: самоуправление, городской совет, городская дума, П. Левонян, правительство РА, революционный комитет.

Оккупировав Александрополь 15 мая 1918 г., турки восстановили деятельность городского самоуправления. В течение следующих шести месяцев Александропольское городское самоуправление являлось единственным органом, который взял на себя функцию управления общественно – государственными делами города и уезда, одновременно выступая в качестве посредника между населением и турецким командованием.

Осенью 1918 года проигравшая в войне Турция вывела свои войска из оккупированных территорий, и с 4-ого декабря Александропольский уезд был объявлен частью Армении. На протяжении последовавших вслед за этим двух лет Александрополь пережил сложный и неоднозначный период: беспорядки в местном самоуправлении, сложные отношения с Центром, межпартийная борьба, голод, эмиграция, вопрос сирот, Майское восстание. Однако благодаря последовательным действиям местных властей с середины 1919 г. жизнь в городе нормализовалась.

Осенью 1920 г. ситуация вновь изменилась. В результате турецко-армянской войны город и уезд во второй раз были оккупированы турками, установившими в уезде советскую власть и в сотрудничестве с большевиками попытавшимися довести до конца истребление восточных армян. Такова была ситуация в Александрополе до конца апреля 1921 года.

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ*

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ash.haam@gmail.com

ԽԱՂԽԱՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Քանալի բառեր¹ Խաղխաղ, Լոփնաս, Աղուէ, Աղստև, Տավուշ, Կուր, Գարդման:

Ներածություն

Հայ պատմագրության մեջ քանիցս հիշատակվող պատմական Խաղխաղը գտնվել է Մեծ Հայքի Ուտիք աշխարհում: Այդ քաղաքն առավելապես հայտնի է իբրև մի բնակավայր, որի մերձակայքում 450 թ. կայացել է 450–451 թթ. ժողովրդա-ագատագրական պատերազմի ժամանակ հայկական և պարսկական զորքերի միջև երկու խոշոր ճակատամարտերից առաջինը¹: Այն, ինչպես քաջ հայտնի է, ավարտվել է սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայկական զորքի փայլուն հաղթանակով:

Գլխավորապես այդ հանգամանքով պայմանավորված՝ Խաղխաղի տեղորոշման հարցը տասնամյակներ շարունակ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Խաղխաղի տեղադրությունը

Խաղխաղ քաղաքի տեղորոշմամբ զբաղված որոշ ուսումնասիրողներ վստահաբար այն տեղակայել են Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանի Յանխի (Խալխալ, Խալխանլը, Խիլխինա) գյուղի տեղում: Նման տեղորոշման հիմքում ընկած է Խաղխաղի մերձակայքով հոսող Լոփնաս գետի հետ Ձագամ գետի նույնացումը²: Ղ. Ալիշանն էլ Լոփնասը նույնացրել է կամ

* Հոդվածը ներկայացվել է 07.05.21, գրախոսվել է 17.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

¹ Տե՛ս Եղիշեի 1957, 75, Ղազարայ Փարպեցույ, 1982, 150, Մովսէս Կաղանկատուացի 1988, 114:

² Տե՛ս Sant-Martin 1818, 88–89, Բարխուտարեանց 1895, 57–58, Եղիշեի 1957, 207, ծան. 94, Հարությունյան 1978, 715, Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1989, 715, Հակոբյան, Մելիք-Բախշյան 1991, 475, Կարապետյան 2004, 299:

Խաղխաղի տեղադրության շուրջ

Ձագամի, կամ էլ նրա վտակներից մեկի հետ³: Այսպիսով, ըստ այս հեղինակների, Խաղխաղը գտնվել է Ուտիքի Գարդման գավառում, քանի որ այդտեղով Ձագամի հոսելը կասկածից վեր է:

Սակայն բանն այն է, որ հայկական ու վրացական աղբյուրներում զանազան տարընթերցումներով՝ Ձագամ, Ջական, Ձեգամ, Ջեգամ, Սագիմ և անգամ Բերդուջի անվամբ⁴ հիշատակված Ձագամը երբեք Լոփնաս չի կոչվել: Բացի այդ, որ տվյալ պարագայում շատ կարևոր է, Խաղխաղը Գարդմանում գտնվելու դեպքում այդ գավառը պետք է լիներ արքունապատկան տիրույթ և կառավարվեր թագավորի նշանակած կառավարչի կողմից: Մինչդեռ Գարդմանն առանձին իշխանություն էր և պատկանում էր իր ժառանգական տեր իշխանին:

Խաղխաղի տեղադրությանն անդրադարձողների մի մասն էլ այն տեղակայել է Ուտիքի Աղուէ գավառում՝ Աղստե գետի ափին: Ս. Երեմյանն Աղստեղ նույնացնելով Լոփնասի հետ, սկզբում գրել է, որ այդ քաղաքն ամենայն հավանականությամբ նույնական է դրա ափին գտնվող Լալա (Խիլխիլա, Խիլխինա) կոչված բնակավայրի հետ⁵: Հետագայում նա հպանցիկ կրկին անդրադառնալով Խաղխաղի տեղադրությանը, գրել է, որ այն պետք է փնտրել Ադրբեջանի Հանրապետության Ղազախ քաղաքի մոտերքում⁶:

Վ. Խաչատրյանն այդ բնակավայրը նույնացրել է Ղազախի հետ⁷: Ֆ. Մամեդովան Խաղխաղը տեղադրել է «Ժամանակակից Ղազախի գոտում»⁸, իսկ Ա. Եղիազարյանը՝ Աղստեի աջ ափին⁹: Խաղխաղը սկզբում Ձագամ գետի ափին տեղակայած Բ. Հարությունյանը հետագայում վերանայել է այդ տեսակետը: Նա համերաշխել է Խաղխաղը «ներկայիս Ղազախ քաղաքի տեղում կամ մերձակայքում» տեղադրող ուսումնասիրողների հետ¹⁰ և այն գետեղել Աղստեի աջ՝ արևելյան ափին¹¹:

³ Տե՛ս Ալիշան 1856, 84:

⁴ Տե՛ս Карлис Цховреба 2008, 337:

⁵ Еремян 1939, 85

⁶ Երեմյան 1969, 21: Հեղինակը հողվածին կից քարտեզում Ղազախը նշել է Լալա (Խաղխաղ) ձևով: Տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն 1984, Еремян 1951, 55:

⁷ Տե՛ս Хачатрян 1991, 130:

⁸ Мамедова 2005, 353:

⁹ Տե՛ս Եղիազարյան 2010, 99:

¹⁰ Հարությունյան 2007, 98, Арутюнян 1979, 28:

¹¹ Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս 2004, 49, 51, Հայաստանի ազգային ատլաս 2008, 34:

Շահնագարյան Ա.

Ընդ որում, Բ. Հարությունյանը, Լուինասի ու Աղստևի նույնացումը պատմական ճշմարտությունից հեռու դիտելով, առավել հավանական է համարել, որ այն նույնական է ոչ թե Աղստևի, այլ դրանից արևելք Կուր հոսող Հախում գետի հետ, տարօրինակ համարելով, որ «Աղստև գետի անունը կարող էր մի ինչ-որ ժամանակ փոխարինվել Լուինասով և այնուհետև վերականգնվել»¹²:

Լուինասն արդեն անվարան Հախումի հետ է նույնացրել Ա. Հակոբյանը: Նա նույնիսկ Խաղխաղի ճակատամարտը Լուինասի ճակատամարտ է կոչել և Խաղխաղը տեղորոշել Կուր գետի աջ ափին¹³: Տ. Գևորգյանն էլ Լուինասի ու Աղստևի նույնացումը բավարար չափով հիմնավորված չի համարել և ենթադրել է, որ Խաղխաղը «պետք է գտնվեր ավելի հարավ»¹⁴: Թե հարավ ասելով հետազոտողն ինչ է հասկացել՝ չի որոշակիացրել:

Ինդրո առարկա Խաղխաղի տեղակայման հարցը վերջինն արծարծել է Ա. Այվազյանը: Նա այդ բնակավայրը Ձագամի ափին գտնվելու տեսակետը մերժելով, գրել է հետևյալը. «Ս. Տ. Երեմյանը ճիշտ է Լուինասը նույնացրել Աղստևի, իսկ Խաղխաղը՝ ժամանակակից Խիլխինա գյուղի հետ»¹⁵: Նկատենք, որ Խիլխինան ընկած է Աղստևի ձախ ափին:

Արգիշտի I-ի (Ք.ա. 786–764) Խորխոռյան տարեգրության մեջ (Ք.ա. 782 թ.) Ալիշտու=Աղստև քաղաքի և XIII դ. Ստեփանոս Օրբելյանի կողմից նույնանուն բնակավայրի հիշատակումները¹⁶ հիմնավորում են Աղստևը Լուինասի վերանվանվելու անհնարինության շուրջ Բ. Հարությունյանի վերը բերված պնդումը: Ինչ վերաբերում է Խաղխաղի և Խիլխինայի՝ հնչյունական առումով մոտ լինելու հիմամբ նույնացմանը, ապա դա նման մոտեցման համար բավարար հիմք չէ: Ինչպես արդեն տեսանք, Ձագամի ափին ևս նույնանուն բնակավայր կա, ինչը բնավ չի նշանակում, որ այն Խաղխաղի հետ նույնական է: Ընդ որում, Ս. Երեմյանն այդ բնակավայրերը որոշակի վերապահությամբ է նույնացրել, ինչը բնավ պատահական չէ:

Խաղխաղի ճակատամարտը և դրան նախորդած անցքերն առավել ստույգ ներկայացրած Եղիշեի տված տեղեկություններից հետևում է, որ նախքան Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայկական զորքի գալն Աղվանքում գտնված պարսկական բանակը Կուրը գետանցել էր ու տեղակայվել «մերձ ի

¹² Հարությունյան 2007, 100:

¹³ Յակոբեան 2009, հավելված քարտեզ, Յակոբեան 2020, 92:

¹⁴ Գևորգյան 2013, 135:

¹⁵ Айвазян 2016, 128–129 և հտ.:

¹⁶ Меликишвили 1960, Ստեփաննոս Օրբելյան 1910, 397:

Խաղխաղի տեղադրության շուրջ

սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի»¹⁷, որպեսզի կանխի նրա մուտքը բուն Աղվանք: Ինչ վերաբերում է հայոց զորքին, ապա այն «ի գեղն, որ կոչի Խաղխաղ երկիրն Աղուանից»¹⁸ էր հասել «ընդ սահման Վրաց»¹⁹, այսինքն Հայաստանի 387 թ. բաժանման հետևանքով Վիրքի կազմում ներառված Գուգարաց բղձխության տարածքից և, անպայման, Աղստևի ստորին հոսանքի հովտով, որտեղով այդ գետի աջ ափով հիմա էլ անցնում է Հայաստանի ներքին շրջանները Կուրի դաշտավայրի հետ կապող, ճիշտ է, այժմ չգործող ուղին²⁰:

Ասել է, թե հայոց զորքը նախքան Խաղխաղի մոտ հասնելը գետանցել էր Աղստևը, որի աջ ափին էր գտնվում այդ քաղաքը: Ճակատամարտի ընթացքում հայոց ուժերը հմուտ մարտավարության ու խիզախության շնորհիվ պարսիկներին հաջողությամբ «փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ»²¹: Ընդ որում, Եղիշէի, նրանից բառացիորեն քաղաքած Մովսէս Կաղանկատվացու և Ղազար Փարպեցու հաղորդումների համադրումից հստակ հետևում է, որ պարսիկները խուճապահար նահանջում էին Կուրի ու նրա վտակ Լոփնասի գետախառնուրդի ուղղությամբ, որպեսզի Կուրն անցնելով հետապնդողներից փրկվեն²²: Եվ քանի որ Խաղխաղի՝ Կուրից հարավ գտնվելը վիճարկման ենթակա չէ, իսկ Լոփնասը, որի նույնացումն Աղստևի հետ ապացուցելի չէ, դեպի Կուր է հոսում նրանից արևելք, ապա պարսիկները մարտադաշտից դեպի Կուր են փախել հյուսիս-արևելյան ուղղությամբ: Հետևաբար, Խաղխաղը պետք է փնտրել ոչ թե Աղստևի ափին, այլ՝ Լոփնաս=Հախումի ստորին հոսանքում, այդ գետի ձախակողմում ու ոչ թե Աղուէ, այլ՝ Տավուշ գավառում:

Եզրակացություն

Խաղխաղ քաղաքի տեղադրության շուրջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը Լոփնաս գետը նույնացնելով Ձազամ գետի հետ, այն նույնացրել է Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանի Յանխլի գյուղի հետ: Ոմանք էլ Լոփնասն Աղստև գետը համարելով կարծել

¹⁷ Եղիշէի 1957, 75:

¹⁸ Ղազարայ Փարպեցոյ 1982, 150:

¹⁹ Եղիշէի 1957, 74:

²⁰ Հմմտ. Հարությունյան 1974, 92:

²¹ Եղիշէի 1957, 76:

²² Տե՛ս Եղիշէի 1957, 75–76, Մովսէս Կաղանկատուացի 1988, 114–115, Ղազարայ Փարպեցոյ 1982, 152–154:

Շահնագարյան Ա.

են, որ Խաղխաղը գտնվել է դրա ափին: Որոշ հետազոտողներ էլ զգուշորեն կամ անվերապահորեն Լուինասն Աղստևից արևելք Կուր հոսող Հախում գետի հետ նույնացնելով գտել են, որ Խաղխաղը պետք է տեղադրել այդ գետի ափին:

Խաղխաղի ճակատամարտի մասին սկզբնաղբյուրների հաղորդումների համադիր քննությունից հստակ հետևում է, որ խնդրո առարկա քաղաքը պետք է փնտրել ոչ թե Աղստևի ափին, այլ՝ Լուինաս=Հախումի ստորին հոսանքում, այդ գետի ձախակողմում, ընդ որում, ոչ թե Աղու, այլ՝ Տավուշ գավառում:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղևոնդ 1856, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 105 էջ:

Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, Բագու, տպարան Արօր, 208 էջ:

Գևորգյան Տ. 2013, Հայոց Արևելից կողմերը ըստ «Աշխարհացոյց»-ի, թեկնածուական ատենախոսություն, Երևան, անտիպ, 157 էջ:

Եղիազարյան Ա. 2010, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, ԵՊՀ հրատ. 186 էջ:

Եղիշէի 1957, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղրատու-թեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 224 էջ:

Երեմյան Ա.Տ. 1969, Էրեբունի-Երևանը միջազգային առևտրի մայրուղիների վրա, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, Երևան, էջ 16–25:

Կարապետյան Ա. 2004, Հյուսիսային Արցախ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 583 էջ:

Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1989, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 991 էջ:

Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, ԵՊՀ հրատ., 991 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 691 էջ:

Հայաստանի պատմության ատլաս 2004, Ա մաս, հեղինակ Բ.Հ. Հարությունյան, Մակմիլլան Արմենիա ՀՁ ՓԲԸ, 193 էջ:

Հայաստանի ազգային ատլաս 2008, հ. Բ, Տիգրան Մեծ հրատ., 263 էջ:

Հարությունյան Բ. 1978, Խաղխաղ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատ, 719 էջ:

Հարությունյան Բ. 2007, Խաղխաղի ճակատամարտը (450 թ.), Հայկական բանակ, թիվ 4, Երևան, էջ 95–103:

Ղազարայ Փարպեցոյ 1982, Պատմություն Հայոց, Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մախասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 537 էջ:

Խաղխաղի տեղադրության շուրջ

Մովսէս Կաղանկատուացի 1988, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 242 էջ:

Յակոբեան Ա. 2009, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, Մխիթարեան հրատարակչատուն, 476 էջ:

Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ժԳ դար (պատմա-աղբյուրագիտական քննություն), Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., 439 էջ:

Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910., Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ. օր. Ն. Աղանեանցի, 618 էջ:

Айвазян Армен 2016, Армяно-персидская война 450–451 гг. Кампания и сражения, Ереван, изд. «Воскан Ереванци», 516 с.

Арутюнян Б.А. 1979, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Егише, Кавказ и Византия, I, Ереван, с. 19–35.

Еремян С.Т. 1939, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Табула Pantingerian, Вестник древней истории, № 1, Москва, с. 79–97.

Еремян С.Т. 1951, Народно-освободительная война армян против персов в 451–450 гг. (К 1500-летию годовщины), Вестник древней истории, № 4, Москва, с. 41–60.

Картлис Цховреба 2008, История Грузии, Тбилиси, изд. «Артануджи», 454 с.

Мамедова Ф. 2005, Кавказская Албания и албаны, Баку, Центр исследований Кавказской Албании, 800 с.

Меликишвили Г.А. 1960, Урартские клинообразные надписи, Москва, изд. АН СССР, 504 с.

Хачатрян В.Н. 1991, Вопросы военного искусства в книге Егише «О Вардане и войне армянской», Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, Երևան, էջ 126–139:

Saint-Martin M.J. 1818 Memoirres historiques de L'armenie, t. I, «De L'imprimerie royale», Paris, 450 էջ:

О ЛОКАЛИЗАЦИИ ХАЛХАЛА

ШАХНАЗАРЯН А.

Резюме

Ключевые слова: Халхал, Лопнас, Ахум, Агстев, Тавуш, Кура, Гардман.

В окрестностях города Халхал в 450 г. произошло сражение между армянскими и персидскими войсками. Определяемый этим сражением воп-

Շահնազարյան Ա.

рос локализации Халхала оставался в эпицентре внимания исследователей. Часть исследователей, идентифицируя реку Лопнас (у берегов которой произошло вышеназванное сражение) с рекой Дзегам, локализовывали Халхал в окрестностях этой реки. Ряд авторов, отождествляя Лопнас с рекой Агстев, локализовывали Халхал на месте г. Казах, расположенного на берегу р. Агстев, либо в ее окрестностях.

Новые исследования явствуют о том, что правы те исследователи, которые, идентифицируя р. Лопнас с р. Ахум, локализуют Халхал на берегу р. Ахум.

ON THE TOPOGRAPHY OF KHAGHKAGH

SHAHNAZARYAN A.

Summary

Key words: Khaghkagh, Lopnas, Aghue, Aghstev, Tavush, Kur, Gardman.

In 450 a battle took place between the Armenian and Persian armies in the vicinity of Khaghkagh city. It was due to this that the process of locating **Khaghkagh attracted the researchers' attention. Some of them identifying the river Lopnas (on the bank of which the battle took place) with the river Dzegam have located Khaghkagh in the vicinity of that river. While other researchers have identified the river Lopnas with Aghstev, situating Khaghkagh in the place of city Ghazakh (situated on the bank of that river) or in the surrounding area. Researchers have carried out a novel study, which identifies the river Lopnas with river Hakhum, thus introducing an accurate location of Khaghkagh.**

LILIT HOVHANNISYAN*
PhD in History, Associate Professor
Institute of History NAS RA
lilithovannisian@yahoo.com

THE USA POLICY ON THE ARMENIAN QUESTION FROM **THE TREATY OF SÈVRES TO W. WILSON'S ARBITRAL** AWARD

Key words: Major Allies, Armenian Question, Independent and United Armenia, Treaty of Sèvres, Woodrow Wilson, Arbitral Award, delimitation.

Introduction

On August 10, 1920, the Sèvres Peace Treaty was signed between the victorious Allied Powers¹ and the Ottoman Empire defeated in World War I. Thus, the summary of the results of the war and the formation of a new, Versailles system of international relations² completed by Paris International Peace Conference, show that the Sèvres Treaty is most complete and progressive of the

* Հոդվածը ներկայացվել է 25.05.21, գրախոսվել է 14.07.21, ընդունվել է փախագրության 02.08.21:

¹ The Allied Powers were divided into two groups: the Major Allied Powers and the Allied Powers. The Major Allied Powers were the British Empire, the United States, France, Italy, Japan and the Allied Powers were Portugal, Belgium, Greece, Poland, Romania, the Serbo-Croatian-Slovenian State, Czechoslovakia, Armenia and Hejaz (see **Կիրակոսյան** 1972, 676).

² The Versailles system, as a set of treaties regulating the new legal relations between the victorious and defeated states of the war, was formed as a result of Paris International Peace Conference. It consisted of the peace treaties signed by the Allied Powers with Germany (Treaty of Versailles, June 28, 1919), Austria (the Treaty of Saint-Germain, September 10, 1919), Bulgaria (the Treaty of Ney, November 27, 1919), Hungary (the Treaty of Trianon, June 4, 1920), Ottoman Empire (the Treaty of Sèvres, 10 August, 1920).

The Versailles system was completed and renamed the Versailles-Washington as a result of Washington Conference, 1921-1922, during which the nine maritime powers (the USA, the British Empire, Belgium, Italy, Netherlands, Japan, China, Portugal and France) signed the “Agreement of Four” on the Pacific Islands on December 13, 1921, the “Agreement of Five” on the limitation of naval armaments and the agreement on their “open doors’ ” policy in China on February 6, 1922 (see **Громыко** 1965, 161-164, 213-214, 244, 246-248).

five treaties, which are a part of the aforesaid system, because the full legal toolkit used in the other four peace treaties in the sense of defining the responsibility for war crimes, is taken into account in it³.

The Solution of the Armenian Question According to the Sèvres Treaty and its International Legal Significance

The articles directly and indirectly related to Armenia and the Armenian people in the Sèvres Treaty can be viewed in the following three interrelated aspects:

1. **Armenia's independence** as a new way of fulfilling the international legal obligation of the Great Powers to ensure the physical security of the Armenian people in their Homeland,
2. the financial liability of the Turkish State and the criminal liability of its officials for the alienation of the property of the Armenian population of the Ottoman Empire through committing a genocide,
3. the confirmation of the right of the Armenian people to return to their Homeland.

The Sèvres Treaty confirmed the Turkish State's political responsibility for the Armenian Genocide by secession of some Armenian Vilayets from Turkey (articles 88-91)⁴. Thus, the problem was removed from the sphere of Armenian-Turkish bilateral relations initiated by the Batumi Treaty of June 4, 1918, by transferring it to the international political dimension. Moreover, the Ottoman Empire had to accept the rights of the Armenian State to a larger territory than the territory of Armenia recognized by the Batumi Treaty.

The attitude of the Great Powers to secession of Western Armenia from the Ottoman Empire and recognition of its right to independence had gradually

³ Note, that the fixing of articles on the responsibility for war crimes and imposing sanctions not only in the Sèvres Treaty, but also in the Treaties of Versailles, Saint-Germain, Ney and Trianon that preceded it, was conditioned by the activity of the Commission upon the determination of responsibility and the punishments for unleashing the war, formed on January 25, 1919, at Paris Conference. The Commission consisted of 15 prominent international lawyers representing different countries. The crimes violating the Hague Convention and the extermination of an entire Armenian nation as an individual ethnic group in 1915-1916, were emphasized by the Commission among the crimes committed by the Ottoman Empire during World War I. On this occasion on March 14, 1919, the Greek delegation presented the Armenian note to the Commission through its representative Nicholas Politis (see **Երպերոս** 2005, 256-260).

⁴ See **Կիրակոսյան** 1972, 676.

Kostan Zarian (1885–1969), another famous Armenian writer, lived between 1911 and 1912 in Venice, 1915–1916 in Rome, and 1916–1921 in Florence. He told the recently deceased philologist Armen Ter-Stepanyan that he was personally acquainted with Duse, who had disclosed her Armenian extraction to him at a

²⁷ «Հայրենիք», 28.06.1968.

²⁸ Մէնէվիշեան 1890, 49–50:

²⁹ Պետրոսեան 1972, 10:

³⁰ «Աշխարհ», 22.06.1986:

Venetian restaurant³¹. In such a case, Zarian could be another potential candidate, along with Avetik Isahakian, to identify the “*prominent Armenian figure*” who reported to the Italian press on Duse’s Armenian origin after her death.

According to Zarian’s middle son Armen (1914–1994), a noted architect, his sister Nevarte Zarian-Cimara (1917–2005), later a famous sculptress in Italy, was born on August 6, 1917, in “Eleonora Duse’s home” in Florence³². We have two letters addressed by the writer to his French Armenian colleague Archag Tchobanian from the address Villa della Robbia 54 or Via Robbia 54 respectively on June 28 and November 29, 1917³³. Therefore, Nevarte Zarian was born in that address, where the Zarians lived until mid-1918 at least³⁴.

Eleonora Duse corresponded extensively with her England-based daughter Henriette Marchetti-Duse, who kept copies of many of those letters. Via Robbia 54 appears as address in two letters written by the actress in July 1911 and January 1915³⁵. She returned in January 1917 from Rome to Florence, living until April first on Via Lorenzo il Magnifico 38 and then at Hotel Italie³⁶. After being on the road (Rome-Viareggio-Milan-Viareggio) in April-May 1917, she went back to Florence for two days in June 1917, again on Via Robbia 54, and then returned to Milan³⁷. She was again on the road (Milan-Bergamo-Udine-Milan) between June and September, and spent two days to Florence, writing on October 2 from Via della Robbia 54 before departing to Milan³⁸. Her absence from the city was shorter this time. She returned on October 24 and remained in Florence for two months until December 24³⁹. **Duse’s and, indeed, Zarian’s full address, Via Luca della Robbia 54**, bears the name of fifteenth century sculptor Luca della Robbia (1400–1482). The street should not be confused with another street called Via dei della Robbia, linked to the della Robbia family in general.

³¹ Armen Ter-Stepanyan, personal communication to Artsvi Bakhchinyan, Yerevan, May 2007.

³² See «Գրական թերթ», 8.02.1991:

³³ **Մատթեոսեան** 2007, 378, 380.

³⁴ See Zarian’s letters to Tchobanian, February 8 and May 11, 1918 (**Մատթեոսեան** 2007, 382, 384).

³⁵ Duse 2010, 17, 35.

³⁶ Duse 2010, 150, 158.

³⁷ Duse 2010, 199–20.

³⁸ Duse 2010, 215.

³⁹ Duse 2010, 219–237.

The details about the movements of Eleonora Duse in 1917 allows making two important inferences

a) **Duse was not in Florence at the time of Nevarte Zarian's birth (August 1917).**

b) She wrote from Via della Robbia 54 in 1911 and 1915, from other addresses in January-April 1917, and returned to the old address in June and October 1917, perhaps also later on. Therefore, this was not a stable residence.

This conclusion is fully supported by Maria Ida Biggi, publisher of the **actress's letters, who has written, in reference to Duse's wandering life during World War I, that she lived in Caterina Consigli's pension on Via della Robbia 54, while her apartment was rented or subletted⁴⁰.**

Armen Zarian was not totally wrong, indeed. Their family lived in the same **place where the actress did, but that was not "Duse's home."** Otherwise, she would have made any minimal reference to her guests in the correspondence with her daughter. Like Duse, they rented some quarters in the same pension. This is all we know about their relationship.

Literary scholar Artsrun Avagyan has written that **Kostan Zarian's family "lived for a short while in the residence of famous actress Eleonora Duse, who the writer had gotten acquainted with in Venice, enjoyed the pleasure of forbidden and dangerous love, and had days of ecstasy"⁴¹.** This claim combines Armen Zarian's **passing** reference with an inaccurate identification of Eleonora Duse and a young woman of aristocratic origins named Eleonora, with whom Zarian had a brief relationship in Venice around 1911–1912. She appears briefly in his memoir *West*, published serially for the first time in the monthly *Hairenik* of Boston in 1928–1929. The description of the initial encounter of Zarian with Eleonora is key to clarify the issue and avoid future misunderstandings:

"I had met her for the first time in the Benedetto Marcello Hall during a symphonic concert. My friends pointed at her, who carried the name of a noble family, who despite her advanced age, was still wonderfully beautiful and the subject of conversation in all of Europe due to her royal links. Eleonora was sitting beside her, with the natural arrogance that characterizes families, bearing a

⁴⁰ Duse 2010, XXI.

⁴¹ Ավագյան 1998, 33:

historical name. At the same time, she had those simple, humble, and forthcoming manners to talk that caused sympathy and attraction.

I was looking at her from a distance. The mother's blue, deep, and devouring eyes scrutinized the faces (...). Eleonora was sitting almost immobile, minding her own business, used to living under her mother's shadow, totally carried away by the music. For me, she was prettier than her mother, because she was spiritually deeper"⁴².

Conclusion

This present article comes to show that:

a) It was not Eleonora, but her unnamed mother “of advanced age” who could have been a potential age match for Duse, who was fifty-three in 1911, but had lost her mother, Angelica Cappeletto, in 1906.

b) Eleonora belonged to a noble family with royal connections, while Duse did not have any connection with nobility.

c) Between 1900 and 1911, Duse did not live in Venice. She had rented a modest villa named La Porziuncola in Settignano, on a hillside located to the northeast of Florence⁴³.

Of course, it is tempting to suggest that Kostan Zarian could have created a fictional episode out of a potential relationship with Eleonora Duse, but for the time being, his connections with the actress should remain within the realm of legend.

BIBLIOGRAPHY

Ավագյան Ա. 1998, Կոստան Զարյան: Կյանքը և գործը, Երևան, ԵՊՀ հրատ., 296 էջ:

Բախչինյան Ա. 2004, Հայերը համաշխարհային կինոյում, Երևան, ԳԱԹ հրատարակչություն, 688 էջ:

Բախչինեան Ա. 2007, Սառա Բեռնարը եւ հայերը / Sarah Bernhardt et les Arméniens, Երևան-Yerevan, ԳԱԹ հրատարակչություն, 46+54 էջ:

Զարեան Կ. 1928, Արեւուտք, «Հայրենիք», Պոսթըն, Դեկտեմբեր:

Զարեան Կ. 1975, Երկեր, Անթրիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

Թէոդիկ 1926, Ամենուն տարեցոյցը, Վենետիկ-Ս. Ղազար, տպ. Մխիթարեան, 640 էջ:

Իսահակյան Վ. 2000, Հայրս, Երևան, Գասպրինտ, 516 էջ:

⁴² **Զարեան** 1928, 32–33. See also idem, 1975, 456.

⁴³ Bordeaux 1925, 137.

- Մատթեոսեան Վ.** 2007, Կոստան Զարեանի եւ Արշակ Զոպանեանի նամակներէն, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէրոյթ, հտ. ԻԷ:
- Մէնէլիշեան Գ.** 1890, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 50 էջ:
- Պետրոսեան Ա.** 1972, Բաց նամակ, «Քուլիս», Իսթանպուլ, 1972, Յուլիսի 15:
- Փափազյան Վ.**, 1979, Երկեր հինգ հատորով, հ. 1, Երևան, «Սովետական գրող», 460 էջ:
- «Աշխարհ», Փարիզ, 1986, յունիսի 22:
- «Արարատ», Պուենոս Այրես, 1944, հոկտեմբեր-նոյեմբեր:
- «Գրական թերթ», Երևան, 1991, փետրվարի 8:
- «Հայրենիք», Պոսթըն, 1924, մայիսի 18, 1951, հոկտեմբերի 5, 1968, յունիսի 28:
- «Պայքար», Ութըրթաուն, 1971, յունիսի 22:
- Папазян В.** 1937, По театрам мира, Ленинград, «Искусство», 391 с.
- Antona-Traversi C. 1926, Eleonora Duse: sua vita, sua gloria, suo martirio, Pisa, Nistri, 483 p.
- Boghossian S. 1987, Iconographie Arménienne, Paris, [S. Boghossian], 525 p.
- Bonneuil M.-E. de 1937, Au pays de Duse, «Revue de deux mondes», Paris, septembre 15.
- Bordeux J. 1925, Eleonora Duse: The Story of Her Life, London, Hutchinson & Co., 308 p.
- Duse 2010. Ma pupa, Henriette. Le lettere di Eleonora Duse alla figlia, a cura di Maria Ida Biggi, Venezia, Marsilio, 359 p.
- Hagop-Krikor 1976, Les Arméniens connus et inconnus, Paris, La pensée universelle, 152 p.
- “Hairenik Weekly,” Boston, 1954, August 8.
- Hermet A., Cogni Ratti di Desio P. 1993, Gli Venezia degli Armeni, Venezia, Mursia, 174 p.
- Morgan J. de 1919, Histoire du peuple arménien depuis les temps les plus reculés de ses annales jusqu'à nos jours, Paris, Berger-Revault, 410 p.
- Rheinhardt E.A. 1931, Eleonora Duse, Verona, A. Mondadori, 322 p.
- Schneider E. 1927, Eleonora Duse, Paris, Bernard Grasset, 268 p.
- Setti D. 1978, La Duse com'era, Milan, Pan, 233 p.
- Totomianz V. 1938, Le rôle des Arméniens dans la civilisation mondiale, Belgrade, Svetlost, 114 p.

ԷԼԵՆՈՐԱ ԴՈՒՋԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

ԲԱԽԶԻՆՅԱՆ Ա., ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Վ.

Ամփոփում

Քանայի բաներ¹ էլեոնորա Դուզե, Վահրամ Փափազյան, հուշագրություն, Տյուզյան ընտանիք, Մխիթարյաններ, Կոստան Զարյան, Ավետիք Իսահակյան:

Հողվածում երեք դրվագով ներկայացված են իտալացի հռչակավոր դերասանուհի Էլեոնորա Դուզեի (1857–1923) հետ կապվող հայկական առնչությունները:

Առաջին դրվագում անգլերեն թարգմանությամբ ներկայացված է հայ մեծանուն դերասան Վահրամ Փափազյանի հուշագրության՝ Դուզեին վերաբերող հատվածը: Հայտնի է, որ 1908–1911 թթ. Փափազյանը թատերական ուսման է հետևել Իտալիայում և կարճ ժամանակ հանդես է եկել Դուզեի թատերախմբում:

Երկրորդ դրվագում ի մի են բերված 1920–1950-ական թթ. իտալական, ֆրանսիական, շվեյցարական, ամերիկյան մամուլում Էլեոնորա Դուզեի՝ հայ ընտանիքից սերված լինելու վերաբերյալ վկայությունները: Այդ մասին առաջին անգամ հիշատակել է ֆրանսիական «Հավաս» գործակալությունը 1924-ին, իսկ նույն թվականին իտալական «Իլ պիկոլո դելա սեռա» թերթը Դուզեին համարել է պոլսահայ Տյուզյան գերդաստանից սերած՝ հիմնվելով անանուն հայ մտավորականի վկայության վրա: 1937-ին ֆրանսիացի լրագրող Մարի-Էդիտ դը Բոննոն եղել է Դուզեի նախնիների ծննդավայրում (Քիոջա) և վկայել, որ տեղում պարզել է դերասանուհու ընտանիքի հայասերունդ լինելը:

Հեղինակները ձեռնպահ են մնում Դուզեի հայկական ծագման վարկածի հարցում, սակայն մտացածին են համարում դերասանուհու՝ Տյուզյաններից սերված լինելու վկայությունը:

Երրորդ դրվագում ճշտվում են իտալացի դերասանուհու և հայ գրող Կոստան Զարյանի փոխհարաբերությունների վերաբերյալ վկայությունները:

ЭЛЕОНОРА ДУЗЕ И АРМЯНЕ

БАХЧИНЯН А., МАТЕОСЯН В.

Резюме

Ключевые слова: Элеонора Дузе, Ваграм Папазян, мемуары, семейство Дюзян, мхитаристы, Костан Зарян, Аветик Исаакян.

В статье представлен вопрос связей известной итальянской актрисы Элеоноры Дузе (1857–1923) с армянами.

В мемуарах выдающегося армянского актера Ваграма Папазяна имеются отрывки, касающиеся Э. Дузе. Известно, что в 1908–1911 гг. В. Папазян учился в Италии и играл в труппе Дузе.

В воспоминаниях В. Папазяна приводятся свидетельства из итальянской, французской, швейцарской и американской прессы 1920–1950-х гг. относительно, якобы, армянского происхождения Элеоноры Дузе. Об этом впервые упомянуло французское агентство «Гавас» в 1924 году. В том же году на страницах итальянской газеты «Ил пикколо дела сера» Дузе была названа потомком константинопольской семьи Дюзян. В 1937 году французская журналистка Мари-Эдит де Бонно, побывав на родине предков Дузе (Киоджа), написала об армянском происхождении актрисы.

Оставляя в стороне вопрос об армянском происхождении актрисы, авторы статьи отвергают домыслы о том, что Э. Дузе является потомком семьи Дюзян.

Что же касается отношений между итальянской актрисой и армянским писателем Костаном Заряном, то авторы опровергают слухи об их любовной связи и ложной информации о том, что в 1917 году семья Зарянов проживала в доме Э. Дузе.

ANI FISHENKJIAN*
PhD in History
Institute of History NAS
fishenkjianani@hotmail.com

THE SYRIAN-**ARMENIANS’ ASSISTANCE** TO THE IRAQI- ARMENIANS SHELTERED IN SYRIA AS A RESULT OF THE 2003 IRAQ WAR

Key words: Syria, the Armenian Diocese of Perio, the Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees, the union of the Orthodox churches, “Barnabas” humanitarian fund, Syrian Armenian Red Cross, Near East Council of Churches.

Introduction

The Iraqi-Armenian community is one of the prosperous and traditional communities of the Middle East. The community life was formed by the refugees who survived the Armenian Genocide¹. According to the existing statistics up until 2003 the number of Iraqi-Armenians made 20000 people² i.e. 250 families lived in Basra and Mosul, 140 families in Zakho³, 110 families resided in Kirkuk while 60 families in Alzruk⁴.

According to other sources, the number of Iraqi-Armenians approximated 22000–25000⁵ of whom 15000–17000 resided in Baghdad, while the rest lived in

* Հոդվածը ներկայացվել է 09.06.21, գրախոսվել է 11.06.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

¹ Հայոց պատմություն, հ. Գ., գիրք երկրորդ, 332:

² http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=3827

³ In V. Minasian's opinion, according to the 2012 statistics there were 127 families in Zakho. See <http://asbarez.com/arm/146717/>, Նոյեմբեր 16, 2012, Տոքթ. Մինասեան Վեհունի, «Յատուկ ներդիր նուիրում իրաքահայ գաղութի պատմութեան».

⁴ «Յառաջ», 2004, Հոկտեմբեր 1:

⁵ <http://asbarez.com/arm/119900/>, «Իրաքի մէջ ապրող հայերու թիւը գրեթէ կիսում է», 10 Յունուար 2012: Տե՛ս http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5038:

Basra, Mosul, Kirkuk and in the northern bordering city of Zakho⁶. Before the 2003 war 21 Armenian families had settled in the city of Duhok⁷.

After Iraq's conquest by the Allied forces in 2003, the country descended into lawlessness as a result, not only the local community but also Armenian community suffered. The existing political, economic and social crises along with total absence of security forced the Iraqi-Armenians to leave the country, settling in the USA, Europe, Armenia, Middle East specifically in the Lebanon, Jordan and Syria⁸. The head of the Iraqi-Armenian eparchy, Archbishop Avag Asaturean states: **"In the aftermath of the 2003 War, Iraq experienced emigration on all levels i.e. especially outflux of brain was noticeable. Iraqi-Armenians as citizens of Iraq were forced to live in the same conditions, experiencing the horrors of insecurity, terrorism and disentanglement of the country's infrastructure. These factors drove the Iraqi-Armenians to migrate to Syria, Jordan and Western countries."**⁹

According to the official data of the Syrian government, in 2003–2009 about 1200000 Iraqi refugees found shelter in Syria¹⁰. Not only the Syrian-Armenian community but also the Syrian government willingly admitted the Iraqi refugees to schools and hospitals, providing them with free medicine and treatment.

In 2003-2009 the number of Iraqi-Armenians settled in Armenia made up about 1000 Armenians. Nevertheless, according to the 2009 data, only 600 Iraqi-Armenians still live in their homeland, the rest having migrated to foreign

⁶ Փաշայան Արաքս, Իրաքահայ համայնքը գոյապահպանման խնդրի առաջ, «Գլոբուս», Ազգային անվտանգություն, N6 (16), 2010, էջ 36: Տե՛ս նաեւ http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5038:

⁷ <http://asbarez.com/arm/146717/>, Նոյեմբեր 16, 2012, Տոքթ. Վեհունի Մինասեան, «Յատուկ ներդիր նուիրում իրաքահայ գաղութի պատմութեան»:

⁸ Իրաքահայ համայնքը 1915-1990 թվականներին (ըստ արխիվային փաստաթղթերի), 2018, 4:

⁹ <http://ara-ashjian.blogspot.com/2008/10/blog-post.html>. Հարցազրոյց Իրաքահայ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աազ Արք. Ասատուրեանի հետ, 7 Հոկտեմբեր 2008.

¹⁰ <https://almadapaper.net/view.php?cat=25399>. However, according to the data introduced by the United Nations High Commissioner for refugees, the number of the Iraqi refugees was about 2600000. This was accounted for by the fact that the majority of the refugees were not registered. See also <https://almadapaper.net/view.php?cat=25399>.

countries¹¹. According to the 2015 data, 4000 Iraqi-Armenians settled in Canada too¹².

According to the data of January 10, 2012 introduced by Reverend. Masis **Shaninian pastor of the Armenian church in Duhok** “15000-16000 Armenians still live in Iraq.¹³” **Some of them have settled in Syria**, others consider moving to Armenia, but the difficulties of finding accommodation and job deter them.¹⁴”

According to the data of the Ministry of Diaspora of RA, the number of Iraqi-Armenians having moved to Armenia also constitutes 600–700 Armenians¹⁵.

Syrian-Armenians’ Assistance to their Iraqi-Armenian Compatriots Sheltered in Syria as a Result of Iraq War

In 2003 the Iraqi-Armenian refugees started to flood into Aleppo, Damascus, Qamishli, and other Syrian regions¹⁶. In 2005 thousands of Iraqi refugees, including the Iraqi-Armenians found shelter in Syria¹⁷. **“Along with the Iraqis** the Iraqi-Armenians found shelter on the safe Syrian soil.¹⁸ At the beginning the community leaders and the Middle East Council of Churches provided humanitarian aid (educational, charity). **“However**, all the aid was dependent on the circumstances and thus, insufficient¹⁹.” **Subsequently driven** by the necessity to help their compatriots in a more organized way, each community formed commissions responsible for providing refugee aid.

The National Authority and the Armenian Diocese of Perio under the auspice of Bishop (subsequently Archbishop) Shahan Sarkisian in cooperation with the Aleppo-Armenian charity and educational institutions provided aid to the Iraqi-Armenians. Nonetheless, the charity provided could not be sufficient to help the refugees in need. Consequently, the head of the Armenian Diocese of Perio and

¹¹ «Գանձասար», 2013, Փետրուար Գ.:

¹² <http://ragmamoul.net/hy/diaspora-news/2015/09/23>:

¹³ <http://asbarez.com/arm/119900/>, «Իրաքի մէջ ապրող հայերու թիւը գրեթէ կիսուած է»:

¹⁴ «Յառաջ», 2004, Հոկտեմբեր 1:

¹⁵ <http://asbarez.com/arm/119900/>, ibid.

¹⁶ «Գանձասար», 2012, Մայիս Դ.:

¹⁷ Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ /յետայսու՝ ԲՀԹ ԱԱԱ/, Իրաքահայ գաղթականներու խնամատարութեան 25. Օգոստոս. 2009 թուականի նամակը ուղղուած Բերիոյ հայոց թեմի Առաջնորդ Տ. Շահան Ս. եպս. Սարգիսեանին: Տե՛ս նաեւ «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

¹⁸ ԲՀԹ ԱԱԱ, ibid.

¹⁹ «Գանձասար», 2012, Մայիս Դ.:

National Authority decided to found the Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees. The Committee consisted of Reverend Datev Mikayelian (senior priest at the Perio Diocese) and George Tufenkjian²⁰ and Iraqi-Armenian representatives from National, Administrative, Religious and Political Councils at the Diocese of Perio as well as Reverend Vazken Azizian and Parsegh Parseghian²¹. The Iraqi-Armenian youth joined the committee to help make the list of the Iraqi-Armenians, who had settled in Aleppo. Their number approximately constituted 300²² families. The committee contacted with the responsible bodies in Jazira and Latakia, recording the names and the data²³ of the Iraqi-Armenian families who had found shelter in those regions.

In 2006 the activities aimed at providing aid to the Iraqi-Armenian families sheltered in Syria acquired a larger scale. The Diocese and the Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees provided a friendly support in the form of medication, financial, educational and psychological aid to the **Iraqi-Armenians, settled in Aleppo and other regions**. “Each month supplies, medical equipment, household appliances and other necessary items were sent to the Iraqi-Armenian refugees²⁴”. According to the head of the central administrative body of the Iraqi-Armenian community Baruyr Hagopian, from 2003 up to the beginning of 2007 the number of **Iraqi-Armenian refugees didn't surpass 3000**. “**Not more than 1000 (the more accurate number will be 750) Iraqi-Armenians** have settled in Armenia. The number of Iraqi-Armenians, having settled in Syria (Aleppo, Damascus) is more considerable (1000–1500)²⁵”.

The charity, the medical centre at the Syrian-Armenian Red Cross (head quartered in Aleppo) offered medical assistance to the Iraqi-Armenians in need of

²⁰ «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

²¹ The board of the committee changed later, consisting of the following members: Rev. Datev (senior priest at the Perio Diocese) Mikayelian (chairman), George Tufenkjian (city council), Raffi Garabedian, Vache Haroutionian, Boghos Gedigian, Vartan Changulian, Parsegh Parseghian all of whom came from Iraq. ԲՀԹ ԱԱԱ, «Իրաքահայ գաղթականներու ընդհանուր վիճակի տեղեկագիր», անթուակիր:

²² «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

²³ ԲՀԹ ԱԱԱ, իրաքահայ գաղթականներու խնամատարական յանձնախումբի 25 Օգոստոս 2009 թուակիր նամակը:

²⁴ «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

²⁵ http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=3827. «Իրաքահայ հաճայնքը՝ մարտահրավերներին ընդառաջ:

help: "...financial aid was provided to those who need to take expensive medications or undergo constant medical check-ups²⁶". The Trustee Committee of the center offered food and furniture, as well as jobs to the unemployed²⁷.

National and private Armenian schools and colleges admitted the Iraqi-Armenian children by a special decree. As of 2008 110 Iraqi-Armenian students continued their education at the Armenian colleges of Aleppo. The Iraqi-Armenian students received scholarships by World Orthodox Council of Churches²⁸ in which Armenian Church had membership²⁹. The regional board of the Syrian-Armenian Red Cross granted aid to a large number of underprivileged Iraqi-Armenian students, studying at Syrian colleges, nursery schools, elementary schools and Karen Jeppe college not only in the form of scholarships, but also school uniforms stationery and so on³⁰.

In May, 2007 the Iraqi-Armenian priest Reverend Vazken Azizian left³¹.

In October, 2008 the Iraqi-Armenian Ladies' Charity Institution was formed. The institution aided by the Refugee Trustee Committee on weekly basis³² offered free meals to the people present at the gatherings. The Trustee Committee visited the needy families on various occasions, "trying to offer them help"³³. The Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees along with the Iraqi-Armenian Ladies' Charity Institution organized monthly supplies distribution provided by the English humanitarian foundation "Barnabas"³⁴. According to the lists of the Committee, from the beginning of the war up to August 2009 about 200 Iraqi-Armenian families (about 550 people)³⁵ settled in Aleppo. While as of October

²⁶ Սուրիահայ Օգնութեան Իսաչի Շրջանային Վարչութեան արխիւ /յետայսու՝ ՍՕԻ ՇՎԱ/, Տեղեկագիր՝ «Իրաքահայերու օժանդակութիւն», թերթ 1:

²⁷ ՍՕԻ ՇՎԱ, ibid.

²⁸ ԲՀԹ ԱԱԱ, Տեղեկագիր «Իրաքահայ գաղթականներու ընդհանուր վիճակի մասին», անթուակիր:

²⁹ «Գանձասար», 2011, Յունուար Ա.: Տե՛ս նաեւ ԲՀԹ ԱԱԱ, 4 Օգոստոս 2009 թուակիր նամակը:

³⁰ ՍՕԻ ՇՎԱ, ibid.

³¹ ԲՀԹ ԱԱԱ, իրաքահայ գաղթականներու խնամատարական յանձնախումբի 25 Օգոստոս 2009 թուակիր նամակը:

³² The Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees had weekly meeting with the Iraqi-Armenian families, seeing them every Wednesday.

³³ ԲՀԹ ԱԱԱ, 4 Օգոստոս 2009 թուակիր նամակը:

³⁴ ԲՀԹ ԱԱԱ, ibid.

³⁵ ԲՀԹ ԱԱԱ, ibid.

2009 there were 180 families (about 500 individuals)³⁶. According to the data of 2010, the number of refugees made up 150 families (about 400 people³⁷). According to the “**Kantsasar**” weekly³⁸ there were 140 Iraqi-Armenian families in Aleppo approximately, constituting 400 people. These families lived in straitened circumstances. The Trustee Committee of the Refugees continued its activities of humanitarian aid, providing the Iraqi-Armenians with food supplies³⁹ on monthly basis.

But for the Iraqi-Armenian refugees, the chaldean community also settled in **Aleppo**. “**After the** Chaldean the Iraqi-Armenians make up the second largest refugee community, having settled in Aleppo.⁴⁰”

In 2009–2010 120 students continued their education at Armenian colleges of Aleppo and neighboring regions. The Council of Orthodox Churches⁴¹ again granted scholarships, while from 2005 until 2010 only 75 students⁴² studied.

The Iraqi-Armenian refugees started going back to normal life, however they were sure to encounter difficulties, especially due to the insufficient command of the Armenian language. The majority of the Iraqi-Armenian children did not know the Armenian language well enough. Driven by the necessity, a special day was assigned to teach the Iraqi-Armenian children the Armenian language with a special program⁴³.

It should be noted that all the Iraqi-Armenian refugees settled in Aleppo turned to the UN Refugee Agency, requesting to get a permission to move to another country. According to the archival data, from 2005 up until 2010 about

³⁶ ԲՀԹ ԱԱԱ, իրաքահայ գաղթականներու խնամատարական յանձնախումբի 22 Հոկտեմբեր 2009 թուակիր նամակը:

³⁷ ԲՀԹ ԱԱԱ, 8 Նոյեմբեր 2010 թուակիր նամակը:

³⁸ «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

³⁹ ԲՀԹ ԱԱԱ, 8 Նոյեմբեր 2009 թուակիր նամակը:

⁴⁰ ԲՀԹ ԱԱԱ, 25 Օգոստոս 2009 թուակիր նամակը:

⁴¹ ԲՀԹ ԱԱԱ, 22 Հոկտեմբեր 2009 թուակիր նամակը:

⁴² «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

⁴³ Each Saturday the board of the administrators of Karen Jeppe national college together with several dedicated and patriotic teachers taught one-hour classes of the Armenian language to the Iraqi-Armenian students of different age groups. The classes were designed to improve their knowledge of Armenian. The author of the present article also participated in those classes.

1000 Iraqi-Armenian families migrated to Aleppo, “who moved to Western countries through the UN mediation, being given the refugee status⁴⁴”.

After 2003 many Iraqi-Armenians turned to Khachig Djanoian – the head of the Iraqi-Armenian Family Union in Los Angeles, asking him to give them an opportunity to move to the USA from 2005 up until 2007 the Iraqi-Armenian Family Union of Los Angeles succeeded in moving 135 Armenians from Iraq to Armenia through Aleppo⁴⁵. “With the financial aid of the Iraqi-Armenian Family Union the Iraqi-Armenians were taken to Aleppo, where in a week’s time they got an entrance visa to Armenia and soon landed in Yerevan⁴⁶”.

The number of Iraqi-Armenians having left Aleppo was covered by new refugees who reached Aleppo in 2011. The number of registered students in the academic year 2011–2012 was 80, while at the end of the year this figure was reduced to 55⁴⁷. This testifies to the fact that many Iraqi-Armenian families left Syria.

In 2011–2012 the number of the Iraqi-Armenian refugees in Aleppo made up about 100 families, while the number of the Iraqi-Armenians studying at Armenian colleges of Aleppo made 35 students⁴⁸.

As a result of the raging war in Syria in 2011 and especially after 2012 when the horrors of the war reached Aleppo, the number of the Iraqi-Armenians gradually decreased.

In 2016 all the Iraqi-Armenians sheltered in Aleppo already migrated⁴⁹.

The Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees of Aleppo existed up to 2016⁵⁰. After 2016 the Committee was renamed Relief Committee⁵¹ functioning under the auspices of the Armenian Apostolic Church, this time helping the needy Aleppo-Armenians.

⁴⁴ «Գանձասար», 2011, Յունուար Ա.:

⁴⁵ «Նոր Օր», 2017, Օգոստոս 10:

⁴⁶ <http://archive3.ankakh.com/article/75061/nyergaghthi-myets-ashkhatanqe-pvoqrgagha-parnyerye-yev-ashkhatanqnyerye-krna-tsnund-arrnyel-yev-ptughnyer-tal>

⁴⁷ ԲՀԹ ԱԱԱ, 13 Յունիս 2011 թուականի նամակը:

⁴⁸ ԲՀԹ ԱԱԱ, 20 Դեկտեմբեր 2011 թուականի նամակ:

⁴⁹ We discussed the issue with Reverend Datev Mikayelian (senior priest at the Perio Diocese). The meeting took place on January 22, 2019 at the Church of Holy Mother in Aleppo.

⁵⁰ Ibid.

⁵¹ Ibid.

Conclusion

After Iraq's conquest by the Allied forces in 2003, the country experienced instability and insecurity which made both local and Christian communities face a new imperative. In order to avoid horrors of terrorism and devastated, shattered infrastructures some of the community members settled in the north of the country, while others preferred to migrate to Syria, Jordan and Western countries.

Christian community leaders, the Council of Churches in the Middle East and the Syrian state provided humanitarian aid to the Iraqis and Iraqi-Armenians. At the Armenian diocese of Perio the Trustee Committee of the Iraqi-Armenian Refugees was formed by the representatives of the Aleppo-Armenian and Iraqi-Armenian communities. The main objective of the Committee consisted in assisting the refugees in their medical, educational and economic struggles.

BIBLIOGRAPHY

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ, Իրաքահայ գաղթականներու խնամատարութեան յանձնախումբի նամակները ուղղուած Բերիոյ հայոց թեմի Առաջնորդ Տ. Շահան Ա. եպս. Սարգիսեանին: 4 Օգոստոս, 2009: 25 Օգոստոս, 2009: 22 Հոկտեմբեր, 2009: 8 Նոյեմբեր, 2010: 13 Յունիս, 2011: 20 Դեկտեմբեր, 2011:

«Գանձասար», Հալէպ, 2011, Յունուար Ա.:

«Գանձասար», Հալէպ, 2012, Մայիս Դ.:

«Գանձասար», Հալէպ, 2013, Փետրուար Գ.:

Իրաքահայ համայնքը 1915-1990 թվականներին /ըստ արխիվային փաստաթղթերի/, 2018, Երևան, Հայաստանի Ազգային Արխիվ, 420 էջ:

Հայոց պատմություն, 2015, հ. Գ., գիրք երկրորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 329–332:

«Յառաջ», Փարիզ, 2004, Հոկտեմբեր 1:

«Նոր Օր», Լոս Անճելըս, 2017, Օգոստոս 10:

Սորիահայ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան արխիւ, Տեղեկագիր՝ «Իրաքահայերու օժանդակութիւն», 1 թերթ:

Փաշայան Ա. 2010, Իրաքահայ համայնքը գոյապահպանման խնդրի առաջ, «Գլորոս», Ազգային անվտանգություն, N6 (16), Երևան, էջ 36: Տե՛ս նաեւ http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5038:

<http://archive3.ankakh.com/article/75061/nyergaghthi-myets-ashkhatanqe-pvoqr-gaghaparnyerye-yev-ashkhatanqnyerye-krna-tsnund-arrnyel-yev-ptughnyer-tal>

<http://asbarez.com/arm/119900/>, «Իրաքի մէջ ապրող հայերու թիւը գրեթէ կիսուած է», 10 Յունուար 2012:

Տղթթ. Վեհունի Մինասեան 2012, «Յատուկ ներդիր նուիրում իրաքահայ գաղութի պատմութեան», նոյեմբեր 16, <http://asbarez.com/arm/146717/>,
http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5038:
<http://ara-ashjian.blogspot.com/2008/10/blog-post.html>. Հարցագրոյց իրաքահայ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աագ Արք. Ասատուրեանի հետ, 7 Հոկտեմբեր 2008.
<https://almadapaper.net/view.php?cat=25399>:
<http://ragmamoul.net/hy/diaspora-news/2015/09/23>:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ 2003 Թ.-Ի ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵԱՆՔՈՎ ՍՈՒՐԻԱ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԻՐԱՔԱՀԱՅԵՐՈՒՆ

ՖԻՇԵՆԿՅԱՆ Ա.

Ամփոփում

Քանայի քաներ¹ Սուրիա, Բերիոյ հայոց թեմ, Իրաքահայ Գաղթականներու Խնամատարական յանձնախումբ, Ուղղափառ /Օրթոտոքս/ եկեղեցիներու միութիւն, «Պարնապաս» Մարդասիրական հիմնադրամ, Սուրիահայ Օգնութեան Խաչ, Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդ:

2003 թ.-ին միջպետական զօրքերու կողմէ Իրաքի գրաւումով երկիրէն ներս տիրեց անկայունութիւնն ու անապահովութիւնը, որոնք նոր հրամայականի առջեւ պիտի կանգնեցնէր ոչ միայն տեղացին, այլ եւ քրիստոնեայ համայնքները: Ահաբեկչութեան եւ ենթակառոյցներու ահաւոր փճացման արիւնքներէն խուսափելու համար համայնքի զաւակներէն ոմանք բնակութիւն հաստատեցին երկրի հիւսիսը, ոմանք ալ դիմեցին արտագաղթի դէպի Սուրիա, Յորդանան եւ Արեւմուտք:

Սուրիա ապաստանած իրաքցիներուն եւ իրաքահայերուն մարդասիրական օգնութիւն ցուցաբերեցին քրիստոնեայ համայնքապետերը, Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդն ու Սուրիոյ պետութիւնը: Բերիոյ հայոց թեմէն ներս յառաջացաւ **Իրաքահայ Գաղթականներու Խնամատարական Յանձնախումբ**² հալէպահայ ազգայիններու եւ իրաքահայ համայնքի ներկայացուցիչներու նշանակումով, որոնց հիմնական նպատակը եղաւ աջակցիլ եւ կարգաւորել գաղթականներու առողջական, կրթական եւ տնտեսական կարիքները:

ПОДДЕРЖКА СИРИЙСКИМИ АРМЯНАМИ ИРАКСКИХ АРМЯН, НАШЕДШИХ УБЕЖИЩЕ В СИРИИ В РЕЗУЛЬТАТЕ ИРАКСКОЙ ВОЙНЫ 2003 ГОДА

ФИШЕНКЧЯН А.

Резюме

Ключевые слова: Сирия, армянская епархия Берии, Попечительский совет иракских армянских иммигрантов, Союз православных церквей, Гуманитарный фонд Парнапас, Сирийско-армянский крест помощи, Совет церквей Востока.

Оккупация Ирака межгосударственными силами в 2003 году привела к нестабильности, став угрозой для безопасности страны. Последнее выдвинуло ряд жизненно важных задач как перед местными, так и христианскими общинами. Лидеры христианской общины, Совет церквей Ближнего Востока и правительство Сирии оказали гуманитарную помощь иракцам и иракским армянам, нашедшим убежище в Сирии. В армянской епархии Берии был создан Попечительский совет армянских граждан Алеппо и представителей иракской армянской общины, основной целью которого было оказание помощи и удовлетворение медицинских, образовательных и экономических нужд беженцев.

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևանի պետական համալսարան
hovhaykaz@gmail.com

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՀՐՈՒԹՈՎ

Քանալի բառեր՝ գեներալ Բեհրոթով, հայ զորավար, ռուսական բանակ, պատերազմ, հաղթանակ, տարեգրություն, ներդրում:

Ներածություն

Վասիլ Օսիպովիչ Բեհրոթովը (Բարսեղ Հովսեփի Բեհրոթյանը) ծնվել է 1791 թ. Թիֆլիսում՝ Բեհրոթովների նշանավոր ընտանիքում: Պապը՝ Բարսեղ Բեհրոթովը, վրաց թագավոր Հերակլ 2-րդի հետ մասնակցել էր Նադիր-Շահի հնդկական արշավանքներին, վարել էր Թիֆլիսի մելիքի պաշտոնը: Վասիլ Բեհրոթովի հայրը՝ Հովսեփ Բեհրոթովը, վրացական բանակի կազմում տարիներ շարունակ կռվել է պարսիկների դեմ, 1804 թ. մասնակցել է Պավել Ցիցիանովի երևանյան արշավանքին, ստացել է գնդապետի աստիճան և պարգևատրվել Սբ. Աննայի 2-րդ աստիճանի ադամանդակուտ շքանշանով:

Վասիլը երեք եղբայրների մեջ թեպետ կրտսերն էր, սակայն ամենից ուշիմն էր: 1802 թ., երբ Թիֆլիսում բացվեց ազնվականական դպրոց, Վասիլ Բեհրոթովը դարձավ այդ դպրոցի սովորողներից մեկը: Դպրոցն ավարտելուց հետո նրան ուղարկում են Պետերբուրգ՝ զինվորական կրթություն ստանալու, ինչն այդքան գրավում էր երիտասարդ Վասիլին:

1807–1809 թթ. Բեհրոթովը հաջողությամբ ուսանում է Պետերբուրգի կադետական կորպուսում և ավարտելուց հետո ստանում է ենթասպայի աստիճան: Ի դեպ, դպրոցում ավանդույթ է եղել լավագույն սովորողների նկարները փակցնել կորպուսի ընթերցասրահում. ընդամենը տասը ընտրյալների շարքում տեղադրվում է նաև կովկասցու արտաքինով Բեհրոթովի դիմանկարը:

Ռազմական առաջին մկրտությունը և առաջին հաղթանակները:

Վերադառնալով հայրենիք՝ Բեհրոթովը գործուղվում է Խերսոնյան գրե-նադերական գունդ՝ որպես գումարտակի համհարզ: Ռազմական ուսուցիչնե-

* Հոդվածը ներկայացվել է 08.02.21, գրախոսվել է 07.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

րի հարցում Վ.Բեհրուֆովի բախտը մշտապես բերել է: Սկզբում նա նշանավոր գեներալ Տորմասովի համհարզն էր: 1810 թ., երբ դեռ չէր բոլորել Բեհրուֆովի քսանամյակը, նա մասնակցություն է ունենում Ախալցխայի բերդի պաշարմանը, որն էլ դառնում է իր առաջին ռազմական մկրտությունը: 1811 թ. գեներալ Տորմասովին Կովկասում փոխարինելու է գալիս գեներալ-լեյտենանտ մարկիզ Պաուլուչին: Շուտով սկսվում է 1812 թ. հայրենական պատերազմը և Պաուլուչին նշանակվում է ռուսական Առաջին բանակի շտաբի պետ: Վասիլ Բեհրուֆովը որպես վերջինիս համհարզ, մեկնում է գործող բանակ: Այսպիսով, տակավին երիտասարդ Բեհրուֆովին վիճակվում է դառնալ 1812 թ. հայրենական պատերազմի մասնակիցը՝ մարտերով Ռիգայի մատույցներից հասնելով մինչև Մեմել: Ավելին, այդ պատերազմում նա հասցնում է վաստակել իր առաջին լուրջ պարգևը և կոչումները: 1813 թ. սկզբին Բեհրուֆովը պարգևատրվում է Սբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով, տեղափոխվում է լեյբ-գվարդիական Սեմյոնովյան գունդ և ստանում պորուչիկի աստիճան:

Ճիշտ է, համհարզի կարգավիճակն այնքան էլ չէր հրապուրում Բեհրուֆովին. նրա տարերքը ռազմի դաշտն էր, սակայն նշանավոր գեներալների, այն էլ կառավարչապետների համհարզ լինելը լավագույն հնարավորությունն էր տարածաշրջանում խմորվող իրադարձություններին անմիջական մասնակցություն ունենալու համար: 1816 թ. նա արդեն Կովկասի նոր կառավարչապետ, նշանավոր գեներալ Ալեքսեյ Երմոլովի համհարզն էր, որի հետ էլ մասնակցում է հանրահայտ պարսկական դեսպանությանը: Կովկասի կառավարչապետին հատկապես զարմացնում է երիտասարդ զորականի պարսկերենի և հայերենի գերազանց իմացությունը: Բեհրուֆովը վարժ տիրապետում էր նաև ռուսերենին, վրացերենին և թուրքերենին, մասնակիորեն նաև ֆրանսերենին և գերմաներենին: Ի դեպ, Պարսկաստանում նրան շնորհում են Առյուծի և Արևի 2-րդ աստիճանի շքանշան, իսկ վերադարձից հետո ստանում է կապիտանի աստիճան:

1819–1820 թթ. Բեհրուֆովը Երմոլովի հետ միասին մասնակցություն է ունենում Կովկասի լեռնականների դեմ սկսված կռիվներին, վաստակելով քաջ ու հմուտ հրամանատարի համբավ: Երմոլովին այստեղ արդեն հաճելիորեն զարմացրեցին երիտասարդ սպայի ռազմական խորը գիտելիքները և մարտ վարելու նրա արտասովոր ունակությունները: Բեհրուֆովը պարգևատրվում է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով: Այստեղ էլ մարտերից մեկի ժամանակ, Խոզրեկի մոտ կայանում է նրա հանդիպումը իր մեծահամբավ հայրենակցի՝ գեներալ Մադարովի հետ: Սակայն եթե վերջինս

Հովհաննիսյան Հ.

արդեն ճանաչված անուն էր Ռուսաստանում, ապա Բեհբուքովի համար դեռևս նոր էր սկսվելու ռազմական տարեգրությունը, որը պետք է նրան՝ իր հայրենակցի նման, բարձրացներ փառքի աստիճաններով: 1821 թ. Վասիլ Բեհբուքովը տեղափոխվում է լեյբ-գվարդիական Մոսկովյան գունդ, որտեղ էլ ստանում է գնդապետի նոր ուսադիրները: 1821 թ. հուլիսին Բեհբուքովը նշանակվում է Մինգրեթյան գնդի հրամանատար: Չորս տարի անց, 1825 թ. Բեհբուքովը նշանակվում է Իմերեթիայում գործող 22-րդ դիվիզիայի հրամանատար և մարզի կառավարիչ, իսկ 1828 թ. սկզբներին, երբ դեռ նոր էր բոլորելու երեսույթթամյակը, Վ. Բեհբուքովն արժանանում է գեներալ-մայորի աստիճանի:

Ծառայությունը Կովկասում: Ախալցխայի պաշտպանությունը:

1828 թ., երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, գլխավոր հրամանատար Իվան Պասկևիչը Բեհբուքովին հրավիրեց գործող բանակ և նրան վստահեց ջրկատներից մեկի հրամանատարությունը: Բեհբուքովի առաջին ակնառու հաջողությունն այս պատերազմում Ախալցխայի բերդի գրավումն էր: Վերջինս թուրքական կարևորագույն ամրություններից մեկն էր Անդրկովկասում և ուներ բնական ու պաշտպանական հզոր պատնեշներ: Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Քյոսա-Մահմեդ փաշան կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Ավելին, երբ օգոստոսի 12-ին Պասկևիչը հայազգի շտաբ-կապիտան Ղորղանյանի միջոցով փորձեց թուրք փաշային անձնատուր լինելու առաջարկ անել, փաշան պատասխանում է՝ «Մեզ միայն թուրն է բաժանում»¹:

Օգոստոսի 15-ին սկսվում է Ախալցխայի բերդի գլխավոր գրոհը: Գեներալ Բեհբուքովը գտնվում էր առաջին գծում և անձնական օրինակով ոգևորում էր զինվորներին: Բերդը շուտով գրավվում է, նրա հետ միասին նաև Ախալցխան: Այս փայլուն հաղթանակի համար Վ. Բեհբուքովը պարգևատրվում է ադամանդակուռ ոսկյա սրով՝ «Քաջության համար» մակագրությամբ:

Բերդի գրավումից հետո Վ. Բեհբուքովը նշանակվում է Ախալցխայի կառավարիչ: Մի ամբողջ տարի՝ մինչև 1829 թ. օգոստոսի 22-ը, Բեհբուքովը վարում է Ախալցխայի մարզային վարչության պետի պաշտոնը: Թե որքան արդյունավետ է եղել Բեհբուքովի կառավարչությունը Ախալցխայում, այդ մասին իր գրքում պատմում է ռուս պատմաբան Վ.Պոտտոն. «Իշխան Բեհբուքովը, որը դեռ նոր էր ստացել գեներալի ուսադիրներ, հայկական արմատներ ուներ

¹ Ушаков 1836, 319.

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

և գերազանց գիտեր ոչ միայն արևելյան սովորույթները, այլև տեղի ժողովուրդների լեզուն: Կարճ ժամանակում նա կարողացավ այնպիսի վստահություն վայելել բնակիչների շրջանում, որ նույնիսկ Ախալցխայի ըմբոստ ու ռազմատենչ բնակիչները, որոնք անսահմանորեն նվիրված էին թուրքերին, երբեք անկարգությունների չդիմեցին մեր հանդեպ: Անգամ տեղի բեկերը, որոնք նախկինում հայտնի էին իրենց ավազակություններով, մեկ անգամ չէ, որ Բեհրուֆովի մոտ էին գալիս հավատարմության երդումներով և մեծարում էին նրան փաշայի պես: Երկրամասում նրա ժողովրդականությունը օր-օրի աճում էր: Ամեն օր բնակիչները նրա մոտ էին գալիս բազում խնդրանքներով և զարմանում էին, երբ կառավարչի հետ հաղորդակցվում էին առանց թարգմանիչների, որոնց այստեղ չէին սիրում թարգմանչական մեքենայությունների համար»²:

Դրանով չէ, սակայն, որ իր անունը հավերժացրեց հայազգի զորավարն այդ պատերազմում: Ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի տարեգրության մեջ կա փառավոր մի էջ, որը պատկանում է բացառապես Վասիլ Բեհրուֆովին: Դա Ախալցխայի 1829 թ. փետրվարի հերոսական պաշտպանությունն է: Ահմեդ բեյի գլխավորությամբ թուրքական քսան հազարանոց մի զորաբանակ, պատերազմում բեկում մտցնելու նպատակով շարժվում է Ախալցխա: Բեհրուֆովին հրամայված էր ամեն գնով պահել բերդը, թեպետ իր տրամադրության տակ ուներ թուրքականին մի քանի անգամ զիջող ուժեր (ընդամենը երկու գումարտակ): Թուրքերը բոլոր կողմերից պաշարում են բերդը՝ ակնկալելով հեշտությամբ գրավել այն: Բեհրուֆովն այստեղ կարողանում է դրսևորել ոչ միայն դիվանագիտական ունակություններ՝ ամեն անգամ Ահմեդ բեյի սպառնալիքներին արձագանքելով ժամանակ շահելուն միտված պատասխաններով, այլև ցուցաբերում է ռազմավարական բարձր գիտելիքներ, որի շնորհիվ Ախալցխան տասներկու օր շարունակ դիմադրում է թուրքական բանակի հարձակումներին. «Գեներալ-մայոր իշխան Բեհրուֆովն իր անձնական օրինակով և ներկայությամբ ոգևորում էր յուրաքանչյուրին: Տեսնելով նրան պարիսպների վրա՝ զինվորները միահամուռ գերադասում էին զենքը ձեռքներին մեռնել, քան բերդը հանձնել թշնամուն: Այդ ընդհանուր անվեհերությունը փոխադարձաբար քաջալերում էր նաև հրամանատարին, նոր ուժ

² Потто 1889, 112–113.

Հովհաննիսյան Հ.

ու եռանդ էր տալիս նրան»³ - ասվում էր այդ պատերազմի պատմությանը նվիրված ռուսական հրատարակություններից մեկում:

Ախալցխայի պաշարումը շարունակվում է մինչև գնդապետ Բուրցովի ջոկատի ժամանումը, որի լուրը ստանալուն պես, թուրքերը թողնում են պաշարումը և հապճեպ փախչում բերդի մատուցներից: Արդյունքը եղավ մի քանի հարյուրի հասնող թուրք գերիներ, գրավված թնդանոթներ ու ռազմավար և այդ ամենի դիմաց՝ ընդամենը 24 սպանված և 52 վիրավոր: «Ախալցխայի պաշտպանությունը անվիճելիորեն դասվում է ռուսական բանակի ռազմական մեծ սխրանքների թվին,- գրում է Պոտտոն: - Կովկասում շատերն այդ ժամանակ զարմացան, որ իշխան Բեհբուջովը չստացավ իրեն արժանի Գեորգիևյան խաչը, այլ պարգևատրվեց միայն Սբ. Աննայի ժապավենով... Այդ ժամանակից արդեն անցել է վաթսուն տարի, սակայն Կովկասում դեռևս չեն մոռացել Ախալցխայի հերոսական պաշտպանությունը, որը մի նոր փառավոր էջ գրեց շիրվանցիների ռազմական տարեգրության մեջ: Չի մոռացվել նաև իշխան Վասիլ Բեհբուջովի հերոսական անունը, որը հետագայում իրեն հավերժացրեց Բաշ-Քադաքլարի և Քյուրուկդարայի ճակատամարտերում»⁴: Բեհբուջովի հանդեպ իր հիացմունքը չի թաքցնում նաև գլխավոր հրամանատար Իվան Պասկևիչը և իր շնորհակալագիրն է ուղարկում բերդի պաշպաններին. «Անկեղծորեն շնորհապարտ եմ Ձեզ, քաջարի մարտիկներ: Ձեր սխրանքներն արժանի են Ձեզ: Դուք ապացուցեցիք, որ կարող եք հաղթել ռազմի դաշտում, կարող եք գրավել ամրոցներ և պաշտպանել դրանք...»⁵: Ախալցխայի պաշտպանության համար Վ. Բեհբուջովն արժանանում է նաև ոսկյա սրի և Սբ. Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Հմուտ կառավարիչ:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1830 թ. Բեհբուջովը նշանակվում է Հայկական մարզի կառավարիչ: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1838 թ., այնուհետև որոշ ժամանակով թողնում է Կովկասը և նշանակվում լեհական Չամոստիե ամրոցի պարետ: Այստեղ էլ 1843 թ. հոկտեմբերի 10-ին Բեհբուջովը ստանում է գեներալ-լեյտենանտի նոր ուսադիրներ: 1844-ի սկզբներին Բեհբուջովի կարիքը Կովկասում կրկին զգացվում է: Նա վերադառնում է Կովկաս և նշանակվում Դաղստանի զորքերի հրամանատար: Դա

³ Ушаков 1836, 30.

⁴ Ушаков 1836, 137-138.

⁵ Ушаков 1836, 138.

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

Կովկասի լեռնականների դեմ մղվող պատերազմի ամենից եռուն շրջանն էր, որին անմասն չմնաց հայազգի զորապետը: 1845 թ. Բեհրուֆովը պարգևատրվում է Սբ. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանով: 1846 թ. Բեհրուֆովը գրոհով վերցնում է Այմյակի առվը, իսկ երկու օր անց՝ գլխովին ջարդում է Շամիլի ջոկատներից մեկը՝ Կուտիշիխի գյուղի մոտ: Ռազմական այդ հաջողությունների համար Բեհրուֆովը պարգևատրվում է Գեորգիևյան 3-րդ աստիճանի շքանշանով, որին նա վաղուց էր արժանի: Բեհրուֆովի ջոկատն այնուհետև գրավում է Գերգեբի անառիկ առվը, որի համար պարգևատրվում է Սպիտակ Արծիվ շքանշանով:

1847 թ. վերջերին Բեհրուֆովը նշանակվում է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության խորհրդի նախագահ: 1849 թ. Անդրկովկասում կատարած արդյունավետ աշխատանքի համար ռուսական արքունիքը Բեհրուֆովին պարգևատրում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ 1851 թ. նույն շքանշանի ադամանոյա շրջանակով, որը ռուսական պատմության մեջ բացառիկ դեպքերից էր:

Վ. Բեհրուֆովը Ղրիմի պատերազմում

1853 թ. սեպտեմբերի 19-ին Վասիլ Բեհրուֆովը նշանակվում է Կովկասյան կորպուսի և Ալեքսանդրապոլյան ջոկատի հրամանատար: Ականատեսները վկայում են, որ Բեհրուֆովի թեկնածությունն անձամբ առաջադրել է Նիկոլայ Առաջինը: Նույն թվականին սկսված Ղրիմի պատերազմը գեներալ-ադյուտանտ Վ. Բեհրուֆովի կենսագրականում նոր փառավոր էջեր պիտի գրեր:

Բեհրուֆովի տված առաջին նշանավոր մարտը Բաշ-Քադաքլարում էր: Նոյեմբերի 14-ին, իր տրամադրության տակ ունենալով ընդամենը 10 հազար զինվոր, Բեհրուֆովը շարժվում է թուրքական 36-հազարանոց բանակի վրա: Ստանալով այդ լուրը, Ահմեդ փաշան շտապում է Բեհրուֆովին դիմավորել Բաշ-Քադաքլարում, մանավանդ որ տեղեկացված էր վերջինիս զորքի թվաքանակի մասին: Երդվելով, որ բոլորին պիտի ջարդի, նա նույնիսկ հրամայել էր թոկեր պատրաստել՝ գերված զինվորներին և սպաներին սուլթանին որպես նվեր ուղարկելու համար: Սակայն նրա հաշվարկները շոտով ի դերև ելան: Բեհրուֆովը, որն անձամբ էր մշակել մարտի պլանը, ուժերի մի մասն ուղղում է դեպի Օղուզլիի բարձրունքները՝ թուրքերին նահանջի հնարավորությունից զրկելու համար: Ճակատամարտը սկսվում է երկկողմանի կատաղի գրոհներով: Մի պահ ռուսական բանակի դրությունը ծանրանում է. թուրքերն օգտվելով թվական գերակշռությունից, շրջապատման սպառնալիք են

Հովհաննիսյան Հ.

ստեղծում ռուսական բանակի համար: Այդ ծանր պահին, ինչպես վայել է քաջ հրամանատարին, Բեհբոթովը վերցնում է Երևանյան կարաբիներների երկու վաշտ և անձամբ գրոհի է տանում նրանց: Այս ձեռնարկն էլ փաստորեն վճռում է ճակատամարտի ելքը. չդիմանալով Բեհբոթովի սրընթաց գրոհին, նախ՝ տեղի է տալիս թուրքերի աջ թևը, ապա նաև կենտրոնը: Քիչ անց, թուրքական բանակը Ահմեդ փաշայի հետ միասին իր փրկությունը գտնում է համընդհանուր փախուստի մեջ՝ մարտի դաշտում թողնելով 24 հրանոթ, որոշ ճամբարն ու գումակը: Թուրքական զինուժի կորուստը կազմում է 6 հազար սպանված, այն դեպքում, երբ Բեհբոթովը տվել էր ընդամենը 300 զինվորի կորուստ և 900 վիրավոր⁶:

Այս ճակատամարտի մասին ուշագրավ հուշեր է պատմում գեներալ-լեյտենանտ Պավել Ռուդակովը: Հուշերը բավական ծավալուն և ընդարձակ են, ուստի մենք կներկայացնենք այն հատվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են Վասիլ Բեհբոթովին. «Թուրքերը ռազմական զգալի ուժեր կուտակեցին Կարսի ուղղությամբ՝ Ալեքսանդրապոլից 70 վերստ հեռավորության վրա, ավերեցին ու թալանեցին սահմանային մեր մի քանի գյուղեր: Ստանալով այդ մասին տեղեկությունը, իշխան Վորոնցովը շտապ կարգով հրամայեց հավաքել մոտ 14 հազարի հասնող Ալեքսանդրապոլյան ջոկատը՝ գեներալ-լեյտենանտ, Կովկասի ավագ սերնդի վետերան, քաջի ու օրինակելի զորապետի համբավ վայելող իշխան Վ. Բեհբոթովի հրամանատարությամբ... Նոյեմբերի 19-ին իշխանը շարժվեց Բաշ-Քադաքլար... Հապաղել այլևս չէր կարելի. իշխանը հրավիրեց ռազմական խորհուրդ և որոշում կայացրեց անմիջապես հարձակման անցնել թուրքերի դեմ, չնայած թշնամու թվական ահռելի գերազանցությանը: ... Այս սարսափելի ճակատամարտը հիրավի կարող է դասվել ռուսական բանակի նշանավոր ու հերոսական ճակատամարտերի թվին, որի հաղթանակի պատիվն առանց բացառության և հավասարապես պատկանում էր կռվի բոլոր մասնակիցներին՝ հրամանատար Բեհբոթովից սկսած մինչև վերջին զինվորը: Իշխան Բեհբոթովն այստեղ ցույց տվեց, որ տիրապետում է անձնական նախանձելի քաջության, երևում էր մարտի ամենավտանգավոր հատվածներում և ոգևորում էր զորքերին այնտեղ, ուր դրա հարկը կար...»⁷.- գրում է ռուս գեներալը:

⁶ Богданович 1876, 252.

⁷ Русская старина 1883, 526–528.

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

Ռազմագետները բարձր են գնահատել գեներալ Բեհրուֆովի ռազմավարական տաղանդի դրսևորումը այդ ճակատամարտում. «Բաշ-Քադաքլարի ճակատամարտի արդյունքները Անդրկովկասյան երկրամասի համար հսկայական էին... Բեհրուֆովի ջոկատի վերադարձը Ալեքսանդրապոլ՝ հանդիսավոր էր... Քադաքի բնակիչները մեծից փոքր, դրոշակներով և սրբապատկերներով դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին և Արփաչայի առջևի բարձրունքները պատելով, բարձրաձայն բացականչություններով ողջունում էին ջոկատի մուտքը... Հազիվ էր իշխան Բեհրուֆովը անցել կամուրջը, երբ նրան շրջապատեց ժողովրդի հոծ բազմությունը... հավելյով Բեհրուֆովի ձիու ասպանդակներին, համբուրում էին նրա ձեռքերն ու ոտքերը»⁸, - գրում է ռուս ռազմական պատմաբան Մ. Բոգդանովիչը, որն, ի դեպ, Ղրիմի պատերազմի մասին չորս հատորանոց աշխատության հեղինակ է:

Բաշ-Քադաքլարի հաղթական ճակատամարտից հետո շատերն էին սպասում, որ Բեհրուֆովը կգարգացնի հարձակումը Կարսի ուղղությամբ և կպաշարի այն: Սակայն, հակառակ դրան, նա իր զորքերը հետ է քաշում Ալեքսանդրապոլ՝ ձմեռելու համար: Բնականաբար, ռազմակայանում գտնվեցին մարդիկ, որոնք մեղադրեցին Բեհրուֆովին՝ հարձակումը չգարգացնելու և Կարսի բերդը չգրավելու համար: Այդ մարդկանց թվում էր նաև հարազատ եղբայրը՝ գեներալ-լեյտենանտ Դավիթ Բեհրուֆովը: 1854 թ. հոկտեմբերի 17-ին Ալեքսանդրապոլից եղբորը գրած նամակում Վասիլ Բեհրուֆովը հայտնելով, որ թագավորը տեղեկանալով իր տրամադրության տակ եղած զինուժի մասին, ոչ միայն չի դատապարտել իրեն, այլև պարգևատրել է Գեորգիևյան շքանշանով, այնուհետև գրում է. «Այժմ, դիմելով դատավորներին, որոնք գեներալների գործողությունները քննում են ռազմական գործի խիստ կանոններով, ասեմ, որ հաղթանակը ձեռք է բերված և խնդիրն իրագործված է, քանի որ թշնամին մեր սահմաններից հեռու է շարտված ու նրա մոռված ջարդված է: Ես թագավորի ողորմածությամբ կրում եմ Գեորգիևյան երկրորդ աստիճանը, զորքերը տեղավորված են ձմեռանոցներում հենց սահմանի մոտ, իսկ դուք, հարգարժան անողոք դատավորներ, ցանկանում էիք, որ ես, օգտվելով հաղթանակից, գրավեի Կարսը և մնայի այնտեղ ձմեռելու՝: Լավ և համեղ ճաշից հետո, տաք սենյակում նստած, սիգարը բերանին, ձեզ համար շատ հեշտ է այդպես դատել...»⁹:

⁸ Богданович 1876, 252, 256.

⁹ Кавказский сборник 1902, 128.

Հովհաննիսյան Հ.

Բեհբուքովի ամենից տպավորիչ ռազմական հաղթանակն, իհարկե, Քյուրուկդարայի նշանավոր ճակատամարտում էր 1854 թ. հուլիսի 24-ին: Թուրքերը, որոնք ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել Կովկասյան ճակատում կրած իրենց պարտությունների հետո, փորձում էին բեկում մտցնել պատերազմի մեջ: Այդ «առաքելությունն» իր վրա է վերցնում Մուստաֆա-Չարիֆ փաշան, նպատակ ունենալով ջախջախել Ալեքսանդրապոլյան ջոկատը: Բեհբուքովի դեմ հաղթական մարտ վարելու համար նա նույնիսկ «մշակել» էր հատուկ պլան, որի հեղինակը ֆրանսիացի գեներալ Գյոմոնն էր: Թուրքերը խնդիր էին դրել օգտվել ուժերի իրենց եռակի գերակշռությունից՝ մոտ 60 հազար ասկյար, հարձակվել ռուսական ջոկատի վրա, շրջապատել նրան և դրանով ավարտել ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում: Հարձակումը նախատեսվում էր սկսել 1854 թ. հուլիսի վերջերին:

Հետախուզությունից տեղեկանալով, որ թուրքական գոմակը բռնել է Կարսի ճանապարհը, Բեհբուքովը որոշում է օգտվել այդ հանգամանքից և հարձակվել թուրքական բանակի վրա՝ թեպետ իր տրամադրության տակ ուներ ընդամենը 18 հազար զինվոր: Այս ճակատամարտում էլ Բեհբուքովն աջի ընկավ անձնական սխրանքով. ճակատամարտի թեժ պահին, երբ ռուսներին արդեն հաջողվել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը, Բեհբուքովը, ջոկատի գլուխն անցած, իր զինվորներին տարավ հաղթական գրոհի: Նրա աջ և ձախ թևում կռվում էին նրա երկու հայրենակիցները՝ աջում Լորիս-Մելիքովն էր, իսկ ձախում՝ Նովորոսիյսկյան դրագունյան չորրորդ գնդի հրամանատար, հայազգի գեներալ-մայոր Տինատուրովը: Ճակատամարտի մասնակիցների թվում էր Սկոբելևը, որը հետագայում դարձավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Բալկանյան ճակատի հերոս գեներալներից մեկը: Հենց այս հարձակումն էլ վճռորոշ դարձավ ճակատամարտի ելքի հարցում և միայն ռուս զինվորների հոգնածությունը թուրքերին փրկեց վերջնական ջախջախումից: Եվ այդուհանդերձ, Լորիս-Մելիքովի «որսորդները» շարունակեցին թուրքերին հետապնդել մինչև իրենց ճամբար:

Թուրքական բանակի մնացորդները պատսպարվեցին Կարսում: Գնահատելով այս ճակատամարտը, գեներալ Պ. Ռուդակովը գրում է. «Եկավ հուլիսի 24-ը: Օր, որը մի նոր էջ պիտի գրեր ռուսական զենքի հաղթական տարեգրությունում: Այստեղ իր վերջնական հաստատումը գտավ նաև իշխան Բեհբուքովի ռազմական փառքը... Մուստաֆա-Չարիֆ փաշան մեր նկատմամբ ունենալով թվական զգալի առավելություն, գրեթե երկու անգամ, խայ-

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

տառակ պարտություն կրեց և գերվեց...»¹⁰: Իսկ այս գրառումն իսկապես ուշագրավ է. «Բեհրուֆովի հետ միասին ճակատամարտում հրամաններ էին տալիս նաև իշխան Բարյատինսկին, հրետանային մասի պետ Բրիմները, հեծելազորային գնդի հրամանատար Բոգովուտը և էլի ուրիշներ... Բոլոր այս հրամանատարների հաջողության փառքն ավելի մեծ էր, քան Բաշ-Քադաքլարում: Սակայն Բյուրուկդարայի փառքը միանձնյա պատկանում էր միմիայն իշխան Բեհրուֆովին»¹¹:

Գլխավոր գնահատանքն, իհարկե, կայսր Նիկոլայ Առաջինի պարգևն էր: Ստանալով Բյուրուկդարայի հաղթական լուրը, կայսրն իշխանին ուղարկեց Անդրեյ Պերվոզվաննի շքանշանը, որի պատվին ի դեպ, Ռուսաստանում դեռ ոչ ոք գեներալ-լեյտենանտի աստիճանում չէր արժանացել: Իսկ ընդհանրապես, Պետրոս Առաջինի կողմից սահմանած այս պարգևին Ռուսաստանում արժանացել են ընդամենը մի քանի բարձրաստիճան զինվորականներ: Այստեղ էր, որ կայսր Նիկոլայը Բեհրուֆովին էր ուղղել իր նշանավոր խոսքերը՝ «Իշխան Բեհրուֆովն ինձ ուզում է զարմացնել իր հաղթանակով, իսկ ես նրան կզարմացնեմ իմ պարգևով»¹²: Ռուս սպաներից մեկը իր հուշերում պատմում է, որ երբ տեղի է ունենում Բեհրուֆովին շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությունը, «սիրված հրամանատարի պատվին հնչում են բուռն բացականչություններ... Ոգևորությունն ու ուրախությունը համընդհանուր էր: Նույն պահին իշխանի վրա անցկացրին շքանշանի հետ ստացված նոր ժապավենը: Ողջունելով բանակին, իշխան Բեհրուֆովը նրանց դիմեց հետևյալ խոսքերով. «Տիրակալի բարեհաճության համար ես առաջին հերթին պարտական եմ Ձեզ, պարոնայք սպաներ, և Ձեզ, իմ սիրելի զինվորներ: Ձեզ համարում եմ իմ անվամբ պարգևատրվածներ: - Պատրաստ ենք ծառայելու,- գեներալին ողջունեցին զինվորները և այդ ողջույնն անկեղծ էր... Իշխան Բեհրուֆովի հանդեպ մեր՝ սպաներիս ջերմ զգացումներն արտահայտվեցին նրա խրճիթում, իր բացած աղ ու հացի շուրջ... »¹³:

Ռուս գեներալ Պ. Ռուդակովի հուշերում առավել հետաքրքրականը Բեհրուֆովի անձի բնութագրությունն է. «Իշխան Բեհրուֆովի հետ ես ծանոթացա արշավանքի նախօրյակին,- գրում է նա,- այնուհետև նրա հետ եղա բոլոր ճակատամարտերում և վերջապես՝ ձմռան մի քանի ամիսները միասին անցկաց-

¹⁰ Русская старина 1883, 529.

¹¹ Русская старина 1883, 529.

¹² Русская старина 1883, 529.

¹³ Военный сборник 1860, 166-167.

Հովհաննիսյան Հ.

րեցինք Ալեքսանդրապոլում... Բեհբուջովը ծագում էր հայկական նշանավոր տոհմից, պատանեկությունն անց էր կացրել Պետերբուրգում՝ ստանալով աշխարհիկ լավագույն կրթություն: Ծառայել է սկզբում գվարդիայում, այնուհետև ուղարկվել է Կովկաս: Ականատեսը լինելով բազում փորձությունների ու դժվարությունների, Բեհբուջովն այս պատերազմում իրեն դրսևորեց բացառապես գերազանց կողմերով և իսկական հերոսի հոչակ ձեռք բերեց... Կառուցվածքով տիպիկ հայկական բնութագիր ուներ. բավական մեծ քթի հետ միասին ուներ փոքր, սակայն շարժուն, խորաթափանց ու իմաստություն արտահայտող աչքեր: Մազերը, որ զգացվում էին, որ երբևէ սև են եղել, այժմ արդեն բավականին ճերմակել էին: Դեմքը ժպիտ էր արտահայտում, հասակը միջինից փոքր-ինչ բարձր էր... իրանը նիհարավուն էր և տարիքից չափից ավելի կորացած: Նրա քայլվածքը կենդանի էր ու բարի... օժտված էր զինվորի հետ վարվելու մեծ շնորհով և մշտապես նրանց ոգևորում էր սիրալիր խոսքերով... Չստանալով զինվորական հատուկ կրթություն,- շարունակում է այնուհետև Ռուսակովը,- իշխանն իրեն չէր համարում ոչ հմուտ ռազմագետ և ոչ էլ նշանավոր տեսաբան, սակայն օժտված լինելով բնատուր խելքով ու փորձառությամբ և տիրապետելով մեծ քաջության, իր բոլոր արժանիքներով հանդերձ, նա մարմնավորում էր հրամանատարի ու կազմակերպչի հրաշալի կերպար, որի ղեկավարության տակ ենթակաների համար ծառայելը դյուրին էր և հաճելի... զինվորների շքանշանները Բեհբուջովն անձամբ էր հանձնում և բոլորին մեկ առ մեկ նվիրում էր մի բարի խոսք, որը նրանք համարում էին որպես թե երկրային պարգև...»¹⁴:

Ռուս գեներալ Ա. Չիսսերմանը, ով ժամանակին քննադատել էր Բեհբուջովին Բաշ-Քադաքլարից հետո ցուցաբերած «անվճռականության համար», հետագայում ստիպված էր խոստովանել, որ. «Քյուրուկդարայի ճակատամարտը նշանավոր գեներալի նշանավոր ճակատամարտերից մեկն էր: Իշխան Բեհբուջովը խելացի ու կրթված անձնավորություն էր: Իր էությամբ լինելով գերազանց կազմակերպիչ, նա գիտեր հաղորդակցվել զինվորի հետ և հոգալ նրա մասին, արժանի և սիրալիր էր նաև սպաների հանդեպ»¹⁵:

Եվ այդուհանդերձ, Քյուրուկդարայի ճակատամարտից հետո Կովկասյան գործող կորպուսը 1855թ. մայիսից նոր հրամանատար ունեցավ, ի դեմս գեներալ Նիկոլայ Մուրավյովի (ռազմագիտության մեջ հայտնի է որպես Մուրավ-

¹⁴ Русская старина 1883, 528.

¹⁵ Русский архив 1888, 227.

Գեներալ Վասիլ Բեհրուֆով

յով-Կարսսկի – Հ.Հ.): Նրան էլ հանձնարարվեց գլխավորել ռազմական հետազա գործողությունները:

Վասիլ Բեհրուֆովը նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և գործող կորպուսի մեջ չմտնող Կովկասյան առանձին բանակի հրամանատար: Այնուհետև մեկ տարի՝ 1856–57 թթ., Բեհրուֆովը վարում է Կովկասի գլխավոր վարչությանը կից ժամանակավոր կոմիտեի նախագահի պաշտոնը, իսկ մի կարճատև ժամանակ, մինչև նոր կառավարչապետ Միխայիլ Բարյատինսկու ժամանումը, կատարում է Կովկասի փոխարքայի պարտականությունները: 1857 թ. հունվարի 6-ին, Սուրբ Ծննդյան օրը, հայազգի գեներալը ստանում է հետևազորի (ինֆանտերիայի) գեներալի պատվավոր աստիճան. համեմատության համար, նշենք, որ նույն աստիճանով իր մահկանացուն է կնքել նաև Կովկասի լեգենդար զորավար Ալեքսեյ Երմոլովը:

Վասիլ Բեհրուֆովի մասին պատմող հուշերը ռուսական ամսագրերում բավական շատ են, ինչը վկայում է նրա ռազմական մեծ վաստակի ու հմուտ զորավարի համբավի մասին: Այս հուշերի հեղինակն, օրինակ, հայազգի զորապետի ծառայակիցներից Միխայիլ Օլշևսկին է, Կովկասյան հատուկ կորպուսի շտաբի պետը: Հուշերը վկայում են, թե ռուս գեներալը որքան քաջատեղյակ է Բեհրուֆովի կենսագրական ու ռազմական փառքի մանրամասներին. «Իշխան Բեհրուֆովը պատկանում է սակավաթիվ այն պատվավոր տոհմերի թվին, որոնց հայրենիքը լինելով Հայաստանը, բարձրագույն տեղ են գրավել Վրաստանի նշանավոր իշխանական տների շարքում: Նրա նախնիները առաջնային դիրք են ունեցել վրաց արքունիքում և այժմ են ընկել բազում հերոսական գործերով... Իշխան Վասիլի Օսիպովիչը, որն ամենից կրտսերն էր երեք եղբայրների մեջ, Վրաստանում առաջին իշխանն էր, որն իր դաստիարակությունը ստացավ Պետերբուրգում: Ավարտելով կադետական առաջին կորպուսը, 1809 թ. եկավ Թիֆլիս և սկզբում ծառայության անցավ գեներալներ Տորմասովի և Պաուլուչիի մոտ, ապա դարձավ Երմոլովի համհարզը: 1821 թ. Վ. Բեհրուֆովը նշանակվեց Մենգրեյան գնդի հրամանատար, Ախալցխայի գրավումից հետո՝ Ախալցխայի փառաբանության կառավարիչ, իսկ 1830–1838 թթ.՝ Հայկական մարզի կառավարիչ...»¹⁶: Ռուս գեներալն այնուհետև ուշագրավ մանրամասներ է պատմում նրա ռազմական նշանավոր գործողություններից՝ ամենուր դրվատանքի խոսքեր ուղղելով Բեհրուֆովի հասցեին:

¹⁶ Русский архив 1888, 172.

Հովհաննիսյան Հ.

«Ռուսկայա ստարինա» ամսագրում էլ Բեհբուջովի մասին իր տպավորություններն է կիսել նշանավոր կովկասագետ Ալ. Բերժեն: Թեպետ հեղինակի հրապարակման գլխավոր դեմքը կառավարչապետ Նիկոլայ Մուրավյովն էր, այդուհանդերձ, Բերժեն ուշագրավ զուգահեռներ է անցկացնում նրա և Բեհբուջովի միջև: Բերժեն նախ ներկայացնում է Մուրավյովի կարծիքը հայազգի զորապետի մասին. «Գործող կորպուսի հրամանատար Վասիլ Բեհբուջովը՝ Բաշ-Քադաքլարի և Քյուրուկդարայի արժանի հաղթողը, իմ երիտասարդական տարիների ծառայակիցն է. իմ խորին հարգանքն եմ արտահայտում նրա հերոսությունների հանդեպ, որոնք պահպանեցին այս երկրամասը... Ժամանելով այստեղ, ես զորքերը գտա գերազանց վիճակում, որոնք ենթակա էին գեներալ-լեյտենանտ իշխան Վ. Բեհբուջովին»¹⁷:

Բերժեն այնուհետև հետաքրքիր դիտարկում է անում. «Այսպիսին էր Մուրավյովի կարծիքն իշխան Բեհբուջովի մասին, որին նա ուղարկեց Թիֆլիս՝ տալով նրան այն զորքերը, որոնք չէին մտնում գործող բանակի կազմի մեջ: Ուստի հարց է առաջանում,- շարունակում է Բերժեն,- ինչը՞ ստիպեց կառավարչին, իր ուսերից վայր դնել հրամանատարական արժանի դիրքը և անձամբ գրավել այդ տեղը և որքանով գործը դրանից շահեց»¹⁸: Բերժեի կարծիքով, այդ ամենի «մեղավորն» ինքը Բեհբուջովն էր, քանի որ «Մուրավյովն անտարբերությամբ չէր նայում իր ավագ ընկերոջ ռազմական սխրանքներին, ինչը չէր կարող նրա մեջ նախանձի հասկանալի զգացում չառաջացնել»¹⁹- գրում է նա:

Ավելին, համեմատական զուգահեռներ անցկացնելով ռուսական բանակի երկու զորապետերի միջև, Բերժեն, ի վերջո, նախապատվությունը տալիս է հայազգի զորապետին. «1855 թ. սեպտեմբերի 17-ի Կարսի անհաջող գրոհից հետո զորքերի մեջ կորավ Մուրավյովի նկատմամբ հավատը՝ պատերազմը հաղթական ավարտի հասցնելու խնդրում, որն ամենուր իր ժամանակին ուղեկցում էր իշխան Բեհբուջովին: Համընդհանուր կարծիքով, նրա դեմ չէր կարող կանգնել նաև Կարսը: Մենք ևս այդ կարծիքին ենք,- գրում է Բերժեն: - Իշխան Բեհբուջովի առավելությունը Ն. Մուրավյովի նկատմամբ միանգամից աչքի էր զարնում... Բեհբուջովը տիրապետում էր շնորհների, որոնք անհամե-

¹⁷ Русская старина 1873, 608.

¹⁸ Русская старина 1873, 608–609.

¹⁹ Русская старина 1873, 608–609.

Գեներալ Վասիլ Բեհբուջով

մատ ցայտուն էին, քան ուներ Մուրավյովը, չխոսելով արդեն այն մասին, որ նա միաժամանակ գերազանց կազմակերպիչ էր ու կառավարիչ»²⁰:

Որպես ասվածի հավելում, կցանկանայինք մեջբերել ռուս գեներալներից մեկի հուշերից ուշագրավ մի հատված. «Բեհբուջովին փոխելուց հետո, մենք շատ հաճախ էինք հիշում Քյուրուկդարայի փառավոր ժամանակները: Բեհբուջովի հայտնվելուն պես՝ ողջույնի բացականչությունները երկար ժամանակ չէին դադարում, հատկապես երբ նա գումարտակից գումարտակ էր անցնում, հարյուրակից հարյուրակ: Ձինվորները հրճվանքով էին դիմավորում իրենց հրամանատարին... Այն ժամանակ, մենք մեծ ոգևորությամբ էինք թամբում մեր ձիերը և առաջ էինք սլանում՝ խիզախելու անսանձ ձգտումով...»²¹:

Ուր էլ որ ծառայել է հայազգի զորապետը, ամենուր թողել է հմուտ ռազմագետի և խելացի կազմակերպչի համբավ: Ուստի զարմանալի ոչինչ չկա նրանում, որ նրա հետ ծառայություն կատարած ռուս բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաներն այդպես գովեստով էին խոսում նրա անձնական բարձր որակների մասին. «Վասիլ Բեհբուջովը, - գրում է Կովկասին քաջածանոթ գեներալ Ինսարսկին, - հուժկու անուն է Կովկասում: Նա բավական հեղինակություն և հռչակ ունի ողջ Ռուսաստանում: Հայտնի է, որ արևելյան պատերազմի նախօրյակին նա հրավիրվեց Պետերբուրգ՝ գլխավորելու Կովկասյան մեր սահմանների պահպանությունը՝ համոզված լինելով, որ նրան, որպես տեղացու և խելացի անձնավորության, քաջ հայտնի են ժողովրդի ոգին և պաշտպանության ամենատարբեր միջոցները: Իշխան Բեհբուջովը Պետերբուրգում թողեց հիանալի տպավորություն՝ շնորհիվ իր խելքի և իմաստության... Երբ պատերազմը սկսվեց, Բեհբուջովը դարձավ կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և այնպիսի մեծ գործեր կատարեց, որոնք ավելի բարձրացրին նրա փառքը»²²: Նույն գնահատականն է նաև «Կավկազ» թերթում Վ. Բեհբուջովին նվիրված այս ակնարկում. «Ավելի քան կես դար շարունակ, գործունեության մի ոլորտից անցնելով մյուսը, - գրում էր թերթը, - հայազգի նշանավոր այս զորավարն աճեց ու հասունացավ իր բարձրագույն ծառայողական կոչման համար, իսկ վերջերս արժանացավ նաև թագավոր կայսեր մեծ վստահությանը»²³:

²⁰ Русская старина 1873, 608–609.

²¹ Военный сборник 1863, 486.

²² Русский архив 1868, 1007–1008.

²³ Кавказ 1854, N 27.

Հովհաննիսյան Հ.

Հայազգի զորապետն իր մահկանացուն կնքեց 1858 թ. մարտի 10-ին, Թիֆլիսում՝ սերունդներին թողնելով քաջարի ու հմուտ զորավարի վաստակած անուն: Ինչպես գրում է ռուս պատմաբան Վ.Պոտտոն, «ռուս զորապետերից քչերին հաջողվեց այդպիսի անուն վաստակել ու դրվատանքի արժանանալ ռուս հասարակայնության շրջանում»²⁴: Հայազգի զորապետին նվիրված ակնարկն ուզում ենք ավարտել մեր մեծանուն հայրենակցի՝ Խաչատուր Աբովյանի հետևյալ տողերով. «Մադաթովի ու Բեհբոթովի արածը բավական է, որ աշխարհը իմանա, թե ինչ հոգի ուներ էն ժամանակ մեր ազգը»²⁵: Եվ դա ճշմարտություն էր...

Եզրակացություններ

Ծառայության անցնելով ռազմական և քաղաքացիական ոլորտներում, Վասիլ Բեհբոթովն ամենուրեք վաստակեց հմուտ հրամանատարի ու կառավարչի համբավ: 1819–1820 թթ. Բեհբոթովը մասնակցություն է ունենում Կովկասի լեռնականների դեմ սկսված կռիվներին, աչքի ընկնում ռազմական խորը գիտելիքներով և մարտը վարելու արտասովոր ունակություններով: Բեհբոթովը պարգևատրվում է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով:

1828 թ., երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, գլխավոր հրամանատար Իվան Պասկևիչը Բեհբոթովին հրավիրեց գործող բանակ և նրան վստահեց ջոկատներից մեկի հրամանատարությունը: Բեհբոթովի առաջին ակնառու հաջողությունն այս պատերազմում Ախալցխայի բերդի գրավումն էր:

Ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի տարեգրության մեջ կա փառավոր մի էջ, որը պատկանում է բացառապես Վասիլ Բեհբոթովին: Դա Ախալցխայի 1829 թ. փետրվարի հերոսական պաշտպանությունն է: Հայազգի զորապետի ցուցաբերած ռազմավարական բարձր գիտելիքների շնորհիվ Ախալցխայի բերդը տասներկու օր շարունակ դիմադրեց թուրքական բանակի հարձակումներին և բերդը անառիկ պահեց: Ախալցխայի բերդի պաշտպանության ժամանակ ցուցաբերած արիության համար Վասիլ Բեհբոթովն արժանանում է ոսկյա սրի ու սբ. Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1830 թ., Բեհբոթովը նշանակվում է Հայկական մարզի կառավարիչ: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1838 թ., այնուհետև որոշ ժամանակով թողնում է Կովկասը և նշանակվում լեհական Զամոստիե ամրոցի պարետ: Այստեղ էլ 1843 թ. հոկտեմբերի

²⁴ **Потто** 1889, 138.

²⁵ **Աբովյան** 1984, 157:

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵԻՐՈՒԹՅՈՒՆ

10-ին Բեիրութովը ստանում է գեներալ-լեյտենանտի նոր օճադիրներ: 1844 թ. նա վերադառնում է Կովկաս և նշանակվում Դաղստանի զորքերի հրամանատար:

1847 թ. վերջերին Բեիրութովը նշանակվում է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության խորհրդի նախագահ: 1849 Անդրկովկասում կատարած արդյունավետ աշխատանքի համար ռուսական արքունիքը Բեիրութովին պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ 1851 թ. նույն շքանշանի ադամանոյա շրջանակով, որը ռուսական պատմության մեջ բացառիկ դեպքերից էր:

1853 թ. սեպտեմբերի 19-ին Վասիլ Բեիրութովը նշանակվում է Կովկասյան կորպուսի և Ալեքսանդրապոլյան ջոկատի հրամանատար: Նույն թվականին սկսված Ղրիմի պատերազմը գեներալ-ադյուտանտ Վ. Բեիրութովի կենսագրականում բազում փառավոր էջեր պիտի գրեր: Բեիրութովի տված առաջին նշանավոր մարտը Բաշ-Քադաքլարում էր:

Բեիրութովի ամենից տպավորիչ ռազմական հաղթանակն, իհարկե, Քյուրուկդարայի նշանավոր ճակատամարտում էր՝ 1854 թ. հուլիսի 24-ին: Այս ճակատամարտում իր վերջնական հաստատումը գտավ նաև իշխան Բեիրութովի ռազմական փառքը:

Հետագայում Վասիլ Բեիրութովը թողնում է ռազմական ծառայությունը և նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ: Հայազգի զորապետն իր մահկանացուն կնքեց 1858 թ. մարտի 10-ին, Թիֆլիսում՝ սերունդներին թողնելով քաջարի ու հմուտ զորավարի վաստակած անուն: Ինչպես գրում է ռուս պատմաբան Վ. Պոտտոն, «ռուս զորապետերից քչերին հաջողվեց այդպիսի անուն վաստակել ու դրվատանքի արժանանալ ռուս հասարակայնության շրջանում»:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արսլան Խ. 1984, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 449 էջ:

Богданович М. 1876, Восточная война, 1853-1856 годов: СПб., тип. Ф. Сущинского, т. 1, II, II, IV, 278, 40 с.

Военный сборник, 1860, т. 13, с. 166–167.

Военный сборник, 1863, N 2, с. 486.

Русская старина, 1883, N 12, с. 526–529.

Кавказский сборник, т. XXIII, Тифлис, 1902, с.128.

Кавказ, 1854, N 27.

Հովհաննիսյան Հ.

- Потто В.** 1889, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях. Турецкая война 1828–1829 гг., СПб., т. 4, 731 с.
Русская старина, 1883, N 12, с. 528.
Русский архив, 1888, N 10, с. 172–227.
Русская старина, 1873, N 10, с. 608–609.
Русский архив, 1868, кн.8, с. 1007–1008.
Ушаков Н.И. 1836, История военных действий в Азиатской Турции в 1828–1829 гг., ч. 1, СПб., 439 с., ч. 2, 326 с.

ГЕНЕРАЛ ВАСИЛ БЕБУТОВ

ОГАНЕСЯН А.

Резюме

Ключевые слова: генерал Бебутов, армянский полководец, русская армия, война, победы, летопись, вклад.

Генерал Василий Осипович Бебутов (1791–1857) вписал блестящие страницы в летопись русского военного искусства и был представлен почти ко всем высшим наградам русской армии. Во время Крымской войны получив известие о победе русских войск в Кюрукдаринском сражении в 1854 г., император Николай наградил генерала Бебутова орденом Андрея Первозванного, которым в генерал-лейтенантском чине в России еще никто не был награжден. Увековечив свое имя на полях сражений, генерал Бебутов навсегда остался и в памяти армянского народа.

GENERAL VASIL BEBUTOV

HOVHANNISYAN H.

Summary

Key words: General Bebutov, Armenian commander, Russian army, war, victories, chronicle, contribution.

Գեներալ Վասիլ Բեհրուժով

The article is devoted to the military leadership activities of the outstanding Armenian general Vasil Osipovich Bebutov (1791–1857) and highlights his decisive role in the victories of the Russian army. General Bebutov wrote glorious pages in the annals of Russian military art, received almost all the highest awards of the Russian army. So, having received the news of the victory of the Russian troops in the battle of Kurukdara in 1854 during the Crimean War, Emperor Nicholay awarded General Bebutov with the Order of Andrey Pervozvanny, which no one had ever received in the rank of a General-Lieutenant in Russia. General Bebutov's name immortalized on the battlefields remained in the memory of the Armenian nation too.

ՄՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ*

հայցորդ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
st.petoyan@gmail.com

ՇՈՒՇԻԻ ՄԱՀՏԵՍԻ-ՀԱԿՈՐՅԱՆՑՆԵՐԻ ՏՊԱՐԱՆԸ (1877–1905 ԹԹ.)

Քանալի քառեր¹ Շուշի, տպարաններ, Մահտեսի-Հակոբյանցներ, գիրք, մատենագիտություն, Հրաչյա Աճառյան, Պետրոս Դուրյան:

Ներածություն

Շուշիում տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի նախադրյալը դարձավ Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: Իսկ մինչ այդ՝ 1827 թ., նույն բողոքական քարոզիչների ջանքերով Շուշիում արդեն կազմավորվել էր իրենց տպարանը¹: Հիշյալ քարոզիչների՝ Շուշիում ունեցած գործունեության ամբողջական դադարից հետո (1837 թ.) տպարանը ձեռք է բերում Ղարաբաղի նորաստեղծ թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը²: Այս տպարանը վայրիվերումներով և դադարներով, ինչպես նաև տպագրական սարքավորումների համալրմամբ և արդիականացմամբ գործում է մինչև 1907 թվականը³: Այդ ընթացքում Շուշիի տպարանում հրատարակված գրքերի վրա մինևույն տպարանը հիշատակվում է տարբեր անվանումներով՝ «Ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապոլիտ Վիճակին Ղարաբաղու Տեառն Բաղտասարայ», «Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան», «Ի տպարանին Շուշույ, ընծայեցելոյ Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի ի հանգուցեալ Բարձր Սրբազան Մետրապոլիտ Բաղտասար Արք Եպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց», «Ի տպարանի Հոգեւոր դպրոցին հայոց Ղարաբաղու», «Տպա-

* Հոդվածը ներկայացվել է 08.02.21, գրախոսվել է 07.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

¹ Շուշիում քարոզիչների տպարանի և տպագրական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Պետոյան** 2021:

² **Լէօ** 1914, 121–122:

³ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

րան Հայոց Հոգեւոր տեսչութեան»: Շուշիի գրատպության պատմության մեկ-դարյա ժամանակատվածում հրատարակված գրքերի անվանաթերթերին հանդիպում են նաև Շուշիում գործած մասնավոր մի քանի այլ տպարանների անուններ՝ «Ի տպարանի Մինասի Մ. Տառղիճեանց», «Տպարան Բագրատ Տէր-Սահակեանցի», «Տպարան Մելքում Բաբաջանեանցի», «Ի տպարանի Միրզաջան Մահտեսի-Յակոբեանց», «Տպարան Աւագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի» և «Տպարան Եղիսաբէթ Մ. Մահտեսի-Յակոբեանցի»:

Մահտեսի-Հակոբյանցների տպագրական գործունեությունը

Շուշիում գործած տպագրական նշանավոր օջախներից էր Մահտեսի-Հակոբյանցների տպարանը: 1878 թ. ապրիլի 8-ին «Մշակ» թերթում հրատարակված «Նամակ Շուշուց» հոդվածում կարդում ենք, որ Շուշիում այդ ժամանակ գործել է երկու տպարան. «Մինի մէջ երբեմն անտարան կամ սաղմոս են տպում, մնացած ժամանակումն էլ մկներ են խաղում կազմարար տէրտէրի փէշի տակ թագ կացած, իսկ միաում, որ դեռ նոր է, տպում են ոսկէվարագ հարսանիքի հրաւերներ...»⁴: Հոդվածագիրը, անկասկած, առաջին տպարանի դեպքում նկատի ունի Հայոց հոգևոր տեսչության տպարանը, որն ուներ առավելաբար կրոնական և կրթական ուղղվածություն: Տպարանը թեմի կարիքների համար հրատարակում էր ինչպես որոշ ծիսական գրքեր, այնպես էլ Շուշիում գործող թեմական դպրոցի համար դասագրքեր: Իսկ երկրորդ տպարանի դեպքում հոդվածագիրը նկատի ունի Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանը, որը նոր շունչ հաղորդեց Շուշիի գրահրատարակչական աշխատանքներին՝ առավելաբար հրատարակելով գեղարվեստական, թարգմանական, ժամանցային բնույթի գրքեր, դասագրքեր և այլն:

Ավելի ուշ՝ 1897 թ., Շուշիի կրթական և մշակութային կյանքին առնչվող մեկ այլ հոդվածում դարձյալ հիշատակվում են Հայոց հոգևոր տեսչության և Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանները: Այս հոդվածագիրն արդեն նշում է, թե առաջին տպարանին վերաբերող վավերագրերն այնքան ցաքուցրիվ էին պահվում, որ, հակառակ իր բոլոր ջանքերին, այդպես էլ չի կարողացել իմանալ, թե մինչ այդ պահը տպարանում քանի՞ գիրք է տպագրվել, իսկ տպագրական «մամուլը բաւական փոքր է և բազմատեսակ տառեր չունի»: Իսկ երկրորդ տպարանի մասին խոսելիս հոդվածագիրը հիշատակում է,

⁴ «Մշակ» 1878, № 57 (Նամակ Շուշուց):

Պետոյան Ա.

որ այն հիմնադրվել է 1877 թ. նոյեմբերին, ունի «բաւական լաւ մամուլ և նոր ձևի տառեր»⁵:

Իսկ ի՞նչ է հայտնի տպարանի հիմնադրման մասին Շուշիի գրատպությանն առնչվող հետագա աղբյուրներում: Ուսումնասիրողները հիմնականում խոսափում են կոնկրետ թվական նշելուց՝ որպես տպարանի հիմնադրման ժամանակահատված հիշատակելով 1880-ականների սկիզբը⁶, իսկ լավագույն դեպքում՝ 1881 թվականը⁷:

Այս տպարանի՝ մեզ հայտնի անդրանիկ գիրքը («Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ»⁸) հրատարակվել է 1879 թվականին, ինչն ինքնին հերքում է տպարանի՝ 1880 և ավելի ուշ թվականին հիմնադրված լինելու վերաբերյալ գիտական գրականության մեջ տարածված տեսակետները: Նույն գրքից միաժամանակ տեղեկանում ենք, որ 1878 թ. ապրիլի 28-ին՝ մինչև հրատարակությունը, այն նախապես գրաքննվել է Թիֆլիսում: Պետք է նաև նկատի ունենալ, որ այս գիրքը տպարանի անդրանիկ հրատարակությունը չէ, քանի որ դրանից առաջ տպագրվել են հրավիրատոմսեր, ինչի մասին վկայում է վերը հիշատակված «Նամակ Շուշուց» հոդվածը⁹: Մյուս կողմից՝ նորաստեղծ տպարանի կարողությունից վեր էր որպես առաջին հրատարակություն տպագրել մի այնպիսի ծավալուն հատոր, ինչպիսին 430 էջանոց այս գիրքն էր:

Վերջինիս ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տպագրական աշխատանքների համար տպարանն ունեցել է հայերեն երկու, ռուսերեն և լատիներեն մեկական տառատեսակներ: Գրքում քիչ չեն տպագրական վրիպակները, որոնց երեք էջանոց ցանկը տեղ է գտել բնագրի վերջում: Հետաքրքրական է, որ 1880 թ. հրատարակված մի հոդվածում ոչ միայն խոսվում է այս գրքի կարևորության, թարգմանական որակի, այլև դրանում առկա տառասխալների և տպագրական վրիպակների մասին: Ըստ հոդվածագրի՝ դրանք ոչ թե արդյունք են թարգմանչի անփութության, այլ տպարանատիրոջ անբարե-

⁵ «Ազգագրական հանդես» 1897, 107:

⁶ **Լևոնյան** 1946, 232: **Իշխանյան** 1981, 113:

⁷ **Թէոդիկ** 1912, յաւելուածի 2: **Ավագյան** 1989, 64: **Սևյան** 1991, 97: **Տեր-Գասպարյան** 1993, 91: **Հարությունյան Մհեր** 2010, 31: **Հարությունյան Մարինե** 2010, 59: **Բալայան** 2017, 234:

⁸ Տե՛ս **Դրէպէր** 1879:

⁹ «Մշակ» 1878, № 57 (Նամակ Շուշուց):

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

խիղճ մոտեցման: Ավելին՝ այս տպարանը որոշ տատեր չի ունեցել, ինչպես «փ» տառը, որի փոխարեն կիրառվել է «փ» տառամիացությունը¹⁰:

Պետք է նշել, որ այս տպարանի հրատարակությունները կանոնավոր կերպով գրաքննվում էին Կովկասի գրաքննական կոմիտեի կողմից¹¹: Այսպես, «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ» գրքի անվանաթերթի դարձերեսից տեղեկանում ենք, որ այն գրաքննվել է ավագ գրաքննիչ Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովի կողմից, ով հայտնի էր իբրև «ծայրահեղ ռեակցիոն գրաքննիչ»¹²:

Մինչ այս հրատարակությունը, Շուշիում հիմնականում գրքերը տպագրվում էին նախկինում ընդունված կարգով. որևէ գրքի տպագրությունից առաջ այն պետք է ներկայացվեր թեմակալ առաջնորդին, ով էլ դրա մասին տեղեկացնում էր էջմիածնի Սինոդին (որոշ դեպքերում գրքի մեկենասն անձամբ էր դիմում Սինոդին), որից հետո, ստանալով վերջինիս թույլտվությունը, թեմակալ առաջնորդն ստանձնում էր գրքի տպագրությունը:

Միրզաջան Մահտեսի-Հակոբյանը Շուշիի հայ բողոքականների առաջնորդն էր: Ըստ այդ ժամանակ շրջանառվող լուրերի՝ տարբեր գողություններ կատարելու մեղադրանքով դատարանի վճռով նա մեկուկես տարի գտնվել է արքայի մեջ (Բաքվում)¹³: Վերադառնալով Բաքվից՝ Մ. Մահտեսի-Հակոբյանցը Շուշիի իր տան մեջ գործող ժողովարանին կից հիմնում է սեփական տպարանը¹⁴, վիմագրատունն ու գրավաճառանոցը (գրախանութ)՝ իր որդի Ավագի աջակցությամբ, ով Բաքվում վարպետացել էր տպագրական գործի մեջ: Նոր տպարանը, որտեղ աշխատում էին Միրզաջանի զավակները, հիմնադրման օրվանից բարգավաճում էր՝ ունենալով ինչպես հայկական, այնպես էլ ռուսա-

¹⁰ «Մշակ» 1880, № 69 (Ջօն Վիլիամ Դրեյֆերի «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ»):

¹¹ Շուշիում մեզ հայտնի գիրքը, որի անվանաթերթի դարձերեսին հիշատակված է Կովկասի գրաքննական կոմիտեում գրաքննվելու փաստը, տպագրվել է 1864 թ. Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի տպարանում (Եզեանց Գ., Ներքին կեանք հին Հայաստանի (Պատմաբանական քննութիւն), թարգմ. Պերճ Պոշեանցի): Այս գրքից հետո Կովկասի գրաքննական կոմիտեում գրաքննված և Շուշիում հրատարակված՝ մեզ հայտնի հաջորդ գիրքը «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ» աշխատությունն է (1879 թ.):

¹² Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովը Կովկասի գրաքննական կոմիտեում աշխատել է 1872–1890 թթ.՝ իբրև տեղական և արևելյան լեզուներով տպագրվող գրքերի ավագ գրաքննիչ, ով այցի է ընկել հայերեն գրքերի և մամուլի նկատմամբ դրսևորած իր կամայական մոտեցումներով (**Մխիթարյան** 1974, 105–106):

¹³ «Մեղու Հայաստանի» 1885, № 62 (Ուղեգնացական ակնարկներ):

¹⁴ «Նորք» 1922, նոյեմբեր-դեկտեմբեր, 83 (Իմ հիշողություններից):

Պետոյան Ա.

կան և թուրքական տառատեսակներ¹⁵: Այս տպարանում է «գրական մկրտություն» ստացել Լեոն (Առաքել Բաբախանյան), ով միաժամանակ հանդիսանում էր տպարանի սրբագրիչը¹⁶: Տպարանի գրաշարն էր Առաքել Մահտեսի-Հակոբյանցը, որի մասին հիշատակություն կա 1881 թ. Շուշիում տպագրված «Խենթ» և «Քնար խօսնակ» գրքերի կազմերի վրա՝ «Գրաշար Առաքել Մահտեսի-Յակոբեանց»: Վերջինս հավանաբար Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի մերձավոր ազգականն էր:

Ընդհանրապես, Շուշիի տպագրական ասպարեզում Մահտեսի-Հակոբյանցների հայտնվելն իր ժամանակին դժկամորեն է ընդունվել: Պատճառը ոչ միայն նրա՝ բողոքական լինելն էր¹⁷, այլև մինչև անգամ տեղեկություններ էին շրջանառվում, թե արագատիպ տպագրական մեքենա ունեցող Մահտեսի-Հակոբյանցների տպարանը, այդ պահին (1885 թ.) լինելով Շուշիում գործող միակ տպարանը, գերշահույթ էր ապահովում: Արդյունքում՝ Շուշիի հասարակությունը քայլեր ձեռնարկեց՝ վերակենդանացնելու Հայոց հոգևոր տեսչության տպարանը¹⁸:

1877–1885 թթ. լինելով միակ գործող տպարանը Շուշիում՝ այն իր գործունեության առաջին տարիներին առավելաբար իրականացնում էր տպագրական պատվերներ: Այս տեսանկյունից ուշագրավ է Մահտեսի-Հակոբյանցների տպարանի և շուշեցի հրատարակիչ Տիգրան Նազարյանի համագործակցությունը: Դեռևս 1879 թ. Տ. Նազարյանը Շուշիում հիմնադրել էր հրատարակչական գրասենյակ¹⁹, որի շնորհիվ 1881 թ. այստեղ հրատարակվեցին մի

¹⁵ «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում): Այս տպարանում հրատարակված որոշ գրքերի վերջում կա հետևյալ տեղեկությունը. «...Տպարանում ընդունվում են ամեն տեսակի պատուիրներ հայերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներով, որոնք կատարվում են ձեռնտու գներով և լաւ կերպով»:

¹⁶ «Նորք» 1922, նոյեմբեր-դեկտեմբեր, 83 (Իմ հիշողություններից): «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում): **Լեո** 1925, 32: «Տարագ» 1911, № 7-8, 96:

¹⁷ Սա Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գործունեության գլխավոր խոչընդոտն էր: Ըստ Լեոյի, այս տպարանի գործունեության առաջին տարիներին տեղի հայ բողոքականների և Հայ առաքելական եկեղեցու հետևորդների միջև բավական լարվել էին հարաբերությունները (**Լեո** 1914, 429): Հետաքրքրական է, որ Շուշիի բողոքականները 1887–1888 թթ. նույնիսկ գործուն քայլեր են ձեռնարկել և դիմել Կովկասի կառավարչապետին՝ խնդրելով, որ իրենց համայնքը ճանաչվի առանձին կրոնական միավոր («Նոր-դար» 1895, № 106):

¹⁸ **Լեո** 1914, 429–430:

¹⁹ **Նազարյան** 1965, 35: **Վարդանյան** 1987, 18:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

քանի գրքեր²⁰ նախատեսված երեխաների, ծնողների, դաստիարակների և մեծ զանգվածների համար²¹:

1881 թ. այս տպարանի և մեկ այլ հրատարակիչ Աբել Ապրեսյանի համագործակցության արդյունքում Շուշիում հրատարակվում է հայ անվանի վիպասան Րաֆֆու «Խենթը. արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից» վեպը, որը մինչ այդ «Մշակ»-ում մաս առ մաս տպագրված հատվածների ամբողջական հրատարակությունն էր: Տեսնելով այդ տպարանում հրատարակության պատրաստվող «Խենթ»-ի առաջին թերթերը՝ Րաֆֆին իր նամակներից մեկում հիշատակում է Շուշիի «փոքրիշատե կանոնավոր» տպարանի մասին՝ նշելով, որ այնտեղի թուղթը բավական լավն է, իսկ տպագրությունը՝ մաքուր²²: «Խենթ»-ի այս հրատարակությունը ցույց է տալիս Մահտեսի-Հակոբյանցների տպարանի կշիռն ու նշանակությունը հայ տպագրության մեջ:

1881 թ. այս տպարանում հրատարակված «Չորս մանրավեպ» աշխատության անվանաթերթի վրա գրված է՝ «Հրատարակութիւն Սիմ. Հախումեանց»: Հետաքրքրական է, որ Սիմեոն Հախումյանցի կողմից հրատարակվող «Գործ» ամսագրի 1882 թ. առաջին համարի կազմի դարձերեսից տեղեկանում ենք, որ Շուշիում գտնվող խմբագրությունը տեղի տպարանի «անկատարության» պատճառով ամսագրի համարները տպագրում է Թիֆլիսի «Պ. Վարդանեանցի և ընկ.» տպարանում, մինչև որ Շուշիում խմբագրությունն ունենա իր սեփական տպարանը²³: Սա նշանակում է, որ ամսագրի հրատարակիչը գոհ չի եղել Մահտեսի-Հակոբյանցների տպարանից՝ հավանաբար նկատի ունենալով տառատեսակների պակասությունը, ինչի մասին վերը խոսեցինք: Ի դեպ, 1882 թ. Մահտեսի-Հակոբյանցների տպարանում հրատարակված որևէ գրքի մասին հիշատակված չէ հայ գրքի մատենագիտական ցանկերում²⁴:

²⁰ Մեր ձեռքի տակ ունենք հետևյալ գրքերը՝ 1) **Տէր-Աւետիքեան Ն.**, Քնար խօսնակ (Տ. Նազարեանի հրատարակութիւն I), Շուշի, 1881, 2) Պօզանի ուսուցչի օրագրից, թարգ.՝ Տ. Նազարեան, (Տ. Նազարեանի հրատարակութիւն II), Շուշի, 1881, 3) **Դօդէ Ալֆօսնս**, Երկու մանրավեպ, թարգմ. Ն. Տէր-Աւետիքեան, (Տ. Նազարեանի հրատարակութիւն III), Շուշի, 1881: Հատկանշական է, որ այս հրատարակությունների կազմերը պատրաստված են գեղագիտական բարձր ճաշակով:

²¹ «Մշակ» 1881, № 70 (Նամակ Շուշուց): «Մշակ» 1882, № 9 (Նամակ խմբագրին):

²² **Րաֆֆի** 1964, 548:

²³ «Գործ» 1882, № 1:

²⁴ Հմմտ. Հայ գիրքը 1851–1900 թվականներին, 302–315:

Պետոյան Ա.

1883 թ. Շուշիի այս տպարանում հրատարակվել է «Արարատի գլուխը» աշխատությունը, որի բաժանորդների ցուցակում կարդում ենք՝ «Աագ Մահտեսի-Յակոբեանց տպարանատէր»²⁵: 1891 թ. նույն տպարանում տպագրված «Տոկոսաբեր աղիասկ. 10-ի (թումանի) վերայ» գրքի կազմի վրա գրված է՝ «Հրատարակիչ՝ Աագ Մահտեսի-Յակոբեանց» և «Տպարան Միրզաջան Մահտեսի-Յակոբեանցի», մինչդեռ գրքի անվանաթերթի նրա նշված է՝ «Հրատարակիչ տպարանատէր Ա. Մ. Մահտեսի-Յակոբեանց»: Սա նշանակում է, որ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի որդին՝ Ավագը, միաժամանակ հանդիսանում էր տպարանատերը, իսկ տպարանը շարունակում էր կրել հոր անունը: Միայն 1895 թվականից սկսած է, որ այստեղ տպագրված գրքերից բացակայում են Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանի մասին հիշատակությունները, քանի որ նույն տարվա մարտ ամսին վերջինս կնքել էր իր մահկանացուն: Ուշագրավ է, որ այդ առիթով հանդիպող մի վկայության մեջ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցը հիշատակվում է միայն որպես Շուշիում բողոքականության առաջնորդ²⁶:

Նշենք նաև, որ 1895–1901 թթ. Շուշիի հիշյալ տպարանում տպագրված մեզ հայտնի բոլոր գրքերի անվանաթերթերի վրա տպարանի անունն արդեն հիշատակվում է՝ «Տպարան Աագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի» կամ «Տպարան Ա. Մ. Մահտեսի-Յակոբեանցի»: Ի դեպ, մինչ օրս Շուշիի գրահրատարակչական գործունեությանն առնչվող աշխատություններում բավարար չափով հիշատակված չէ Ավագ Մահտեսի-Հակոբյանցը, ով, ինչպես տեսանք, կանգնած էր այս տպարանի ակունքներում:

1883 թ. Ա. Մահտեսի-Հակոբյանցը դիմում է տարածաշրջանի պատկան մարմիններին՝ խնդրելով թույլատրել իր տպարանում շաբաթը երեք անգամ ռուսերենով, հայերենով և թաթար-թուրքերենով հրատարակել «Шушинские объявления» թերթը: Այն նպատակ ուներ տեղեկություններ հաղորդելու Շուշիի անցյալի և ներկայի մասին, ինչպես նաև զանազան նորությունների և հայտարարությունների միջոցով լուսաբանել տեղական կյանքը: Սակայն Շուշիում թերթ հրատարակելու Ա. Մահտեսի-Հակոբյանցի ցանկությունը մնում է անկատար²⁷:

²⁵ Մօրթովցև 1883, 172:

²⁶ «Նոր-դար» 1895, № 62:

²⁷ Վրաստանի ազգային արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 554, թթ. 1–6:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ուշագրավ է, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանում 1887 թ. լույս տեսած մանկական մի վեպի²⁸ մասին «Նոր-դար» օրաթերթում հրատարակված տեղեկության համաձայն²⁹ «գրքի տիպն ու թուղթը մաքուր են», ինչը խոսում է որակյալ տպագրության մասին:

XIX դարի վերջում Շուշիում տպագրական գործը ծաղկում էր: Պատահական չէ, որ 1891 թ. տպագրված մի հոդվածում նշվում է, որ Շուշիում տպագրական գործը լավ հիմքերի վրա է դրված: Այդ պահին քաղաքում գործում էին երկու տպարան, որոնցից մեկը, ինչպես նշեցինք վերևում, ուներ արագատիպ տպագրական մեքենա: Հոդվածագիրը հայտնում է նաև, որ Այսրկովկասում Թիֆլիսից հետո հայերեն գրքերի հրատարակության մեջ Շուշին գրավում էր առաջին տեղը՝ այդ իմաստով առաջ անցնելով այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, ինչպիսին Բաքուն էր³⁰: Հետաքրքրական է, որ 1890 թվականին էլ «Հայոց հոգեւոր տեսչութեան» տպարանը, տպագրական պահանջներից ելնելով, չէր կարողանում մրցել Մահտեսի-Հակոբյանցների տպարանի հետ: Այս մասին խոսելիս Լեոն նաև հիշատակում է, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանը այդ ժամանակահատվածում բավական զարգացած էր³¹: Անկասկած, պետք է նկատի ունենալ, որ վերոհիշատակյալ իրողությունը մեծ մասամբ պայմանավորված էր Մահտեսի-Հակոբյանցների գործունեությամբ: Վերջիններիս տպարանն իր պատվավոր տեղն ուներ տարածաշրջանի հայկական տպարանների շարքում³² միաժամանակ խիստ կարևոր դերակատարում ունենալով Շուշիի տպագրական գործում³³:

Մահտեսի-Հակոբյանցների տպարանում հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր աշխատություններ: Այսպես, 1889 թ. տպագրվեց Մանուկ Աբեղյանի գրի առած «Դաւիթ եւ Միեր. Ժողովրդական դիւցազնական վէպ»-ը, որը «Սասունցի Դավիթ» էպոսի մեկ այլ տարբերակն է: Իսկ 1891 թ. տպագրվեց Ավետիս Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արուեստը. քննական տեսութիւն» մեծարժեք աշխատությունը: Վերջինիս իրական գնահատականը տվել է Եղիշե Չարենցը՝ նշելով, որ «սա է գիրք հանճարեղ և զարմանալի՝

²⁸ Տե՛ս Սօմոյլովիչ 1887:

²⁹ «Նոր-դար» 1888, № 1:

³⁰ «Տարագ» 1891, № 22, 319:

³¹ Հաշիւ, 1890, 17:

³² «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում)

³³ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

Պետոյան Ա.

գրված լինելով 90-ական թվականներին մի ինչ-որ անհայտ շուշեցի ոսուցչի ձեռքով»³⁴:

1890-ականների սկզբներին տարածաշրջանում մոլեգնած խոլերան կասեցնելու համար Շուշի երիտասարդությունը գործուն քայլեր ձեռնարկեց: Հանգանակվեց 750 ուրբի: Հետաքրքրական է, որ այդ գումարի մի մասով Մահտեսի-Հակոբյանցների տպարանում 1892 թ. վերահրատարակվեց թիֆլիսեցի բժիշկ Գ. Տեր-Գրիգորյանցի աշխատասիրած «Խօլերա եւ նրա առաջն առնելու միջոցներ» հանրամատչելի գրքույկը³⁵ 5000 տպաքանակով, որն անվճար բաժանվեց Շուշիում և դրա սահմաններից դուրս (անվանաթերթին նշված է՝ «Ամէն տեղ ձրի»):

Հետաքրքրական է, որ հենց 1894 թ. այս տպարանում է հրատարակվել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանի³⁶ առաջին հրատարակությունը³⁷: Գրադարան-ընթերցարանը մեծապես նպաստել է Շուշի գրահրատարակչական կյանքի աշխուժացմանը: Իսկ 1896 թ. նույն տպարանում հրատարակվում է «Ազգագրական հանդէսի» առաջին համարը (Ա. գիրք)³⁸: Այս տպարանի գործունեության մեջ ուրույն տեղ ունեն նաև դասագրքային հրատարակությունները³⁹, որոնցից այբբենարանները տպագրվել են մի քանի անգամ:

³⁴ **Բահաթրյան** 1984, V:

³⁵ Առաջին անգամ այն տպագրվել է 1890 թ. Թիֆլիսում:

³⁶ Այս մասին մանրամասն տե՛ս **Պետոյան** 2019:

³⁷ Տե՛ս **Լազարեւիչ** 1894:

³⁸ Տե՛ս «Ազգագրական հանդէս» 1896: Հանդէսի կազմի վրա նշված է՝ «Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1895», իսկ անվանաթերթի վրա՝ «Շուշի, տպարան Աւագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի, 1896»: Թվականների այս տարբերությունը կարող է թյուրիմացության առիթ տալ, ուստի հարկ համարեցինք այն պարզաբանել: Այսպես, «Ազգագրական հանդէս»-ի առաջին համարի տպագրության ծանուցմանը հանդիպում ենք 1896 թ. «Հանդէս Ամսօրեայ»-ի փետրվար ամսվա համարում, որտեղ «Ազգագրական հանդէս»-ի խմբագիր և հրատարակիչ Ե. Լալայանցը նշում է, որ պատկերազարդ «Ազգագրական հանդէս»-ը պետք է հրատարակվեր Շուշիում ամեն կիսամյակ՝ տարին երկու անգամ: Ծանուցումից տեղեկանում ենք, որ հանդէսի Ա. հատորը (գիրք) տպագրվելու էր տվյալ տարվա՝ 1896 թ. սկզբներին: Սա իր հերթին ապացուցում է «Ազգագրական հանդէս»-ի անվանաթերթի վրա նշված տպագրության թվականի իսկությունը, իսկ սկսած հանդէսի Բ. հատորից (գիրք)՝ տպագրությունը շարունակվել է Թիֆլիսում:

³⁹ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցը թարգմանել և տպագրել է այբբենարաններ, որոնցից մեր ձեռքի տակ ունենք 1886 թ. տպագրված «Մայրենի լեզու. այբբենարան հայ մանուկների համար» դասագիրքը: 1893 թվին էլ Մ. Մահտեսի-Հակոբյանցը տպագրել է Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի «Աշխարհաբարի քերականությունը» կարևոր աշխատույթ

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ընդհանրապես, խոսելով Մահտեսի-Հակոբյանցների տպարանի որակական հատկանիշների մասին՝ բավական է հիշատակել 1898 թ. տպագրված «Աղբիւր այբօճ»-ը, որի մասին նույն աշխատության վերջում կարդում ենք. «1898 թ. Աղբիւրի պրէմիան մի շատ շքեղ այբօճ է, 24 գոյնգոյն բուն գեղարեստական նկարներով»: Այս հրատարակությունը շարունակությունն էր դեռ տարիներ առաջ սկսված Տ. Նազարյանի և Մահտեսի-Հակոբյանցների համագործակցության: Իսկ 40 սմ երկարություն և 30 սմ լայնություն ունեցող գունավոր տպագրություն կարող էին իրենց թույլ տալ տարածաշրջանի քիչ տպարաններ:

1903 թ. Շուշիում տպագրված գրքերից հանդիպում են այնպիսիք, որոնց վրա նշված են «Տպարան Ե. Մ. Մահտեսի-Յակովբեանցի», «Տպարան Եղիսաբէ(ե)թ Մ. Մահտեսի-Յակովբեանցի»: Եղիսաբէթը Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի դուստրն էր և Ավագ Մահտեսի-Հակոբյանցի քույրը, ինչի մասին հուշում է նաև նրանց ազգանունը: Պետք է նշել, որ Եղիսաբէթ Մահտեսի-Հակոբյանցի տպարանը շարունակում էր իրացնել հրատարակչական գործի նույն սկզբունքները: Այս տպարանում 1903-1904 թթ. հրատարակված մի քանի գրքերի մասին տեղեկանում ենք «Հայ գիրքը 1901-1920 թթ.» մատենագիտական ցանկերից⁴⁰: Այս ընթացքում հրատարակված գրքերից, անկասկած, մեծ արժեք և նշանակություն ունի Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» գրքի առաջին հատորը («Ներածութիւն եւ աղբիւրներ»), որի երկրորդ հատորը («Կազմակերպութիւն եւ կառավարութիւն») տպագրվել է 1905 թ.՝ արդեն «Բագրատ Տէր-Սահակեանցի տպարան»-ում:

յունը: Իսկ Ավագ Մահտեսի-Հակոբյանցը տպագրել է այլ դասագրքեր ևս, ինչպիսիք են՝ 1) **Ճաղարբէգեան Յ.**, Հայոց պատմութիւն. Հայկազուն եւ Արշակունի թագաւորների ու մարգպանների ժամանակները (պատկերազարդ ձեռնարկ), Շուշի, 1895, 2) **Չիլինկարեան Ա., Ռաշմաճեան Տ.**, Ոյժեր («Բնագիտական ժողովրդական գրադարան» 4), Շուշի, 1899, 3) **Չիլինկարեան Ա., Ռաշմաճեան Տ.**, Մագնիսականութիւն («Բնագիտական ժողովրդական գրադարան» 5), Շուշի, 1900: Հ. Ճաղարբեգյանի, Ա. Չիլինկարյանի և Տ. Ռաշմաճյանի հեղինակած ձեռնարկները տպագրվում էին նաև Այսրկովկասի մի շարք հայաշատ քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս և այլուր)՝ որպէս դասագրքեր գործածվելով տեղի հայկական դպրոցներում: Ավագ Մահտեսի-Հակոբյանցը թեմական հոգևոր դպրոցի կարիքների համար վերջինիս նախաձեռնությամբ տպագրել է նաև դպրոցական օրագրեր, որոնցից մեզ հայտնի է 1901 թ. «Յիշատակարան Ղարաբաղի (Արցախի) Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի» հրատարակությունը: Այն օրագիր լինելուց զատ, նաև պարունակում է աշակերտների վարքականոններ, որոնք չափազանց կարևոր դեր են խաղացել նրանց դաստիարակության համար:

⁴⁰ Հայ գիրքը 1901-1920 թվականներին, 799:

Պետոյան Ա.

1905 թվականից հետո Շուշիի սույն տպարանի մասին որևէ տեղեկության չենք հանդիպում, ինչը պայմանավորված էր նույն տարում հայ-թաթարական բախումների հետևանքով առաջացած հրդեհով⁴¹:

Մեր ձեռքի տակ ունենք 1908–1919 թթ. Թիֆլիսում հրատարակված երեք տասնյակի չափ գրքեր, որոնց վրա տպարանի անունը նշված է «Ա. Մահտեսի Յակոբեանց», «Ա. Մահտեսի Յակոբեանց և որդի», «Ա. Մահտեսի Յակոբեանց», «Անդ. Մահտեսի Յակոբեանց», «Էկո(ո)ն(ո)միա», «Էկոնոմիա Մահտեսի Յակոբեանցի»: Փաստորեն, Մահտեսի-Հակոբյանցների գործունեությունը չի սահմանափակվել միայն Շուշիի տպարանով այլ ծավալվել է նաև Այսրկովկասի մշակութային կենտրոն Թիֆլիսում: Հիշյալ տպարանում, բացի գրքերից, հրատարակվել են նաև «Գաղափար» (1916–1917) և «Գործաւոր» (1919) օրաթերթերը, որոնցից առաջինի խմբագիր-հրատարակիչն էր Ավագ Մահտեսի-Հակոբյանցը (1916 թ. 1–69-րդ համարներ): Այս տպարանում են լույս տեսել «Մշակ» օրաթերթի 1907–1909 թթ. մի շարք համարները, ինչպես նաև 1910, 1916–1919 թթ. համարներն ամբողջությամբ: «Մշակ»-ի 1912 թ. մի հրապարակումից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Շուշիում գործում էին միայն Բ. Տեր-Սահակյանցի և Մելքում Բաբաջանյանցի տպարանները⁴²:

Կարևոր է պարզել, թե Մահտեսի-Հակոբյանցների տպարանի (1877–1905) գործունեության ընթացքում որքան գրքեր են հրատարակվել: «Հայ գիրքը 1851–1900 թթ.» և «Հայ գիրքը 1901–1920 թթ.» մատենագիտական ցանկերն⁴³ ուսումնասիրելիս՝ պարզ հաշվարկով տեսանելի է, որ գրեթե երեք տասնամյակ գործած տպարանում հրատարակված գրքերի նկարագրությունները չեն հասնում նույնիսկ 60-ի: Պարզ է, որ հիշյալ մատենագիտական ցանկերը չէին կարող ամբողջապես արտացոլել տվյալ ժամանակահատվածի ողջ տպագիր գրականությունը, քանի որ ոչ բոլոր գրքերն են հասու եղել մատենագետներին: Հետևաբար, այդ ցանկերի տեղեկատվությունը վերջնական չլինելով, միանշանակ չի կարելի որպես հիմք ընդունել, քանի որ դա կարող է թյուրիմացության տեղիք տալ: Այսպես, Շուշիի հասարակական կյանքին վերաբերող մի ուսումնասիրության մեջ նշվում է, որ այս տպարանում 1879–1900 թթ. հրատարակվել է 50 անուն գիրք⁴⁴: Ինչ խոսք, նշված թիվն ամբողջ-

⁴¹ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

⁴² «Մշակ» 1912, № 185 (Ղարաբաղի հայոց հոգեւոր տեսչութեան տպարանը):

⁴³ Հայ գիրքը 1851–1900 թվականներին, 836–837: Հայ գիրքը 1901–1920 թվականներին, 799:

⁴⁴ Հարությունյան 2017, 100:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

ջական չէ, քանի որ, ինչպես տեղեկանում ենք «Ազգագրական հանդես»-ում հրատարակված մի հոդվածից, Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գործունեության 20 տարիների ընթացքում (1877–1897) տպարանը հրատարակել է 83 անուն գիրք, իսկ սա նշանակում է, որ տարեկան միջին հաշվով տպագրվել է չորս անուն գիրք, ինչը հոդվածագրի կարծիքով շատ քիչ է⁴⁵: Բնական է, որ տպարանն իր գործունեության առաջին տարիներին չէր կարող շատ գրքեր հրատարակել, սակայն հետագայում, հմտանալով տպագրական գործի մեջ, տարեկան միջին հաշվարկով չորս անուն գրքից ավելի է տպագրել: Որպես օրինակ՝ նշենք, որ 1891 թ. այս տպարանում հրատարակվել է ութ անուն գիրք, որոնց մասին տեղեկանում ենք վիճակագրական տվյալներից:

Անցյալում տպագրված հայերեն գրքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հայթայթելը դյուրին գործ չէ: Մեր ձեռքի տակ ունենք 1891 թ. Ռուսաստանի տարածքում տպագրված հայերեն գրքերի մասին շուշեցի Պետրոս Զաքարյանի կազմած վիճակագրությունը, համաձայն որի՝ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող տարածքում տպագրված գրքերի մեջ հայալեզու գրականությունն զբաղեցնում էր 7-րդ տեղը: Հեղինակը նշում է, որ նույն տարում տպագրվել է 132 անուն հայերեն գիրք, ապա տալիս է այդ գրքերի տպագրության վայրերն ու տպարանները⁴⁶: Ըստ այս տվյալների՝ Թիֆլիսից և Մոսկվայից հետո տպագրված հայերեն գրքերի քանակով հաջորդը Շուշին է, ուր տպագրվել է 11 անուն գիրք⁴⁷, որից 8-ը՝ Մահտեսի-Հակոբյանցների, իսկ 3-ը՝ Հայոց հոգևոր տեսչության տպարաններում⁴⁸:

Այս տվյալը հիմք է տալիս կարծելու, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանն իր գրեթե երեսնամյա գործունեության ընթացքում միջին հաշվար-

⁴⁵ «Ազգագրական հանդես» 1897, 107 (Տպարաններ):

⁴⁶ Վիճակագրական այս տվյալները չեն կարող ամբողջական լինել: Նշենք միայն, որ վերը հիշատակված 132 անուն գրքերը տպագրվել են հայաբնակ 9 քաղաքների 15 տպարաններում: Բացակայում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը, ուր 1891 թ. հրատարակվել էին մեկ տասնյակից ավելի գրքեր:

⁴⁷ Վիճակագրական այս տվյալը համընկնում է «Հայ գիրքը 1851–1900 թթ. մատենագիտությունը» հատորում տեղ գտած այն գրքերի նկարագրությունների հետ, որոնք տպագրվել են 1891 թ. Շուշիում: Նույն թվականին Կովկասում մի շարք լեզուներով տպագրված գրքերի ցանկի 5-րդ համարն էլ ներառում է հայերեն գրքերի տվյալները՝ այբբենական կարգով հիշատակելով գրքերի հեղինակներին, վերնագրերի հակիրճ անվանումներն ու էջերի քանակը, իսկ տպարանի և տպագրավայրի մասին տեղեկությունները բացակայում են («Кавказский календарь», 1892, 47–50):

⁴⁸ «Մուրճ» 1892, № 7–8, 1173, 1176 (Հայերեն գրքերի հրատարակութեան գործը ռուսահայերի մեջ 1891 թ.):

Պետոյան Ա.

կով պետք է հրատարակած լիներ 100-ից ոչ պակաս անուն գիրք՝ նկատի ունենալով, որ տպարանին տարեկան միջին հաշվով բաժին էր ընկնում չորս անուն գիրք: Իհարկե, Եղիաբեթ Մահտեսի-Հակոբյանցի՝ տպարանատեր եղած ժամանակ տպարանը չուներ այն թափը և աշխատանքների ծավալը, ինչ որ կային իրենից առաջ: Մյուս կողմից, հարկ է նկատել, որ այս տպարանում միայն գրքեր չէին տպագրվում, այլ նաև՝ թռուցիկներ, բացիկներ, հրավիրատոմսեր, հաշվեցույցներ, դպրոցական վկայականներ և այլն:

Շուշիում հրատարակված գրքերից շատերի մասին տեղեկություններ, իսկ երբեմն էլ գրախոսականներ են հանդիպում այդ ժամանակաշրջանի հայկական պարբերականներում: Այդպիսի դեպքերը քիչ չեն եղել, մասնավորապես, Թիֆլիսում տպագրվող «Մուրճ» ամսագրում:

Վերջիններիս հրատարակչական և տպագրական գործունեության արգասիքը չէր կարող ամփոփվել միայն Շուշիում: Ինչպես տեսանք, հրատարակչատնից ու տպարանից բացի՝ նրանք ունեցել են նաև գրավաճառանոց, որն օգնում էր տեղում տարածելու իրենց տպագրած գրականությունը, ինչը կարևոր հանգամանք էր: Այստեղ տպագրված գրքերը միաժամանակ վաճառվում էին Թիֆլիսի տարբեր գրավաճառանոցներում, ինչի մասին տեղեկանում ենք դրանց տպագիր գրացուցակներից⁴⁹:

Նշենք նաև, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գրքերից շատերն առկա էին Շուշիի «Հասարակաց ժողովարան»-ի գրադարանում, Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի գրադարան-ընթերցասրահում, որոնց մասին տեղեկանում ենք տպագիր գրացուցակներից⁵⁰: Այս տպարանում է հրատարակվել Շուշիում լույս տեսած գրքերի մեծ մասը, որ հիշատակված է Բաքվի հայ բարեգործական ընկերության⁵¹ և Կովկասի հայոց բարեգործական ընկերության (Թիֆլիս) գրադարանների⁵², մասամբ էլ՝ Թիֆլիսի

⁴⁹ Տե՛ս «Կենդրոնական գրավաճառանոցի հայերէն գրքերի ցուցակ», 1895, 1898, 1904: «Գուտտենբերգ» գրախանութի հայերէն գրքերի ցուցակը, 1908, 1910:

⁵⁰ Տե՛ս Յուզակ գրոց Շուշույ հասարակաց ժողովարանի, 1889, 1910: Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշի քաղաքում, 1891, N 2, 1894:

⁵¹ Տե՛ս Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ հայոց մարդասիրական ընկերութեան գրադարանի, 1891, 1894, N 2, 1899, N 3, 1900, 1912:

⁵² Տե՛ս Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գրադարանի (I մանկական), 1910, (II գեղարուեստական), 1910: Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գրադարանի (I մանկական, յաւելլուած), 1913, (II գեղարուեստական, յաւելլուած), 1913:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ներսիսյան դպրոցի⁵³, Մոսկվայի Լազարյան ճեմարանի⁵⁴ և Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցի⁵⁵ տպագիր գրացուցակներում:

Այս իրողությունն ինքնին հուշում է, որ Մահտեսի-Հակոբյանցները հետապնդել են ոչ միայն շահութաբեր նպատակ, այլև ունեցել են գրահրատարակչական հոտառություն և ճաշակ, որոնց շնորհիվ հրատարակել են իրենց տպարանի վարկանիշը բարձրացնող գրքեր:

Պետրոս Դուրյանի բանաստեղծությունների ժողովածուի տպագրությունը

Շուշիում հայկական տպագրության պատմության մեջ կան դեպքեր, երբ ինչ-ինչ պատճառներից ելնելով՝ այնտեղ տպագրված որոշ գրքեր չեն պահպանվել կամ առնվազն մեզ չեն հասել: Այսպես, Շուշիի առաջին հրատարակությունը՝ «Լերան քարոզը» գրքուկը (1828 թ., 50 տպաքանակ, 15 էջ)⁵⁶, ոչ միայն մեզ չի հասել, այլև անհայտ է մնացել մատենագետներին և ուսումնասիրողներին: Սակայն եթե այս հրատարակությունը քիչ տպաքանակի պատճառով հասկանալիորեն կարող էր մեր օրերում պահպանված չլիներ, ապա մեզ չհասած մյուս հրատարակությունների դեպքում եղել են այլ գործոններ, ինչպես, օրինակ, հրդեհները և այլն:

Այսպիսի մի ճակատագիր էլ ունեցել է 1905 թ. Ե. Մ. Մահտեսի-Յակովբեանցի տպարանում հրատարակված՝ Պետրոս Դուրյանի «Բանաստեղծությունների ժողովածու»-ն, որի մասին հիշատակված է նույն տարում հրատարակված «Մուրճ» ամսագրում հաճախ տպագրվող «Նոր ստացուած գրքեր» խորագրով ցանկում («Պետրոս Դուրեան, Բանաստեղծութիւնների ժողովածու, հրատ. Մ. Մահտեսի Յակոբեանցի. 1905, Շուշի, 10 կ.»)⁵⁷:

Վերջինիս մասին մինչ օրս եղած միակ ընդգրկուն տեղեկությունն ամփոփված է Հ. Աճառյանի հուշերում: Նա նշում է, որ Շուշիի թեմական դպրո-

⁵³ Տե՛ս Մայր ցուցակ մատենից գրադարանի Ներսիսեան հոգետր դպրոցի հայոց, 1893:

⁵⁴ Տե՛ս Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго института восточныхъ языковъ, Приложение III. Списокъ книгъ и рукописей, поступившихъ съ 1888 г. по 1-ое Іюня 1903 года, Москва, тип. В. А. Гатцукъ, 1904.

⁵⁵ Տե՛ս Каталогъ книгъ Маріинско-Анановскаго училища, Къ 1-му марта 1912 г., Тифлисъ, тип. Н. Г. Аганьянцъ, 1912.

⁵⁶ Շուշիում առաջին տպագրությունների մասին տե՛ս **Պետոյան** 2020:

⁵⁷ «Մուրճ» 1905, № 6, 143:

Պետոյան Ա.

ցում⁵⁸ իր ուսուցչության տարիներին⁵⁹ դպրոցի մեկ այլ ուսուցչի՝ արցախցի Ավետիս Տեր-Հարությունյանի հետ⁶⁰ հրատարակության են պատրաստել վերոհիշյալ ժողովածուն: Հ. Աճառյանը մասնավորապես հիշատակում է, որ առաջաբանը գրել է Ա. Տեր-Հարությունյանը, իսկ Պ. Դուրյանի կենսագրությունը՝ ինքը: Ժողովածուի վերջում նրանք ավելացրել են բառարան, որտեղ ամփոփված են բանաստեղծի դժվարիմաստ բառերի բացատրությունները՝ տրված Հ. Աճառյանի կողմից: Նա գրում է, որ ժողովածուն տպագրվել է «բողոքական Մահտեսի Բաբայանի տպարանում»: Ինչպես վերը տեսանք, Շուշիում նման անվանումով տպարան չի եղել, հետևաբար կարծում ենք, որ տպարանի անվան սխալ հիշատակումը վրիպակի արդյունք է (պետք է լիներ՝ Մահտեսի-Հակոբյանց):

Հ. Աճառյանն իր հուշերում ավելացնում է, որ Ա. Տեր-Հարությունյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ իրենցից յուրաքանչյուրը տպարանից պետք է ստանար Պ. Դուրյանի գրքի 100 օրինակ՝ որպես վարձատրություն իրենց կատարած աշխատանքների: Սակայն, ի տարբերություն Ա. Տեր-Հարությունյանի, Հ. Աճառյանը չհասցրեց ստանալ իր օրինակները, քանի որ տպարանում բռնկված հրդեհի պատճառով այնտեղ մնացած բոլոր գրքերն այրվեցին: Հ. Աճառյանը նաև նշում է, որ ինքը 10 կոպեկով մի օրինակ է գնել ինչ-որ մեկից և ուղարկել Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարան⁶¹:

Փորձեցինք պարզել, թե մեր օրերում այս հրատարակությունից այլ օրինակներ պահպանվե՞լ են, թե՞ ոչ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայ գրքի մատենագիտական ցանկերից բացակայում է որևէ տեղեկություն այս մասին:

Հ. Աճառյանի հուշերից տեղեկանում ենք, որ Ա. Տեր-Հարությունյանը ժողովածուի՝ իր ունեցած օրինակները տարել է Նոր Նախիջևանի թեմական

⁵⁸ Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով 1838 թ. հիմնադրվում է Շուշիի թեմական դպրոցը: Այն իր գործունեության ընթացքում (1838–1920 թթ.), երբեմն ընդմիջումներով ու վայրիվերումներով, անուրանալի ազդեցություն է ունեցել ոչ միայն Արցախի, այլև առհասարակ արևելահայ կրթական կյանքի վրա (**Սանթրոսյան** 1964, 412-418):

Le 7 novembre 1920, le professeur a envoyé une lettre pleine de colère au rédacteur du journal « Times » de Londres. On dirait que cette lettre a été écrite aujourd'hui. Il rappelle avec colère comment les généraux français discutaient avec affectation avec les brigands turcs sur un groupe de cadavres d'Arméniens réfugiés en Cilicie. Il critique les gouvernements d'Angleterre, de France et d'Italie sur la conscience desquels se trouve le lourd fardeau de la pierre de la Question arménienne. Depuis un demi-siècle, les Arméniens souffrent sous la pression du mensonge et de la trahison : « À présent que s'est réalisé ce qui semblait presque impossible, et que le communisme russe est descendu sur eux, cette fois de concert avec la barbarie turque »¹¹.

Adonts termine sa lettre par cette conclusion : *Il est possible que les Arméniens se détournent une fois pour toutes de l'Europe avec la triste certitude que la meilleure des qualités humaines, la conscience s'est assourdie sans espoir ici*¹². Cette lettre a été publiée dans le IV^e tome des œuvres d'Adonts¹³.

Adonts s'est chargé de droit du rôle sacré d'organisateur de la vie intellectuelle arménienne. Il était extrêmement préoccupé du problème de l'éducation de la nouvelle génération arménienne dans un esprit de patriotisme et de dignité nationale.

Le 23 octobre 1930, s'adressant à la rédaction du journal « *Apaga* » (*Avenir*), Adonts a rappelé, au nom de l'Union littéraire arménienne de Paris, que le 8 novembre était le jour du centenaire de la naissance de Mikhaél Nalbandian et de Raphaël Patkanian. Il était convaincu que les préceptes patriotiques de Nalbandian et de Patkanian devaient être chers au peuple arménien.

Pour Adonts, il était très important d'avoir des connaissances professionnelles. Il suivait attentivement les articles imprimés dans la presse arménienne. Dans sa lettre adressée à Kostan Zarian, il critique sévèrement les journalistes du journal « *Haradj* » : « La presse est aux mains de personnes sans préparation. « *Haradj* » est un nid de reptiles, de gamins sans éducation et

¹¹ Adonts 2014, 92.

¹² Adonts 2014, 93.

¹³ Adonts 2012, 203–205.

ignorants, parler et discuter avec lesquels signifierait les honorer et avilir sa propre dignité »¹⁴.

C'est à Archak Tchobanian qu'est adressée la lettre, dans laquelle l'arméniste exprime, sur la prière de ce dernier, son opinion sur le livre *La clé de la langue chaldéenne* d'Abgar Païazat. Adonts ne partage pas la chaleureuse opinion exprimée au début du livre et écrite en langue grabar par Hratchia Adjarian. Il voit dans le livre des fautes, des erreurs et des interprétations de la propre invention de l'auteur. Il compare certaines découvertes linguistiques de Païazat avec l'histoire des paysans arméniens, d'après laquelle les Russes auraient emprunté le mot *ministre* aux Arméniens ; *ministre* signifierait **մի նստիի** (ne **t'assieds pas**), car un ministre n'a pas le droit de s'asseoir devant le roi. « Nous devons malheureusement constater que les étymologies de M. Païazat sont des découvertes de ce même ordre »¹⁵.

La dernière lettre d'Adonts est adressée à Artaches Tchilinkarian. Elle nous apprend qu'en 1939, le savant est parti pour Paris et y a donné une conférence sur l'épopée nationale arménienne *David de Sassoun*. Malheureusement, la conférence a été orale, sans texte écrit. Pour mettre la conférence en écrit, il fallait du temps, ce qui lui manquait. La Deuxième guerre mondiale était commencée en Europe, ce qui avait profondément oppressé le savant qui détestait les guerres et les révolutions. En outre, il avait des problèmes de santé. Et pour la première fois dans ses lettres, nous voyons du désespoir : « L'ambiance pénible m'a tellement affecté que j'ai senti la faiblesse ou le désespoir qui viennent de la vieillesse. Il ne reste aucune lueur claire et joyeuse ni dans la sphère personnelle, ni nationale, ni générale, qui aurait pu réchauffer d'un nouvel espoir mon essence glacée. J'ai peur que mes projets aussi restent inachevés ou aussi sans espoir que je le suis moi-même »¹⁶.

Au début de ses années de pérégrinations, Adonts avoue qu'en quittant sa patrie, il a laissé ses parents dans une situation sans issue, leur préférant en fait de servir la nation et la science.

Il rêvait toujours de voir la renaissance de sa patrie.

¹⁴ Adonts 2014, 150.

¹⁵ Adonts 2014, 176.

¹⁶ Adonts 2014, 185.

Le 24 avril 1929, une réunion de commémoration, consacrée à la mémoire des victimes du Génocide arménien, a eu lieu à Paris sur son initiative et sous sa présidence. Au cours de cette réunion, il a adressé à ses compatriotes une allocution brève, mais émouvante : « Il n'y a pas de victoire sans défaite. Lorsqu'on casse la branche d'un arbre, il donne de nouvelles pousses. Chacun de vous doit accomplir son devoir au nom de la liberté »¹⁷.

Dans la correspondance d'Adonts, il y a de nombreuses lettres adressées à N. Marr, N. Akinian, G. Hovsépian, T. Gouchakian, K. Zarian et d'autres. Les thèses qui y sont rédigées sont fondamentales et d'une grande importance même de nos jours pour les linguistes, les critiques littéraires, les hommes politiques, les historiens et, en général, tous ceux qui s'occupent de recherches scientifiques

BIBLIOGRAPHIE

Adonts N., Œuvres, I, Études historiographiques, Erevan, 2006, Ed. de l'Université d'État d'Erevan, 648 p.

Adonts N., Œuvres, VI, (tome complémentaire), Articles de publiciste, Erevan, 2012, Ed. de l'Université d'État d'Erevan, 531 p.

Adonts N., Œuvres, (VII), Correspondance, Erevan, 2014, Ed. de l'Université d'État d'Erevan, 286 p.

Mouchegh Ichkhan, Trois grands Arméniens, Beirut, 1952, Typ. «Ēakan», 98 p.

Frik, Recueil de poésies, New York, 1952, 765 p.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

ԴՈԼՈՒԻՄԱՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Քանալի բառեր¹ Ն. Ադոնց, Ն. Մառ, Բյուզանդիա, Հայաստան, հայրենասիրություն, Հայկական հարց, ցեղասպանություն:

Նշանավոր մարդկանց նամակները համազգային ու համամարդկային հնչեղություն ունեցող երևույթներ են: Սա անտիկ ժամանակներից եկող իրո-

¹⁷ Adonts 2012, 366.

դություն է, որի դրսևորումներն առկա են հայ հին և միջնադարյան, նաև նոր և նորագույն գրականության մեջ:

Մեր ձեռքի տակ են միջազգային հռչակ ունեցող բյուզանդագետ ու հայագետ, բանասեր, պատմաբան Նիկողայոս Ադոնցի նամակները՝ սկսած 1893 թվականից մինչև 1940 թվականը:

Նիկողայոս Ադոնցի 135 նամակները, համապատասխան ծանոթագրություններով, հրատարակության է պատրաստել ողջ կյանքն Ադոնցի գիտական ժառանգության ուսումնասիրմանն ու հրատարակմանը նվիրած ականավոր պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը: Նամակներին է նվիրված նշանավոր գիտնականի երկերի VII հատորը:

Ադոնցը բազմաթիվ նամակներ է ուղղել Ն.Մառին, Ն.Ալիխյանին, Գ.Հովսեփյանին, Թ.Գուշակյանին, Կ.Զարյանին և ուրիշների, որոնցում շարադրված դրույթները ելակետային են ու այսօր էլ կարևոր են լեզվաբանների, գրականագետների, քաղաքական գործիչների, պատմաբանների և ընդհանրապես գիտությամբ զբաղվող մարդկանց համար:

ЭПИСТОЛЯРНОЕ НАСЛЕДИЕ НИКОЛАЯ АДОНЦА

ДОЛУХАНЫАН А.

Резюме

Ключевые слова: Н. Адонц, Н. Марр, Византия, Армения, патриотизм, Армянский вопрос, геноцид.

Эпистолярное наследие великих представителей культуры являет собой огромную ценность в общемировом масштабе. К подобным реликвиям можно отнести 135 писем, написанных с 1893 по 1940 год известным византологом и арменоведом, филологом, историком Николаем Адонцем. Письма Николая Адонца с соответствующими примечаниями были подготовлены к печати Петросом Ованнисяном – историком, посвятившим свою жизнь изучению и изданию научного наследия Адонца. Седьмой том сочинений ученого включает письма. У Н. Адон-

ца есть множество писем, адресованных Н. Марру, Н. Акиняну, Г. Овсепяну, Т. Гушакяну, К. Заряну и другим.

Мысли и раздумья Н. Адонца актуальны и сегодня и могут служить важным подспорьем как для лингвистов, литературоведов, так и политических деятелей.

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Արուսյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների
գիտական լաբորատորիա
lingual151@mail.ru

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Համազգային Արևմտյան շրջանի գրական միավոր,
Լուս Անջելես, ԱՄՆ
lilitellen@yahoo.com

ԱԾԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

*Բանալի բառեր*¹ ածական անուն, թվի կարգ, մասնիկավորում, շարահյուսական մակարդակ, ձևաբանական իմաստավորում, սերող հիմք, թվակազմական մասնիկներ:

Ներածություն

Թվի քերականական կարգն արտահայտում է քանակայնության գաղափար, որ տարածվում է հաշվելի առարկաների վրա: Հաշվելի առարկաները կարող են լինել մեկից ավելի. այստեղից էլ քանակայնության հասկացությունը:

Հին հայերենում (և բազմաթիվ այլ լեզուներում) անվան եզակի թիվը նշոյթավորված չէ. իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց՝ հանդես է գալիս բառի ուղիղ ձևը, որ հատկանշվում է զրո ձևույթով: Ի հակադրություն զրո ձևույթի, հոգնակի թիվը նշոյթավորված է. հոգնակիության գաղափարն արտահայտվում է թվանիշ թեքույթների միջոցով, որոնք բառը վերածում են բառաձևի:

Թվի գաղափարը տարածելի է ոչ միայն գոյականների, այլև հատկանշային խոսքի մասերի վրա, թեև վերջիններս այս ոլորտում այլ յուրահատ-

* Հոդվածը ներկայացվել է 16.11.20, գրախոսվել է 13.11.20, ընդունվել է տպագրության 02.08.21:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

կություն են դրսևորում, որ պայմանավորված է նրանց փոխանվանաբար գործածությամբ և հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյուսական հատկանիշով:

Թվի կարգն արտահայտելու տեսակետից որոշակի յուրահատկություն են դրսևորում ածականները, որոնք հին հայերենում թվի գաղափարն արտահայտում են կա՛մ փոխանվանական գործածությամբ, կա՛մ հոգնակի լրացյալին համաձայնելու հանգամանքով՝ հանդես գալով շարահյուսական մակարդակում:

Ածականի համակարգում հոգնակի թվի իմաստը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական հատկանիշ է, քանի որ ածականն առանձին հոգնակի թվով հանդես չի գալիս, եթե չի գործածվում գոյական անվան հետ. հետևաբար հոգնակի թվի հատկանիշը պայմանավորված է նախադասության անդամների համաձայնության հանգամանքով, որ շարահյուսական հասկացություն է: Մյուս կողմից՝ ածականի թվի գաղափարը պայմանավորված է փոխանվանական գործածության հանգամանքով, երբ ածական անունը գործածվում է գոյական անվան փոխարեն, որի հետևանքով տեղի են ունենում ածական-գոյական խոսքիմասային մասնակի փոխանցումներ՝ խոսքիմասային տարարժեք բառերի անջատումով: Եթե ածականը հանդես է գալիս նաև հոգնակի թվով, ապա կարելի է խոսել նրա թվակազմական հատկանիշի մասին. այսինքն՝ ի՛նչ եղանակով կամ ի՛նչ միջոցով է արտահայտվում նրա հոգնակիակազմությունը:

Գ. Ջահուկյանը, կատարելով առաջնային արմատական ածականների իմաստային վերլուծություն, նկատում է, որ դրանք ըստ որոշչային կարգերի բնութագրում են նյութական և տարածական օբյեկտներ կա՛մ ինքնին, կա՛մ հիմնական կարգերին բնորոշ հարաբերությամբ հանդերձ: Վերլուծելով երկիմույթ արմատական ածականներին բնորոշ որակական և *քանակական*, ինչպես նաև չափի ու տեղի կարգերի զուգորդմամբ բնութագրվող տիպերը՝ նա առանձնացնում է որոշակի խմբեր, որոնք բնորոշվում են *կազմի և թվի*, *կախման և թվի*, *ձևի և թվի* կարգային հատկանիշներով: Այլ կերպ ասած գիտնականը թվի քերականական կարգը տարածելի է համարում նաև հատկանշային խոսքի մասերի վրա:

¹ **Ջահուկյան** 1989, 84, 89–90:

Ածական անվան գործածությունը լրացական դերով

Ածական անունն ընդհանրապես առանց գոյականի խոսքում գործածություն չունի, ըստ այդմ՝ ածականի հոգնակի թիվը պայմանավորված է ածական-գոյական համաձայնության հանգամանքով. միավանկ ածականները նախադաս և հետադաս դիրքում, իսկ բազմավանկ ածականները հետադաս դիրքում թվով (և հոլովով) համաձայնում են հոգնակի լրացյալներին: Ածականի թվի կարգը հնարավոր չէ քննել առանց հաշվի առնելու նրա գործածությունը (շարահյուսական միջավայրը): Այսպես՝

Ոչ է օրէն դիցազանց ... թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել (Խոր., 178): Մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն (Բուզ., 87): Եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց (Եզն., 8):

Ազգաց քաջաց, մեծաց հարուածոց և չարաց իրաց կապակցություններում քաջաց, մեծաց և չարաց ածականները համաձայնել են հոգնակի լրացյալներին (ազգաց, հարուածոց, իրաց) և արտահայտում են հոգնակի թվի իմաստ՝ ք-ց հերթագայության միջոցով:

Դիտարկենք բազմավանկ ածականների հոգնակիակազմությունը և նրանց գործածությունը լրացական դերով.

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին յանապազ բոկ եւ հետի երթային ի տունս աղօթից (Եղ., 201): Ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց (Յուդիթ, Է, 12): Գիսաւոր նոխագիւք և ցլուք սպիտակօք առատացոյց զզհոս կրակի (Եղ., 12): Արտաքնոցն երեւէին իբրեւ այրիք սգաւորք (Եղ., 203): Յիշի աստանօր ի պատմութեանս՝... բնակեալ յառաջագոյն արք սակաւք ինքնական հնազանդեալ դիցազինն (Խոր., 33): Դարձի՛ր նմանեաց դու այժեման կամ որթոց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց (Երզ., Գ, 17):

Դիտարկված օրինակներում հետևյալ բազմավանկ ածականներն արտահայտում են հոգնակի թվի իմաստ՝ *փափկասունք, բարձունք, սպիտակօք, սգաւորք, սակաւք, խնկաբերաց*, որ պայմանավորված է գերադաս անդամի՝ գոյականի հոգնակի թվով՝ *տիկնայք, լերանց, ցլուք, այրիք, արք, լերանց*:

Վերոբերյալ ածականների հոգնակի թվի իմաստն արտահայտվել է մասնիկավորման եղանակով: Այսպես, *փափկասունք, սգաւորք* և *սակաւք* բառերը հոգնակի թիվն արտահայտում են –ք մասնիկի միջոցով, *բարձունք* ածականի արտահայտության պլանում ձևականորեն կարող ենք առանձնացնել –ունք հոգնակերտ-հավաքական մասնիկը (դրանց կազմությանն առանձին

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

կանդրադառնանք), իսկ *սպիտակօք* բառաձևի հոգնակին դրսևորվել է –ք մասնիկով՝ եզակի գործիականից՝ *սպիտակաւ-ք*:

Ինչպես կարելի է եզրակացնել վկայված օրինակներից, բազմական ածականները, որպես կանոն, հետադաս գործածությամբ հոլովով և թվով համաձայնում են հոգնակի լրացյալին, իսկ նախադաս բազմական ածականները՝ ոչ²: Սակայն մատենագրության մեջ հանդիպում են բազմական նախադաս ածականների՝ հոգնակի թվով համաձայնության դեպքեր, որ պետք է համարել նախագրային օրինաչափության հետքեր: Հմմտ.

Դիմեալ գայ ի վերայ քո Բէլ *յաւեժիւք քաջօք երկնադիզօք հասակօք* սկայիւք մրցողօք (Խոր., 34):

Բերված օրինակներում *յաւեժիւք* և *երկնադիզօք* նախադաս ածականները հոգնակի թվով համաձայնել են հոգնակի լրացյալներին՝ *քաջօք* և *հասակօք*: Բազմական ածականների հոգնակին արտահայտվել է –ք մասնիկով, որ ավելացել է բառերի եզակի գործիականի վրա՝ *յաւեժիւ-ք* և *երկնադիզաւ-ք*:

Իբրև բազմակի հասարակ անունների լրացում՝ ածական անունն արտահայտվում է հոգնակի թվով, ինչպես՝ Սաւուղ և Յովնաթան *սիրելիք և գեղեցիկք և վայելուչք* (Բ. Թագ., Ա, 23): *Արդարոցն՝ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ:

Նախադաս բազմակի ածականները թվով համաձայնում են հոգնակի լրացյալներին, երբ նրանցից միջարկված են լինում այլ լրացումներով³, հմմտ.

*Այսոքիւք և այլ *բազմօք* խորհրդական *բանիւք*, *ի պղծոց և ի նորածայն *բանից*, *ի խստիցն և յանվանելի *նիպօց*, *ի խածանողականացն զազիր *զեռնոց*:

Ածականը հոգնակի թվով է արտահատվում հավաքական անունների կամ այնպիսի գոյականների պահանջով, որոնք ձևով եզակի են, սակայն արտահայտում են հոգնակի նշանակություն՝ կա՛մ թվական լրացումով, կա՛մ իբրև տեսակի անուն (ազգի կամ տոհմի): Հմմտ.

*Ընթացաւ ամենայն *ժողովորդն զարմացեալք*: *Ժողովեցաւ ամենայն *Իսրայէլ* իբրև զայր մի՝ *եկեալք* ի քաղաքաց: *Երկուրասան այր *տգէտք և տառապեալք*, որք ի նմանէ էին հարեալք:

Բազմակի լրացումների դեպքում լրացումներից վերջինն է թվով և հոլովով համաձայնում լրացյալին, հմմտ.

² Աբրահամյան 1976, 61: Խաչատրյան, Թոսունյան 2004, 90–91: Առաքելյան 2008, 76:

³ Բագրատունի 1952, 330:

*Այս բանք ճշմարիտ և հասարակիմք: *Յանձն առ մտանել յանձն և ի մարմինս բորոքեալ և մեռելությունս: *Նկանակս կարմիր և փափուկս, յոյժ և գեղեցիկս⁴:

Ածականի թվակազմությունը.

Ածականի թվակազմությունը պայմանավորված է նրա ձևակազմական գործոնով, որ մասնավորապես վերաբերում է ածանցավոր կազմություններին:

Հատկանշային խոսքի մասերի և վերացական հասկացությունների դեպքում թվանիշ վերջավորությունները բովանդակային պլանի հետ միասին կարող են ունենալ նաև ձևական կիրառություն և հանդես գալ որպես շարահյուսական կապակցության արտահայտիչներ⁵. դա պայմանավորված է հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյուսական հատկանիշով:

Ածանցավոր ածականների հոգնակին, որպես կանոն, կազմվում է ելակետային՝ սերող հիմք + ք մասնիկ կադապարով. վերջաձանցի տեսակը թվակազմության առումով չեզոք է:

Շարահյուսական մակարդակում հոգնակի թվով հանդես են գալիս ինչպես որակական, այնպես էլ հարաբերական ածականները: Մի դեպքում՝ ածականի հոգնակի թիվը պայմանավորված է հոգնակի լրացյալին համաձայնելու պահանջով, մյուս դեպքում՝ փոխանվանաբար (գոյականաբար) գործածվելու հանգամանքով:

Ածականի թվակազմությունը դիտարկենք երկու կտրվածքով՝ պայմանավորված ածականի որակական և հարաբերական տեսակներով. երկու դեպքում էլ, իբրև ելակետային միավորներ, նկատի ունենք ածանցավոր կազմությունները և թվակազմությունը ցույց ենք տալու ըստ ածանցների տեսակների:

Ա. Որակական ածականները հին հայերենում հատկանշվում են հետևյալ վերջաձանցներով՝ (ա)ւոր, -արար, -ական, -ալի // -ելի, -անի, -գոյն, -ին, -ուն, -եցիկ, -ուրի, (եր)իմ, -եղ, -իկ, -իչ // ուչ և այլն, նախաձանցավոր կազմությունները համեմատաբար սակավ են. այնուամենայնիվ հանդիպում են *ան-*,

⁴ Շարահյուսական * -ով տրված օրինակները վկայված են Ա. Բագրատունու աշխատությունից (Բագրատունի 1952):

⁵ Զահուկյան 1974, 182:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

ապ(ա)-, ր- ածանցներով, որոնց մեջ գործառապես կենսունակ են *ան-* նախածանցով կազմությունները⁶:

Այս ածանցներով կազմությունների հոգնակին պայմանավորված է ոչ միայն հոգնակի լրացյալին համաձայնելու շարահյուսական հատկանիշով, այլև ածականների՝ փոխանվանաբար գործածվելու հանգամանքով: Կան որոշակի ածանցավոր կազմություններ էլ, որոնք իրենց իմաստային կառուցվածքում համատեղում են նաև գոյականի խոսքիմասային արժեք և, ըստ այդ հատկանիշի, կարող են հոգնակի թվի իմաստ արտահայտել. դրանք խոսքիմասային տարարժեք բառերն են, որոնք սերում է ածականական նախնական իմաստից ու արժեքից:

Դիտարկենք *ան-* նախածանցով որակական ածականների թվակազմությունն ու նրանց գործածությունը համապատասխան շարահյուսական միջավայրում: Քանի որ շարահյուսական միջավայրում գոյականն ու ածականը (որոշիչն ու որոշյալը) հանդես են գալիս հոլովի և թվի հարացուցային ձևերով, կարելի է ասել, որ այդ միավորները համատեղում են հոլովակազմությունն ու թվակազմությունը, հետևաբար այդ ձևերը ներկայանում են իբրև հոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի և հոգնակերտ-հոլովակերտ վերջավորությունների զուգորդումներ⁷:

Ան- նախածանցով ածականները հոգնակին արտահայտում են –ք մասնիկի միջոցով, ինչպես՝

անամօթ-ք, անառակ-ք, անհաատ-ք, անաստուած-ք, անարժան-ք, անզգամ-ք, անխիղճ-ք, անհնազանդ-ք, անհոգ-ք, անմեղ-ք, անմիաբան-ք, անմիտ-ք, անյոյս-ք, անշարժ-ք, անշշունջ-ք, անշունչ-ք, անուղղայ-ք, անպարտ-ք, անպիտան-ք, անջրդի-ք, անսուրբ-ք, անցաւ-ք, անցաւոր-ք, անօգնական-ք, անօգուտ-ք և այլն: Հմմտ.

Ի նշանակ որդոցն *անհնազանդից* (Թիւք, ԺԷ, 10): Յափշտակեցին զնա *անցաւորք* ճանապարհի (Սաղ., 2Ը, 42): Եւ *անմիաբանք* լեալ ի միմեանց, արձակէին (Գործ., ԻԸ, 25):

Ապ(ա)- ածանցով՝ ապաշնորհ-ք. Եղիջիք որդիք Բարձրելոյ, զի նա քաղցր է ի վերայ չարաց և *ապաշնորհաց* (Ղուկ., 2, 35):

S- ածանցով՝ տկար-ք, տհաս-ք. Աղեղունք հզորաց տկարացան, եւ *տկարք* զգեցան զօրութիւն (Ա. Թագ., Բ, 4):

⁶ Հին հայերենում ածականակերտ ածանցների բառակազմական արժեքի մասին տե՛ս **Туманян** 1971, 246–250:

⁷ **Պետրոսյան** 1972, 119:

Խաչատրյան Լ., Խաչատրյան Լ.

Դիտարկենք վերջաձանցավոր որակական ածականների թվակազմությունն ու ցույց տանք դրանց գործածությունը համապատասխան բնագրային վկայություններով:

1. -Աւոր ածանցով կազմություններ. թունաւոր-ք, հեռաւոր-ք, կեղծաւոր-ք, ահաւոր-ք, աղետաւոր-ք և այլն:

Հմմտ. Եւ մարդ որ ... որ ի *հեռաւոր* ճանապարհի ոչ իցէ ... սատակեցի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ (Թիւք., Թ, 13): Եւ *հեռաւորք* ի նոցանէ եկեսցեն և շինեսցեն զտուն Տեառն (Չաքա., Զ, 15):

2. -Արար ածանցով կազմություններ. կենարար-ք, լուսարար-ք, աղմկարար-ք, զրուցարար-ք, խոռվարար-ք, հաշտարար-ք, ազդարար-ք, խոհարար-ք // խորտկարար-ք և այլն: Հմմտ.

Առաջնորդեսցէ մեզ ... Աստուած մեր Աստուած *կենարար* (Սաղ., ԿԷ, 21): Քրիստոս՝ որ յանձինս նոցա զարթոյց զկամս (իւր) *կենարարս* (ՆՀԲ, 1, 1084): *խոռվարար* խորհուրդք (ՆՀԲ, 2, 986): Լինին *խոռվարարք* և բարկացօրք (ՆՀԲ, 1, 986):

3. -Ական ածանցով կազմություններ. հոգեկան-ք, կործանական-ք, օրհասական-ք, հանրական-ք, հանդարտական-ք, խաղաղական-ք, բոլորական-ք և այլն:

Հմմտ. Տո՛ւր նմա պատասխանի *խաղաղական* (Սիրաք., Դ, 8): Եւ ահա ես իջից առ քեզ մատուցանել ողջակէզս և զոհս *խաղաղականս* (Ա Թագ., Ժ, 8): *Չօրհասական* վերսն յոգիսն ընկալեալ էր (Եղ., 64): Նա և արջք *օրհասականք* ընդ վախճանել շնչոցն հզորագոյնս կոուին (Եղ., 8):

4. -Ալի // -ելի ածանցներով կազմություններ. ցանկալի-ք, իմանալի-ք, բաղձալի-ք, տաղտկալի-ք, սիրելի-ք, գովելի-ք և այլն: Հմմտ.

Արքայն Նաբուգոդոնոսոր տարաւ զնա ի Բաբելոն ... հանդերձ *ցանկալի* սպասութ տանն Տեառն (Բ. Մնա., ԼԶ, 10): Եւ ամենայն գործք իւր *ցանկալիք* են (Սիրաք, ԽԲ, 23): Որդեա՛կ, *սիրելի արա՛* զանձն քո ժողովրդեան (Սիրաք., Դ, 7): Սաուղ և Յովնաթան *սիրելիք* եւ գեղեցիկք եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իրեանց (Բ Թագ., Ա, 23):

5. -Անի ածանցով կազմություններ. գեղանի-ք, լեզուանի-ք, պիտանի-ք և այլն: Հմմտ. Եղիցի անօթ պատուական՝ սրբեալ և *պիտանի* Տեառն (Բ Տիմո. Բ, 21): Գտեալ ասր և կտաւ՝ արար անօթս *պիտանիս* ձեռօք իւրովք (Առակ, ԼԱ, 13):

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

6. -*Գոյն* ածանցով կազմվում է որակական ածականի բաղդատական աստիճանը, որի հոգնակին ձևավորվում է –ք ածանցով. լաւագոյն-ք, աւագագոյն-ք, բարձրագոյն-ք, գեղեցկագոյն-ք, պարզագոյն-ք, կարծրագոյն-ք, խստագոյն-ք և այլն: Հմմտ.

Եւ այնչափ *լաւագոյն* ուխտի եղեւ երաշխաւոր Քրիստոս (Եբրա., Է, 22): Մանաւանդ բազումք ի ձէնջ *լաւագոյնք* էք քան զիս արութեամբ (Եղ., 101): Եւ յարեաւ գնաց արքայ ի Գարաւոն զոհել անդ, զի նա առաւել *բարձրագոյն* և մեծ էր (Գ Թագ., Գ, 4): ... Լերանց *բարձրագունից* (Խոր., 35):

7. - *հն* ածանցով կազմություններ. դժուարին-ք, դիւրին-ք, վերին-ք, ներքին-ք խորին-ք, անհնարին-ք և այլն: Հմմտ.

Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ (Մատ., ԺԹ, 24): Եւ ասէ ցնա Աբիսողոմ. Ահա բանք քո բարի են և *դիւրինք* (Բ. Թագ., ԺԵ, 3): Զիա՛րդ *դժուարին* է որ զինչս ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ (Մարկ., Ժ, 23): Եւ ասէ Յակոբ ցՓարաւոն. Աւուրք ամաց կենաց իմոց ... սակաւք և *դժուարինք* եղեն (Ծնն., ԺԷ, 9):

8. -*ուն* ածանցով կազմություններ. խօսուն-ք, ասուն-ք, գիտուն-ք, իմաստուն-ք, հասուն-ք, գեռուն-ք և այլն: Հմմտ.

Առնել զբանաւոր *գիմաստուն* եւ զխօսուն արարածն ի մէջ անբան անխօս անիմաստ արարածոցն (Ագաթ., 135): Յորոց և *իմաստունքն* տեղի տուեալ փախչին ի նոցանէ (Եղ., 8): Եւ ամենայն *գեռուն* թոչուն, որ գնայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ (Ղեւտ., ԺԱ, 20): Այս ծով մեծ և անդորր, ի սմա *գեռունք*, որոց ոչ գոյ թիւ (Սաղ., ԾԳ, 23)⁸:

9. -*եցիկ* ածանցով կազմություններ. երգեցիկ-ք, գեղեցիկ-ք, ազդեցիկ-ք և այլն: Հմմտ. Եւ էր կոյսն *գեղեցիկ* երեսօք յոյժ (Ծնն., ԻԴ, 16): Սաւուղ և Յովնաթան ... *գեղեցիկք* եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց (Բ Թագ., Ա, 23):

10. -*նտի* ածանցով կազմություններ. հնոտի-ք, սնոտի-ք, օտարոտի-ք և այլն: Հմմտ. Մի՛ *օտարոտի* համարել գեռանդն ինչ որ փորձութիւն ձեզ լինիցի (Ա Պետ., Դ, 12): Ի բաց արարէք ի ձէնջ զաստուածս *օտարոտիս* (Յեսու, ԻԴ, 23): Ի *սնոտի* յոյս կապեալ կան անհաւատք (Եզն., 105): Մի՛ որ զձեզ խաբեսցէ բանիւք *սնոտուկք* (Եփե., Ե, 8):

⁸ *Իմաստունք, գեռունք* բառերը խոսքիմասային տարարժեք բառեր են և հանդես են գալիս նաև գոյականի արժեքով:

Խաչատրյան Լ., Խաչատրյան Լ.

11. -(Եր)իմ ածանցով կազմություններ. մտերիմ-ք, ռիսերիմ-ք, հալատարիմ-ք, ուշիմ-ք և այլն: Հմմտ.

Ոչ այնպէս, որպէս ծառային իմ Մովսէս, որ յամենայնի տան իմում *հալատարիմ* է (Թիւք, ԺԲ, 7): Դաշինս *հալատարիմս* կռէր ընդ նմա (Բ.Մակ., Դ, 34): Մեռան ի մահուանն Արտաշիսի սիրելի կանայք ... և *մտերիմ* ծառայք (Խոր., 190): Ի ձեռն *մտերիմաց* պատմէ եղբօրն զնենգութիւն (ՆՀԲ, 2, 307):

12. -Եղ ածանցով կազմություններ. ահեղ-ք, հանճարեղ-ք, շքեղ-ք, ուժեղ-ք, զօրեղ-ք, համեղ-ք և այլն: Հմմտ.

Ահա ժողովուրդ իմաստուն եւ *հանճարեղ*, ազգս այս մեծ (Բ Օրէն., Դ, 6): Արդ տուք ի ձէնջ արս ... *հանճարեղս* ի վերայ ցեղից ձերոց (Բ Օրէնք, Ա, 13): Մխիթարեցան անտի Յուդայ՝ ի *զօրեղ* եւ ի գեղեցիկ (Բ Մակ., ԺԵ, 17): Ախտից *զօրեղաց* (ՆՀԲ, 1, 757):

13. -Իկ ածանցով կազմություններ. անառիկ-ք, աշխարհիկ-ք (ա.գ) և այլն: Հմմտ.

Չար քան զյանցաւոր *աշխարհիկ* դատապարտիմք (ՆՀԲ, 1, 264): *Աշխարհիկքն* ետուն զբաժինս իրեանց (ՆՀԲ, 1, 2164):

14. -Իչ, -ուչ ածանցներով կազմություններ. մատնիչ-ք, ամենափրկիչ-ք, թովիչ-ք (ա.գ), վայելուչ-ք և այլն: Հմմտ.

Ո՛վ արգահատեսցէ *թովչի* օձահարի (Սիրաք, ԺԲ, 13): Տեսանենք ի հնարագիտութենէ *թովչաց* զգօնացեալ (օձից) ... և բնակեալ ի տան՝ չմեղանչեն բնակչացն (Եզն., 64): Քերեաց ճարտարութեամբ զամենայն կեղեւ հնարեալ *վայելուչ* անաւթ պիտանի (Իմաս., Ժգ, 11): Սաւուղ և Յովնաթան ... *վայելուչք*, չմեկնեալք ի կենդանութեան իրեանց եւ ոչ մեկնեցան ի մահուան իրեանց (Բ Թագ., Ա, 23):

15. -Ովի ածանցով կազմություն. կորովի-ք. Հմմտ.

Կորովի և յաջողակ ի պատերազմունս (ՆՀԲ, 1, 1121): Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ Սաւուղայ, եւ գտին զնա արք *կորովիք* (Ա Թագ., ԼԱ, 3):

16. -Ի ածանցով կազմություններ. առաքինի-ք, յուրթի-ք, այլազգի-ք, բարի-ք և այլն: Հմմտ.

Ի մէջ բազմութեան երեւեցայց առա՛տ, եւ ի մէջ պատերազմի՝ *առաքինի* (Իմաս., Ը, 15): Գողացարուք ասադիկ զմիտս իմ խորհրդականքդ *առաքինիք* (Գ Մակ., Զ, 17): Եւ ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր, *բարի* էր եւ ուղիղ (Եզն., 115): Զողորմութիւն և զճմարտութիւն նիւթն *բարիք* (Առակ., ԺԴ, 22):

Բ. Հարաբերական ածականները բնութագրվում են հետևյալ ածանցներով՝ *-ային, -ական, -եայ, -եղէն, -ե // -ի, -եան, -անի* և այլն:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

Հարաբերական ածականների թվի կարգը նույնպես պայմանավորված է շարահյուսական համաձայնության գործոնով, ինչպես նաև փոխանվանաբար գործածության հանգամանքով:

1. -Ային վերջածանցով կազմություններ. գարնանային-ք, աշնանային-ք, ամառնային-ք, ձմեռնային-ք, մարդկային-ք, լեռնային-ք, ցամաքային-ք, հարավային-ք, հիախային-ք, ծովային-ք, դաշտային-ք և այլն: Հմմտ.

Տիրեսցէ ամենայն *լեռնային* կողմանցն (Յուդիթ, Ժ, 13): Եւ առ Յեսու զամենայն երկիրն զայն, զլեռնակողմնն եւ ... *զդաշտայինն* եւ զարեւմտեայն (Յեսու, ԺԱ, 16): Իբրեւ լուան ամենայն թագաւորքն ... որ *լեռնայինք* և որ *դաշտայինք* ... եկին ի միասին տալ պատերազմ ընդ Յեսուայ (Յեսու, Թ, 1):

2. -Ական վերջածանցով կազմություններ. արքունական-ք, հայրական-ք, մայրական-ք, եղբայրական-ք, մանկական-ք, ծովական-ք, բարբարոսական-ք, տիեզերական-ք, վիմական-ք, արձանական-ք, դամբանական-ք, լեռնական-ք, մարմնական-ք և այլն: Հմմտ.

Եւ կշռէր զհեր գլխոյ իւրոյ երկերիւր սիկղ ըստ *արքունական* սկեղ (Բ Թագ. ԺԳ, 26): Եւ անդ շինեցին զապարանսն *արքունականս* (Բուզ., 16): Տացուք զայսոսիկ՝ *մանկականի* քոյոյ տիոց (Խոր., 90): Այսոքիկ են *մանկականքն* ... ոչ ցանկաս մեծութեան՝ որ յԱստուծոյ կայ մնայ միշտ (ՆՀԲ, 2, 2014):

3. -Եայ վերջածանցով կազմություններ. բրդեայ-ք, մետաքսեայ-ք, ասուեայ-ք, ծովափնեայ-ք, ստորերկրեայ-ք, միջօրեայ-ք և այլն: Հմմտ.

Մերաքսեայ զգեստ (ՆՀԲ, 2, 253): Զհետևակն՝ պահապանս քաղաքացն, որ *զմերաքսեայսն* ունէին զվիշապս (Խոր., 303): Ծանրագոյն գտանիցէք քան զաւագ *ծովափնեայ՝* զվիշտս իմ (ՆՀԲ, 1, 1025): Արբցեն եգիպտացիքն զջրշեղջս *ծովափնեայս* (ՆՀԲ, 1, 1025):

4. -Եան վերջածանցով կազմություններ. աջակողմեան-ք, ձախակողմեան-ք, արեւելեան-ք, արեւմտեան-ք և այլն: Հմմտ.

Եւ իբրեւ ետես՝ եթէ վարատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս *ձախակողմանն* (Եղ., 8): Կան *ձախակողմեանքն* ամօթով (ՆՀԲ, 2, 145):

5. -Եայ վերջածանցով կազմություններ. փախստեայ-ք, արեւելեայ-ք, արեւմտեայ-ք, մարմարեայ-ք և այլն: Հմմտ.

Բնակեցուցանէ *յարեւելեայ* ուսոյ մեծի լերինն (Խոր., 29): Եւ եղև բնակութիւն նոցա ի Մասեաց մինչեւ գալ ի Սովիերա լեառնն *յարեւելեայց* (Ծնն., Ժ,

30): Շինեաց ի վերայ խաչին *մարմարեայ* խորանս (ՆՀԲ, 2, 226): Սրունք նորա սին *մարմարեայք* հաստատեալք ի վերայ ոսկի խարսխաց (Երգ., Ե, 15):

6. -Եղէն ածանցով կազմություններ. արծաթեղէն-ք, ոսկեղէն-ք, երկաթեղէն-ք, ասրեղէն-ք, բրդեղէն-ք, բոցեղէն-ք, հողեղէն-ք, հրեղէն-ք, փայտեղէն-ք, խեցեղէն-ք և այլն: Հմմտ.

Եւ զամենայն կահ և սպաս տաճարին *ոսկեղէն* եւ *զարծաթեղէն* ... Ետ ի պահեստ ի տան կոոց իւրոց (Ա Եգր., 2, 18): Եւ անօթ *խեցեղէն*, յոր մերձեսցի սերմնակաթն, փշրեսցի, եւ ամենայն անօթ *փայտեղէն* լուսացի ջրով (Ղեւոն., ԺԵ, 12): Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք *ոսկեղէնք* ու *արծաթեղէնք*, այլ եւ *փայտեղէնք* եւ *խեցեղէնք*... (Բ Տիմո., Բ, 20):

Երբ դիտարկում ենք ածականի թվակազմությունը՝ պայմանավորված ելակետային միավորի ձևակազմական գործոնով, ապա պետք է նկատի ունենալ նաև այն բառերը, որոնք բնորոշվում են վերջնականի յուրահատուկ հնչյունական կառուցվածքով:

Այսպես, հետևյալ՝ Ռ ձայնորդով և նախընթաց բաղաձայնով վերջացող բառերի վերջնականում հնչում է (ը)ր, ինչպես՝ *ծանր*, *կարծր*, *մանր*, *թանձր*, *փոքր*, *բարձր*, *քաղցր*, որոնց հոգնակին յուրահատուկ կազմություն ունի. հոգնակի ուղղականը կազմվում է եզակի սեռականից (որտեղ հանդես է գալիս Ու հոլովիչը), որին ավելանում է -ք հոգնակերտ մասնիկը, իսկ հոգնակերտից առաջ հանդես է գալիս Ն ձայնորդը, որ պահպանվում է հոգնակի թվի բոլոր հոլովներում⁹:

Հմմտ. *ծանր* – *ծան-ու-ն-ք*, *կարծր* – *կարծ-ու-ն-ք*, *մանր* – *ման-ու-ն-ք*, *թանձր* – *թանձ-ու-ն-ք*, *փոքր* – *փոք-ու-ն-ք*, *բարձր* – *բարձ-ու-ն-ք*, *քաղցր* – *քաղց-ու-ն-ք*:

Այս բառաձևերը գործածվում են միայն հոգնակի գոյականների հետ և թվով ու հոլովով համաձայնում են նրանց: Հոգնակի թվի թեք հոլովներում թվակազմական իմաստն արտահայտվում է ք-ց հերթագայությամբ, իսկ հոգնակի հայցականում՝ ք-ս (ինչպես հոգնակի գոյականների դեպքում): Հմմտ. լերին-ք բարձուն-ք – լերան-ց բարձան-ց, (զ)լերին-ս բարձուն-ս, ի լերան-ց բարձան-ց, լերամբ-ք բարձամբ-ք, ձկուն-ք մանուն-ք - ձկան-ց մանուն-ց, (զ)ձկուն-ս մանուն-ս, ձկան-ց մանուն-ց, ձկամբ-ք մանումբ-ք և այլն: Հմմտ.

Կալարուք մեզ *աղուեսունս փոքունս* զապականիչս այգեաց (Երգ., Բ, 15): Ծածկէր զամենայն *լերինս բարձունս* (Ծնն. Է, 19): Հասանէ յեզր ծովակի միոյ,

⁹ Աբրահամյան 1976, 43:

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով յինքեան ձկունս (Խոր., 35): Կապեն բե-
ռինս ծանունս եւ դժուարակիրս (Մատ., ԻԴ, 4):

Հոգնակի ենթակայի պահանջով ածականը հոգնակի թվով գործառվում է բաղադրյալ ստորոգյալի կազմում, ինչպես՝ Ասիցէք. թուղթքս ծանունք են եւ սաստիկք (Բ. Կորն., Ժ, 10):

Հոգնակի ածականը առանձին կարող է հանդես գալ մակբայի արժեքով (հոգնակի հայցականով), ինչպես՝ Ականջք իրեանց ծանունս լուան (Մատ., ԺԳ, 13)՝ (ծանրությամբ): Դառանբեր վիժանք հոգւոյն քաղցունս բոխեսցեն (ՆՀԲ, 2, 973)՝ (քաղցրությամբ):

Հոգնակի գործիականում ածականն ստանում է հոգնակերտ –ք մասնի-
կը, որ ավելանում է եզակի գործիականի վրա, հմմտ. լերամբ-ք բարձամբ-ք,
քարամբ-ք կարծամբ-ք և այլն:

Հին հայերենում բարձունք բառն անկախացել է գոյականի իմաստով ու արժեքով՝ «բարձր տեղ, բարձունք» նշանակությամբ, որ ծագում է բարձր ածա-
կանի հոգնակի ձևից, ինչպես՝ Ձագք արծուեաց ի բարձունս թռչին (Յոր, Է, 7):
Հաստատեցեր զոսս իմ ... և ի վերայ բարձանց կացուցեր զիս (Սաղ., ԺԷ, 34):

Եզրակացություններ

Հին հայերենում ածականի թվակազմությունը դիտարկելի է նրա գործա-
ռական ոլորտում՝ շարահյուսական մակարդակում, քանի որ ածականի թվի
հատկանիշը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական իմաստավորում է.
շարահյուսական ձևով կատարվող սահմանափակումներից դուրս ածական
անունն ընդհանրապես, հոգնակի թիվը՝ մասնավորապես, գործածություն չու-
նեն: Ածական անունը, նրա թվի կարգը իմաստավորվում և արժևորվում են
խոսքային գործածության ոլորտում. ըստ այդմ՝ նրա ձևաբանական հատկա-
նիշներն իրացվում և դիտարկվում են շարահյուսական մակարդակում ելնե-
լով նրա լրացական դերից, հոգնակի լրացյալներին համաձայնելու շարահյու-
սական հատկանիշից և փոխանվանաբար գործածվելու հանգամանքից:

Լեզվում հարաբերական և որակական ածականների թվակազմությունը
պայմանավորված է նաև ձևակազմական գործոնով, որ մասնավորապես վե-
րաբերում է ածանցավոր կազմություններին: Հին հայերենում ածանցավոր ա-
ծականների հոգնակին, որպես կանոն, կազմվում է ելակետային՝ սերող հիմք
+ ք մասնիկ կաղապարով. վերջածանցի տեսակը թվակազմության առումով
չեզոք է:

Խաչատրյան Լ., Խաչատրյան Լ.

Դիտարկված փաստական նյութի, ածականների տեսակների և նրանց ձևակազմական տիպերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ածական անվան հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է *մասնիկավորման միջոցով*:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա.Ա. 1976, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս», 558 էջ:

Առաքելյան Վ.Դ. 2008, Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր», 343 էջ:

Բագրատունի Ա. 1852, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Ի Վենետիկ, Ի վանս Սրբոյն Ղազարու, 743 էջ:

Խաչատրյան Լ.Մ., Թոսունյան Գ.Բ. 2004, Գրաբարի դասագիրք, Երևան, «Զանգակ-97», 383 էջ:

Պետրոսյան Հ.Զ. 1972, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 453 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 588 էջ:

Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 319 էջ:

Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, изд. «Наука», 448 с.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ.- Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1909:

Բուզ.- Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն.- Եզնկայ Կողբացոյ՝ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ.- Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր.- Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

ՆՀԲ- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց, Գ.Աւետիքեան, Խ. Սիրմէեան, Մ. Ազերեան, հհ. Ա.Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836–1837:

բ) Աստվածաշունչ մատյանի համառոտագրություններ

Առակ.- Առակք Սողոմոնի

Գործ.- Գործք առաքելոց

Ա Եզր.- Եզր. գիրք առաջին

Եբրա.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Եբրայեցիս

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

Եփե.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Եփեսացիս
Զաքա.- Մարգարէութիւն Զաքարեայ
Թագ., Ա. Բ. Գ.- Գիրք թագաւորութեանց Ա. Բ. Գ.
Թիւք.- Գիրք Թուոց
Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի
Ծնն.- Ծնունդք
Կորն.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Կորնթացիս Բ.
Ղեւտ.- Ղեւտականք
Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու
Մատ.- Աւետարան ըստ Մատթէոսի
Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի
Մնա.- Գիրք Մնացորդաց Բ.
Յեսու.- Գիրք Յեսուայ՝ որդւոյ Նաւեայ
Յոբ.- Գիրք Յոբայ
Յուդիթ.- Յուդիթ
Ա Պետ.- Թուղթ Պետրոսի առաքելոյ Ա.
Սաղ.- Գիրք Սաղմոսաց Դարթի
Սիրաք.- Գիրք Սիրաքայ
Տիմոթ.- Թուղթ Պողոսի առաքելոյ առ Տիմոթէոս Բ.
Բ Օրէն.- Երկրորդումն Օրինաց

ВЫРАЖЕНИЕ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ ЧИСЛА ПРИЛАГАТЕЛЬНОГО В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧАТРЯН Л., ХАЧАТРЯН Л.

Резюме

Ключевые слова: прилагательное, категория числа, аффиксация, синтаксический уровень, морфологическое значение, производная основа, числообразовательные частицы.

Числообразование прилагательного рассматривается на синтаксическом уровне, поскольку признак числа прилагательного имеет не морфологическое, а синтаксическое значение; имя прилагательное вообще, и мно-

жественное число в частности, вне синтаксических ограничений не употребляется.

Имя прилагательное, категория его числа осмысливаются и имеют значение на речевом уровне. В соответствии с этим морфологические признаки прилагательного рассматриваются на синтаксическом уровне.

Числообразование относительных и качественных прилагательных, в частности суффиксальных структур, обусловлено их формообразовательным фактором. Множественное число аффиксальных прилагательных, как правило, образуется по модели *производная основа+частица р*. Тип суффикса с точки зрения числообразования нейтрален.

Анализ рассматриваемого фактического материала, видов прилагательных и их формообразовательных типов показывает, что грамматическое значение множественного числа прилагательного выражается посредством аффиксации.

EXPRESSION OF THE GRAMMATICAL CATEGORY OF ADJECTIVE'S NUMBER IN OLD ARMENIAN

KHACHATRYAN L., KHACHATRYAN L.

Summary

Key words: adjective, grammatical category of number, affixation, syntax level, morphological level, derivative stem, number-formation patterns.

The number-formation of adjective was viewed on the syntactic level of adjective, as its number indication has not a morphological but a syntactic meaning. Adjective in general and its plural form in particular, does not have any other usage except its syntactically limited usages.

Adjective and its grammatical category of number have meaning and value in verbal usage. Hence, morphological indications of adjective are viewed and realized on the syntactic level.

The number-formation of relative and qualitative adjectives depends on the factor of their form construction, which particularly refers to derivative compositions. The plural of derivative adjectives, as a rule, is formed according to

Ածականի թվի քերականական կարգի արտահայտությունը հին հայերենում

the initial pattern; derivative stem+ particle *p*; the type of suffix is neutral from the point of view of number-formation.

The survey of facts, analysis of types of adjectives and their construction forms show that the grammatical meaning of plural adjective is expressed by affixation.

ANUSH APRESYAN*

PhD in Philology

“Matenadaran”

Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts

An-Apresian@mail.ru

GRIGOR NAREKATSI AND THE TRANSLATORS

Key words: Grigor Narekatsi, “Book of Lamentations”, prayer book, colophon, problems of translation, grammatical differences, religious poems.

Introduction

The volume “Book of Lamentations” penned by medieval Armenian poet, philosopher, and theologian Grigor Narekatsi (Gregory of Narek) has been translated from Old Armenian (Grabar) into Modern Armenian as well as into different languages. Thereby, Narekatsi, thanks to other Armenian, French, Russian, English, Italian translators, occupied his rightful place in the Armenian and world literature, and on April 12, 2015, Pope Francis I proclaimed him Doctor of the Universal Church. Nowadays, translations have greatly increased in quantity, but their study draws little attention. M. Janpoladyan has made a significant contribution to the study of foreign translations of Narekatsi’s work through a detailed examination of the Russian translations of the “Book”¹. Whereas, the other translations were referred to by the translators themselves in their translations, and separate articles were written.

The Foreign Language Translations of the “Book of Lamentations”

Narekatsi’s work first became known to foreign readers in French. Arshak Chopanyan translated several excerpts from the “Book” into French and published it in 1900 in the literary magazine “Mercure de France”. Subsequently, famous writers and critics of the time, such as Eugene Boren, Félix Nève and Luc-André Marcel, referred to Narekatsi and were so inspired by the “Book” that they

* Հոդվածը ներկայացվել է 25.06.21, գրախոսվել է 28.06.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

¹ Жанполадян 2012.

translated and published some passages². In 1950 and 1951, Luc-André Marcel published his translation of several excerpts of the “Book” and the article entitled “Grigor Narekatsi and Ancient Armenian Poetry”. In 1953 literary critic Jean Ballard published these translations and the article in a separate book³. These first, albeit partial, translations aroused great interest in Narekatsi, and later his work was translated twice into French⁴, thrice into English⁵, four times into Russian⁶, it was also translated into Italian⁷, Persian⁸ and many other languages.

The Western Armenian Translations of the “Book of Lamentations”

Arshak Chopanyan was not only the first to present the “Book” in French, but also translated some passages into Western Armenian. They were published in the “Flower” (“Tsaghik”) magazine in 1895⁹ and later summarized in two volumes of the “Faces” collection¹⁰. Chopanyan considered the “Book” a volume, consisting of theological writings, prayers, historical passages and religious poems¹¹. For Chopanyan and his successive Western Armenian translators, the understanding of the “Book of Prayer” was essential, which is evident even from the titles of the translations – “Narek’s Prayer” and “Prayer Book”.

The first complete translation of the “Book” in Modern Armenian was done by Misak Gochunyan: it was published in 1902 in Constantinople¹². Nshan Jivanyan scrutinized the quality of this translation in the booklet “Narek and His Translation in Modern Armenian”¹³.

² See about this in detail **Գասպարյան**, Գրիգոր Նարեկացին ֆրանսիական գրական մտքի գնահատմամբ, «Սովետական գրականություն», 1966, N 6, 145–150.

³ See Marcel 1953, 19–36.

⁴ Grégoire de Narek 1961. Grégoire de Narek 2012.

⁵ Grigor Narekatsi 1977. Grigor Narekatsi 2001. St. Grigor Narekatsi 2001.

⁶ **Григор Нарекаци** 1977. **Григор Нарекаци** 1985. **Григор Нарекаци** 1984. **Григор Нарекаци** 1988.

⁷ Gregorio di Narek 2016.

⁸ Գրիգոր Նարեկացի (ف) ځان نامه ی گ رگ وار) 2001:

⁹ **Զօպանեան**, Ծաղիկներ միստիքական գրականության, «Ծաղիկ», 1895, Յաւելու-աճական թիւ, 112–126:

¹⁰ See **Զօպանեան** 1924, **Զօպանեան** 1929.

¹¹ See **Զօպանեան** 1924, 9.

¹² Աշխարհաբար Նարեկ, Նարեկայ վանքի վանականներէն Ս. Գրիգոր վարդապետի աղօթագիրքը 1902:

¹³ See **Ճիւանեան** 1905, 11-15.

In 1926, two prose translations of the “Book” into Western Armenian were published simultaneously, one in Constantinople (translated by Bishop Karekin Khachatoorian)¹⁴, the other in Cairo (translated by Bishop Torgom Gushakyan)¹⁵. The translators authored prefaces. Khachatoorian titled his preface “Narekatsi and the Narek”, Gushakyan – “St. Grigor Narekatsi”. They addressed both the specifics of the work and the translation issues.

With a desire to refine their translations, translators have occasionally revisited, revised, and translated them anew. Thereby, Khachatoorian, dissatisfied with his first translation, published a new verse translation of the “Book” into Western Armenian in Buenos Aires in 1948, with a juxtaposition of the original text in Old Armenian¹⁶.

In addition to those complete translations, which have been published in separate books, some excerpts from the “Book” have been published in collections, magazines, manuals and textbooks. Such are the fragmentary translations of Z. Gazanjyan¹⁷ into Western Armenian, the fragmentary verse translations into Modern Eastern Armenian by V. Nersisyan¹⁸ and V. Zadayan¹⁹.

*The Eastern Armenian **Translations of the “Book of Lamentations”***

The Modern Eastern Armenian translations of the “Book” by Mkrtich Kheranyan and Vazgen Gevorgyan are best known in Armenia. The Armenian reader often gets acquainted with Narekatsi’s work thanks to them. Mkrtich Kheranyan’s verse translation of the “Book” into Modern Armenian, entitled “Grigor Narekatsi, The Book of Lamentations”, edited by Varag Arakelyan, was published in Yerevan in 1960 by “Haypethrat” publishing house²⁰.

The book begins with a preface by Mkrtich Mkryan, who prepares the reader for reading the work through the interpretation of Narekatsi and his composition. The segment entitled “From the Translator” is also important, where Kheranyan touches upon a number of issues, such as the poetic metre, rhyme, assonance, predominant in the “Book”, as well as the frequently used Old Armenian case

¹⁴ Նարեկ. Ողբերգութիւն Ա. Գրիգոր Նարեկացիի 1926:

¹⁵ Նարեկ, աղօթամատենան ս. Գրիգոր Նարեկացոյ 1926:

¹⁶ Նարեկ. Մատենան ողբերգութեան Ա. Գրիգոր Նարեկացիի 1948:

¹⁷ **Գազանճեան** 1998, 307–397:

¹⁸ Հայ դասական քնարերգություն, 1986, 58–60:

¹⁹ **Զաղայան** 2013, 196–202:

²⁰ **Գրիգոր Նարեկացի** 1960:

forms and phrases, the word formations and compoundings unique to the author. According to the translator these forms are typical of the composition and can be considered powerful means of conveying the appropriate “taste and smell” of the work, he strived to preserve in his translation²¹.

The translator also refers to the “disputable chapters”: “Prayers 75, 92 and 93 wholly, as well as separate subsections in Prayers 33, 34 and 26, which having a purely theological and religious-philosophical nature and content, seem to be inconsistent with the general poem in their style and spirit and are believed not to belong to the pen of the genius author”²². Those prayers and passages are missing in the translation, and this was conditioned not so much by Kheranyan’s mentioned opinion, but, at least, by the given period. In their research, scholars of the Narekatsi studies have shown by a comprehensive examination of the manuscripts that they belong to Narekatsi’s pen and originally existed in the “Book”²³. Later, when Kheranyan’s translation was republished, those prayers translated by Arshak Madoyan were also included²⁴. Kheranyan has preserved the sequence of prayers in his translation, but has not translated the preface entitled “Tenets of Prayer”²⁵ and the colophon. Kheranyan’s translation has footnotes, which the translator, with certain corrections, used when compiling the footnotes of the Modern Western Armenian translations of the same work carried out by Gushakyan and Khachatourian²⁶.

²¹ See **Գրիգոր Նարեկացի** 1960, XXXIV.

²² See *ibid.* **Գրիգոր Նարեկացի** 1960, XXIX.

²³ See *ibid.* **Գրիգոր Նարեկացի** 1985, 1038–1039, ծնթ. 5. Jean-Pierre Mahé also referred to this issue, noting: “It has long been observed that the 34th, 75th, 92nd and 93rd prayers of the ‘Book’ are very different from the others. The difference depends on several peculiarities. The style of these prayers is less poetical and closer to prose than the rest. In terms of their confessional or theological content, they stand apart from Gregory’s usual wishes and confessions. These prayers, which differ from the others in terms of form and content, not only belong to the poem, but also emphasize its main sections”, see **Մահե**, «Ողբերգութեան մատենանի» կառուցվածքի և ստեղծագործման մի քանի հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 4, 100.

²⁴ **Սբ. Գրիգոր Նարեկացի** 2012:

²⁵ The “Tenets of Prayer” was not included in the translation, probably conditioned by the existing various opinions about its being authorial. See about the issue of the title of the “Book” **Թամրազյան** 2016, 297–302.

²⁶ See **Գրիգոր Նարեկացի** 1960, XXXIII–XXXIV.

Narekatsi, like almost all medieval scribes, often referred to the Bible, but due to the Soviet era, not all the relevant passages were annotated and many expressions remained unclear. Kheranyan's translation has a dictionary. It contains the Modern Armenian versions of the words in the original text that could be used in translation. Kheranyan, however, did not do so, and this, among other issues, was commented by Suren Shtikyan in his article entitled "The Modern Armenian Translations of Grigor Narekatsi"²⁷.

Every translator who undertook the translation of the "Book", strived to create a translation that did not repeat the previous ones, still remaining faithful to the original text. Vazgen Gevorgyan initiated a new translation of the "Book", trying to translate it in his own way, to create a poetic translation and present Narekatsi anew as a genius poet.

The verse translation of the "Book" and the canticles (tagh) by V. Gevorgyan into Modern Armenian, entitled "Grigor Narekatsi, Book of Lamentations; Canticles", was published in Yerevan in 1979 by the "Soviet Writer" publishing house²⁸. Gevorgyan referred to his translation back in 1968 in the article entitled "On the New Modern Armenian Translation of Grigor Narekatsi's 'Book of Lamentations'"²⁹. The translator published some excerpts of the "Book" in the press, and in 1970 in "Tsaghkakagh"³⁰. Gevorgyan's translation did not include the "Tenets of Prayer", prayers 75, 92, 93 and the colophon either. The sequence of prayers are preserved, except for the last three: Prayer 95 of the original text is presented under Prayer 93, and Prayer 94 instead of Prayer 92. The book lacks both footnotes and a dictionary, but a series of issues related to the translation are discussed in the "Retrospective Review", where the translator with parallel examples makes comparisons between various Modern Armenian translations of the "Book"³¹.

In recent years, new Modern Armenian translations of the "Book" have been published. In 2013, Ashot Petrosyan published a prose translation of the "Book" with a juxtaposition of the original text in Old Armenian. The book includes 95

²⁷ See Շտիկյան [http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20\(antip\).pdf](http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20(antip).pdf).

²⁸ Գրիգոր Նարեկացի 1979:

²⁹ See Գևորգյան, Գրիգոր Նարեկացու Մատյան ողբերգության պոեմի աշխարհաբար նոր թարգմանության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, N 2, 168–172.

³⁰ Գրիգոր Նարեկացի 1970:

³¹ See Գրիգոր Նարեկացի 1979, 598–654.

prayers and a colophon, has prayer titles, an epilogue, a concise dictionary and footnotes³².

In 2016, the “Book” was translated by Maxim Voskanyan³³. The translation had a preface and footnotes to several excerpts of Prayer 2. M. Voskanyan noted that at first it was broken down into poetic lines to translate the “Book” following the scientific publication. Thenceforth, taking into account that the original text was not broken down into poetic lines in the manuscripts, he compared the translation with the original text entitled “The Tragedy of Our Holy Father Gregory – the Monk from Narek Monastery” which was published in Antelias, and removed the poetic lines broken down³⁴.

The last two translators did not attach importance to the fact that although the original text was not broken down into poetic lines, Narekatsi constructed his composition in such a way as to reveal the pronunciation, syntax, semantic independence and significance of the units that were separated thanks to the pauses between them, the specially expressed inner voice, tempo, rhythm and rhyme. Their preservation in the translations must be important.

In 2019, the new Eastern Armenian prose translation of the “Book” by Father Mesrop Aramyan was published, with a juxtaposition of the original text in Old Armenian³⁵. The author used the achievements of the translation heritage of the “Narek” and G. Avetikyan’s commentary. The translation was done from the critical original text published by P. Khachatryan and A. Ghazinyan, which he scrupulously compared with G. Avetikyan’s commentary, making the necessary changes, and turned to H. Nalyan’s commentary for semantic adjustments³⁶.

Conclusion

Thereby, referring to the complex and complicated translation work of the “Book of Lamentations”, the translators noted that they never hoped to create a perfect translation, but to present the original text as clearly and accurately as possible. The translators more or less managed to express the peculiarities of the “Book” in different passages, and this was prevailingly conditioned by the

³² Աբ. Գրիգոր Նարեկացի 2013:

³³ Սուրբ Գրիգոր Նարեկացի 2016:

³⁴ See Սուրբ Գրիգոր Նարեկացի 2016, 415–424.

³⁵ Աբ Գրիգոր Նարեկացի 2019:

³⁶ See Աբ Գրիգոր Նարեկացի 2019, 17.

grammatical differences between Modern Armenian and Old Armenian as well as **the translator's style and taste.**

In order to understand the original text, the translators have often been guided by the interpretations of the Bible and dictionaries, or made unique commentaries. Some of them translated the excerpts similarly to create a translation closer to the original text, and even when expressed in other nuances, they had almost never deviated from the original. Others were guided by the dictates of the poetic metre, the desire to always express the original text in the same metre, sometimes deviating from the meanings, creating new forms and applications. However, despite some omissions and other translations, they have managed to create such translations thanks to which, the reader may be acquainted with the “Book” a millennium later.

BIBLIOGRAPHY

Աշխարհաբար Նարեկ, Նարեկայ վանքի վանականներին Ս. Գրիգոր վարդապետի աղօթագիրքը 1902, գրաբար բնագիրին թարգմանեց **Գօշունեան Մ.**, Կ. Պոլիս, տպագր. Գ. Գայսերեան, 515 էջ:

Գազանճեան Ջ. 1998, Հատընտիր հայ հին բանաստեղծութեան, հտ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 605 էջ:

Գասպարյան Հ. 1966, Գրիգոր Նարեկացիին ֆրանսիական գրական մտքի գնահատմամբ, «Սովետական գրականություն», Երևան, Հայկական ՍՍՀ գրողների միության վարչության հրատ., N 6, էջ 145–150:

Գևորգյան Վ. 1968, Գրիգոր Նարեկացու Մատյան ողբերգության պոեմի աշխարհաբար նոր թարգմանության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», N 2 Երևան, «Միտք» հրատ., էջ 168–172:

Գրիգոր Նարեկացի 1985, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ **Խաչատրյան Պ. և Ղազինյան Ա.**, Երևան, ԳԱԱ հրատ., էջ 1038–1039:

Գրիգոր Նարեկացի 2001, Մատյան ողբերգության (فغان نامه ی گ رگ و وار), պարսկերեն թարգմանությունը՝ Մաթյան Ա., Սպահան, «Նաշրե Ֆարդա» հրատ., 288 էջ:

Գրիգոր Նարեկացի 1960, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց **Խերանյան Մ.**, Երևան, Հայպետհրատ, XXXIV+409 էջ:

Գրիգոր Նարեկացի 1970, Մատյան ողբերգության, Ծաղկաքաղ, թարգմանություն **Գևորգյան Վ.**, Երևան, «Հայաստան» հրատ., 127 էջ:

Գրիգոր Նարեկացի 1979, Մատյան ողբերգության. Տաղեր, թարգմանություն **Գևորգյան Վ.**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 654 էջ:

Ջաղայան Վ. 2013, Հայ միջնադարյան պոեզիա, «Գրական համալսարան», գիրք XIII, Գրական-գեղարվեստական ժողովածու, կազմեց՝ **Մաղալյան Վ.**, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 196–202:

Թամրազյան Հ. 2016, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Բ, Երևան, «Նաիրի» հրատ., 454 էջ:

Հայ դասական քնարերգություն 1986, երկու հատորով, հտ. I, Հին շրջան, միջին դարեր (V–XII), կազմեցին և ծանոթագրեցին՝ **Մկրտչյան Լ., Մադոյան Ա.**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 272 էջ:

Ճիանենան Ն. (Հորոյ) 1905, Նարեկը և իր աշխարհաբար թարգմանությունը, Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթեոսեան, 48 էջ:

Մահե Ժ.-Պ. 1986, Ողբերգութեան մատենանի» կառուցվածքի և ստեղծագործման մի քանի հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., N 4, էջ 99–105:

Նարեկ, աղթամատենան ս. Գրիգոր Նարեկացու 1926, արդի հայերէնի վերածեց **Գուշակեան Թ.**, Գահիրե, տպ. Յ. Ազապար, 367 էջ:

Նարեկ. Մատենան ողբերգութեան Ա. Գրիգոր Նարեկացիի 1948, գրաբար բնագրի հանդիպարողութեամբ աշխարհաբարի վերածեց՝ **Խաչատուրեան Գ.**, Պուլնոս Այրէս, տպագրութիւն ՍՏ. Տէօքմէճեան, 322 էջ:

Նարեկ. Ողբերգութիւն Ա. Գրիգոր Նարեկացիի 1926, աշխարհաբարի վերածեց **Խաչատուրեան Գ.**, Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, 549 էջ:

Շտիկյան Ա., «Գրիգոր Նարեկացու աշխարհաբար թարգմանությունները», [http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20\(antip\).pdf](http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20(antip).pdf):

Չօպանեան Ա. 1895, Ծաղիկներ միստիքական գրականութեան, «Ծաղիկ» ազգային, գրական եւ քաղաքական կիսամսեայ հանդէս, խմբագրապետ **Չօպանեան Ա.**, Կ. Պոլիս, տպագրութիւն Ն. Ճ. Արամեան, Նոր շրջան, Յանելուածական թիւ, էջ 112–126:

Չօպանեան Ա. 1924, Դէմքեր, հտ. Ա, Փարիզ, Գեղարուեստական տպ., 224 էջ:

Չօպանեան Ա. 1929, Դէմքեր, հտ. Բ, Փարիզ, Մասիս տպ., 190 էջ:

Սբ Գրիգոր Նարեկացի 2019, Մատենան ողբերգութեան, աշխարհաբար թարգմանությունը եւ ներածությունը՝ **Արամեան Մ.**, Երևան, «Վէմ» կրթամշակութային հիմնադրամ, 462 էջ:

Սբ. Գրիգոր Նարեկացի 2012, Մատյան ողբերգության (Նարեկ), գրաբարից թարգմանեց **Խերանյան Մ.**, Ա. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 728 էջ:

Սբ. Գրիգոր Նարեկացի 2013, Նարեկ, Աղթամատենան, գրաբար բնագրի հանդիպարողությամբ՝ արդի հայերէնի փոխադրությունը՝ **Պետրոսյան Ա.**, Երևան, ՎՄՎ-պրինտ, 640 էջ:

Սուրբ Գրիգոր Նարեկացի 2016, Մատյան ողբերգության, փոխադրությունը՝ **Ոսկանյան Մ.**, Երևան, «Լուսաբաց» հրատ., 425 էջ:

Григор Нарекаци 1977, Книга скорби, перевод **Гребнев Н.**, Ереван, изд. «Советакан грох», 493 с.

Григор Нарекаци 1984, Книга скорбных песнопений, перевод **Миль Л.**, изд. «Советакан грох», Ереван, 320 с.

Григор Нарекаци 1985, Книга скорбных песнопений, перевод с древнеармянского **Микушевич В.**, Москва, изд. «Художественная литература», 350 с.

Григор Нарекаци 1988, Книга скорбных песнопений, перевод с древнеармянского и комментарий **Дарбинян-Меликян М.** и **Ханларян Л.**, Москва, изд. «Наука», 407 с.

Джанполадян М. 2012, «Книга скорби» Нарекаци в русских переводах и критике. Монография, Ереван, изд. ЕГУ, 145 с.

Grigor Narekatsi 2001, The Book of Sadness, translation and introduction by Khachatoorian K., Yerevan, Nairi, 504 p.

Grigor Narekatsi 1977, Lamentations of Narek, translated from the classical Armenian by Kudian M., London, Mashtots press, 96 p.

St. Grigor Narekatsi 2001, Speaking with God from the Depths of the Heart. The Armenian Prayer Book of St. Gregory of Narek. English translation and introduction by Samuelian T., Yerevan, Vem Press, 761 p.

Grégoire de Narek 2012, Le Livre de Lamentation, introduction, traduction et notes par Mahé A. et J.- P., Erevan, «Nairi», 532 p.

Grégoire de Narek 1961, Le Livre de Prières, introduction, traduction de l'arménien et notes par Kéchichian I., Paris, bd de Latour-Maubourg, 555 p.

Marcel L.-A. 1953, Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne, Paris, imprimerie "Araxes", 140 p.

Gregorio di Narek 2016, IL Libro della Lamentazione. Traduzione e note di Zekiyan B. L., Jerevan, Antares, 212 p.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

ԱՊՐԵՍՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր¹ Գրիգոր Նարեկացի, «Մատենանոցի Պատմության Պատմություն», աղոթագիրք, հիշատակարան, թարգմանական խնդիրներ, քերականական տարբերություններ, կրոնական բանաստեղծություններ:

«Մատենանոցի Պատմության Պատմություններից ակնհայտ է, որ Գրիգոր Նարեկացու երկը՝ հայ և համաշխարհային գրականության ամենաարժեքավոր ստեղծագործություններից մեկը, թարգմանիչները ներկայացրել են որպես միատիպականության և բանաստեղծականության գլուխգործոց: Բանաստեղծ և հոգևոր թարգմանիչները տարբեր տեսանկյուններից են լրացրել ու հարստացրել թարգմանությունները: Աշխարհական թարգմանիչները բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործության գեղագիտական կողմն են արտահայտել՝ փոխանցելով նրա բանաստեղծական խոսքի հարստությունը, ինքնահնար դարձվածները, բառերի հաճախ նուրբ ու բազմի-

մաստ կիրառությունները: Հոգևոր թարգմանիչները հոգևորական Նարեկացու երկի աստվածաբանական բովանդակության խորքն են ներկայացրել՝ սուրբգրային հարասությունների մեկնությամբ, արտահայտությունների՝ կրոնական, խորհրդանշական իմաստների ծավալմամբ: Այդուհանդերձ, երկու դեպքում էլ թարգմանությունները հաջողվել են, քանի որ թարգմանիչները ձեռնամուխ են եղել թարգմանական բարդ ու դժվարին աշխատանքին՝ հավատարիմ մնալով Նարեկացու տողին՝ գիրը՝ մարմնիս, և խոսքը՝ հոգուս տեղ:

ГРИГОР НАРЕКАЦИ И ПЕРЕВОДЧИКИ

АПРЕСЯН А.

Резюме

Ключевые слова: Григор Нарекаци, «Книга скорбных песнопений», молитвенник, колофон, проблемы перевода, грамматические различия, религиозные стихи.

«Книга скорбных песнопений» Григора Нарекаци – одно из ценнейших произведений армянской и мировой литературы – была представлена переводчиками как мистический и поэтический шедевр. В процессе работы поэты-переводчики и переводчики-богословы дополняли и обогащали свои переводы. Поэты-переводчики передавали эстетическую сторону творчества поэта, богатство его поэтической речи, тонкость и многозначность использованной лексики. Переводчики-богословы пытались воспроизвести богословскую глубину духовного содержания произведения Нарекаци, по-своему толкуя его библейские образы, отражая в переводе авторскую символику и религиозные откровения. Важно отметить, что переводчикам гениального творения Нарекаци удалось сохранить верность оригиналу, поскольку «книга эта суть моя, и слово это суть душа моя» (Г. Нарекаци).

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՎ ՊԱՆԴԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Քանալի բառեր¹ Ավետիք Իսահակյան, ստեղծագործության մոտիվներ, մայրական սեր, հայրենիք, պանդխտություն, որդիական պարտք, կարոտ:

Ներածություն

Ավետիք Իսահակյանը պաշտել է մորը՝ Ալմաստ Ղլտճյանին, որին շրջապատը հարգանքով ու սիրով կոչում էր Ապլա (մեծ մայրիկ): Իսահակյանը ընտանիքի կրտսեր զավակն էր և բնականաբար, Ապլայի կողմից ամենասիրվածը: Հենց մորից է նա լսել իր կյանքի առաջին հեքիաթները, երգերը, գրույցներն ու բանաստեղծությունները: Նա շատ է սիրել, մանավանդ ծնունդ և երեկոները, պապենական տան, բուխարու առաջ լսել Ապլայի վառ երևակայության ծնունդ պատմածները... Եվ քանի որ հայրը վաղ էր մահացել, ապա որդիական սիրո ողջ զգացումները նա նվիրել է իր մորը:

Հայտնի է նրա թևավոր խոսքը. «Հենց միայն մայր ունենալու համար արժի աշխարհ գալ»:

Իսահակյանի վաղ շրջանի «Բալես ունի հնդու-մաթա...» (1892 թ.) բանաստեղծության հիմքում ընկած է Ապլայից լսած օրորոցայինը, զարմանալի ինքնաբուխ ու ազգային ոգով կերտված մի հյուսվածք: Օրորոցային երգով հարուստ հայ բանահյուսության ու բանաստեղծության պատմության մեջ այս երկն ունի իր ուրույն տեղը.

Բալես ունի հնդու-մաթա,
Ոսկի օրոցք, ատլաս ծածկոցք,
Պոպոն՝ ղարդար, նըխշուն՝ բալա,
Պաճիկ կենես... Օր-օր, լա, լա,
Նանիկ կենես, նանի՛, դա՛ր-դա՛ր,
Աչքդ ու ունքդդ – աստղ ու կամար:

* Հոդվածը ներկայացվել է 18.06.21, գրախոսվել է 23.06.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Տորեկ եղավ, ոչխարն եկավ,
Ազիզ բալես քընած մընաց.
Վեր ե՛լ, բալա, անուշ ճըղա,
Տիտիկ արա՛, ծիծիկ մամա՛,
Պիծիկ-միծիկ տոտիկ արա՛.

Հո՛ւպպա, բալիկ, քունդ անուշ.
Շաքար ու նու՛շ, թուշդ անուշ:

Տարիներ շարունակ այս բանաստեղծության տեքստից անարդարացիորեն դուրս են թողնվել նրա ավարտի հետևյալ երեք տողերը.

Ջան Տիրածին, Աստվածածին,
Չար աչքեն, չարոցքեն
Ազատ պահե՛ս իմ բալես...¹

Եվ միայն Իսահակյանի ակադեմիականի առաջին հատորի տեքստում (կազմողներ՝ Ավիկ Իսահակյան և Անահիտ Վարդանյան) դրանք վերականգնվեցին:

Առանձին հետազոտության առարկա է երկերի կերտման վարպետությունը, երբ ստեղծվում է այնպիսի մի գործ, որ ոչնչով չի տարբերվում հայ բանասիրության դասական օրորոցային երգերից: Սկսած այս օրորոցայինից մինչև «Աբու-Լալա-Մահարի» պոեմում հնչող մորն ուղղված վսեմ տողերը, Իսահակյանի մայրական կերպարի հիմքում ընկած է պոետի մոր՝ Ապլայի ազնվաբարո ու գթասիրտ կերպարը: Սակայն ճակատագիրը, ասես մի անխնա ձեռքով պիտի տարիներ շարունակ բաժաներ որդուն իր պաշտելի մորից:

Եվ հենց այդ ճակատագիրն է Իսահակյանի պոեզիայում միահյուսում մայրական սիրո հետ և հայ մարդու ճակատագրի համար մի այլ շատ կարևոր՝ պանդխտության թեման, հաղորդելով դրանց դրամատիկ իմաստ և հումանիստական հնչեղություն: Այստեղ արդեն հանձինս մոր կերպարի՝ առաջ է մղվում սուրբ հայրենիքի՝ Հայաստանի հավաքական կերպարը ստեղծելու գաղափարը, և հանձին նրա զավակի կերպարի՝ աշխարհով մեկ սփռված, հայրենիքից հեռացած, հայ պանդուխտի հավաքական կերպարը, ինչը հենց Իսահակյանի երկերում հասավ իր գագաթնակետին: Եվ դա արվում է այն-

¹ Իսահակյան 2003, 69:

Իսահակյան Բ.

քան բնական, որ միայն իսկապես ժողովրդական բանաստեղծի, հայրենիքի գավակի՝ Իսահակյանի գրչի տակ կարող էր իրականանալ:

Ահա կարդում ենք ավանդապաշտ Շիրակի սրտից՝ Ալեքսանդրապոլից «դրսի աշխարհներ» ելած (սույն դեպքում Գերմանիա ուսման մեկնած) 18-ամյա Իսահակյանի առաջին բանաստեղծական ուղերձը պաշտելի մորը, որը սակայն վեր է սովորական քնարական բանաստեղծության հասկացողությունից, այն ողբերգական շեշտադրումներով կերտած մի երկ է՝ ընդհանրապես հայ մարդու ճակատագրի վերաբերյալ.

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքես հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ազիզ մորես բաժանվել եմ,
Տըխուր-տըրտում, քուն չունիմ:

Սարեն կուգաք, նխշուն հավքեր,
Ա՛խ, իմ մորըս տեսել չե՛ք.
Ծովեն կուգաք, մարմանդ հովե՛ր,
Ախրը բարև բերել չե՛ք:

Հավք ու հովեր եկան կըշտիս,
Անձեն դիպան ու անցան.
Պապակ-սըրտիս, փափագ-սըրտիս
Անխոս դիպան ու անցա՛ն:

Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան.
Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,
Թըռնիմ մոտըդ, մայրի՛կ ջան:

Երբ քունըդ գա, լուռ գիշերով
Հոգիդ գըրկեմ, համբույր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով,
Լա՛մ ու խընդա՛մ, մայրի՛կ ջան...²

(1893)

² Իսահակյան 2003, 99:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Յուրաքանչյուր հայի համար այս բանաստեղծությունը մարմնավորում է ոչ միայն մոր հանդեպ տածած որդիական սիրո զգացումը, այլև աշխարհով մեկ ցրված հայ պանդուխտ մարդու կարոտը, սերն ու հավատամքը առ հայրենի եզրը:

«Մայրիկիս» բանաստեղծությունը հիմքը դրեց մեր ուսումնասիրած թեմայով գրված Իսահակյանի երկերին, նրան հաջորդեցին «Մայրս տեսավ ինձ շա՛տ տխուր...», «Մայրի՛կ, նայիր, արևն ինչպե՛ս...», «Մայրիկ, հիվանդ եմ, սիրտըս քրքրված», «Էդ ի՛նչ կըրակ կանես, մերի՛կ», «Դարդը հետս է, հետըս կուգա...», «Ա՛խ, մի սիրտ լիներ մաքուր սիրով լի...» բանաստեղծությունները, որոնք «Մայրիկիս» կողքին հավասար տեղ կարող են գրավել, ինչպես նաև «Կըտեսնեմ, ահա – լուռ երեկոյին...» բանաստեղծությունը: Այն գրվել է 1911 թվականի օգոստոսի 13-ին, Կոստանդնուպոլսում, երբ նոր էր սկսվում Իսահակյանի «մեծ պանդխտության» շրջանը, դեռևս մոտ ու անջնջելի էին հեղինակի հիշողության մեջ մոր դիմագծերը, ում գրկին նա թողել էր իր միակ մեկ տարեկան որդուն, դեռևս նրա աչքի առջև էր ուղիներով շրջապատված հայրական շենը,...

Իսկական պանդխտությունը, որ պիտի տևեր երկար ու ձիգ տարիներ, նոր էր սկսվում...

Սակայն հենց այս բանաստեղծության մեջ, առաջին հայացքին առնչվող լոկ մայրական սիրո թեմայի հետ, Իսահակյանը կարողանում է բացահայտել ոչ միայն իր մոր, այլև հայ ժողովրդի մտածողությանը հատուկ մարդասիրությունն ու գթասրտությունը, որ այսօր էլ առանձնացնում են հայ ժողովրդին աշխարհի բազում ժողովուրդներից, ում թե բախտն է ավելի ժպտացել, թե ուժն է ավելին եղել, սակայն այդպես էլ չեն կարողացել հասնել Իսահակյանի ակնարկած մարդասիրության աստիճանին: Ինձ երբեմն թվում է, թե եթե աշխարհի մի որևէ անկյունում կազմակերպվեր գիտաժողով՝ ուսումնասիրող այս կամ այն ժողովուրդների ազգային ամենացայտուն հատկանիշները, որոնցով ազգերը տարբերվում կամ նմանվում են իրար, այս երկը մենք՝ հայերս, կարող էինք ներկայացնել որպես մեր ժողովրդի «արյան բաղադրություն»:

Ունկնդրենք մենք էլ Ապլայի աղոթքին, որն ընդամենը մի քառատող է կազմում, սակայն իր գրության օրից մինչև ներկա օրը չի կորցրել ո՛չ իր իմաստը, ո՛չ իր խրատը, ո՛չ էլ իր արդիական հնչեղությունը.

Կըտեսնեմ ահա, - լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օջախեն.

Իսահակյան Բ.

Եվ ուռիներս մարմանդ կօրորվին,
Ծղրիդը կերգե անտես խորշերեն...
Մեղմ ճրագի տակ նստել է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիկս գրկին. –
Մուշ – մուշ քնել է մանկիկս՝ անդորր.
Ու աղոթք կանե մայրիկս՝ լին. –
«Ամենեն առաջ թո՛ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամփորդի.
Ամենեն հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛զ, իմ խեղճ որդի՛, իմ պանդուխտ որդի»:
Անո՛ւշ ծուխ կելնի իմ հոր օջախեն,
Մայրս կաղոթե՛ մանկիկս գրկին.
Ծղրիդը կերգե անտես խորշերեն
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին³:
(1911)

Ապլայի աղոթքի հիմքում ընկած է մի մտածողություն, որը թերևս հատուկ է զուտ հայ մորը, որի զավակները սփռված են աշխարհով մեկ, մորը մի ժողովրդի, որը երբեք բռնությամբ և ուժով չի հարթել իր ճամփան, և որը Աստծո ողորմությանը նույնիսկ սովոր է սպասել վերջինը: Սա և՛ ազգի առաքինությունն է, և՛ ուժը: Այսպես ենք ապրել մենք երեք հազար տարի...

Տոգորված քրիստոնեության գաղափարով, Իսահակյանի մոտ աղոթքն ունի դարերի խորքից եկած իմաստություն, այն վկայությունն է հայ ժողովրդի խաղաղասեր ու արդարամիտ էության:

Այս, ինչպես և «Մայրիկիս» բանաստեղծությունը, ինչ խոսք, նոր որակ էին բերում հայ քնարերգության ավանդական այս թեմաներին՝ մայրական սիրուն ու պանդուխտի երգերին, բարձրացնում էին դրանք մի նոր աստիճանի՝ հաղորդելով համամարդկային հնչեղություն: Պատահաբար չէ, որ այս երկու գործերը մեծ ոգևորությամբ թարգմանել է XX դարի ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը: Նա իր նամակներից մեկում գրում է, որ ինքը միշտ հիշում է, որ «Իսահակյանը – պանդուխտ բանաստեղծ է» և այս հանգամանքը մարդկայնորեն ևս հուզում է նրան, չէ՞ որ վերջին հաշվով աշխարհի բոլոր մեծ բանաստեղծները, ինչ-որ մի տեղ հարազատ հոգիներ են:

³ Իսահակյան 2003, 388:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Մոր և կյանքից հոգնած ու հիասթափված զավակի երկխոսությունն է ընկած «էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՛կ» բանաստեղծության հիմքում: Գթասիրտ մայրը ջանում է «դարման» գտնել տանջվող զավակին, բայց ապարդյուն, նրա խոցված «սրտի վերքին» սպեղանի չկա...

- էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՛կ:
- «Բալաս, վերքիդ դեղ կեփես»:
- Ա՛խ, իմ վերքը սիրտս է մերի՛կ,
Դեղ ու դարմանդ ի՞նչ անես.

Սրտիս վերքը խորն է, մերի՛կ,
Լավի դարձի հույս չըկա.
Մի՛ քըրքըրիր սիրտըս, մերի՛կ.
Խոր – խոցերուս ճար չըկա⁴:

Այս, ինչպես և «Մայրի՛կ, նայի՛ր, արևն ինչպե՛ս» բանաստեղծություններում թախծալի գրույցը մոր և որդու միջև Իսահակյանի հոգուց էր գալիս, չէ՞ որ ինքը՝ բանաստեղծը, իր կյանքի փորձություններին ու դժվար պահերին մեկ անգամ չէ, որ անկեղծ գրույցի է նստել մոր հետ, երբ ինքը գտնվում էր հայրենի Ալեքսանդրապոլում կամ Ղազարապատ գյուղում: Իսկ այդպիսի պահերն այնքան հազվագյուտ էին: 18 տարեկանը չբոլորած, Իսահակյանն ուսման է մեկնում Գերմանիա և երեք տարի կտրված է հայրենի տնից, մոր աջից: Տասնիննամյա պատանին դժվար պահերին մոր կարոտի զգացումները հանձնել էր իր միակ ընկերոջն ու խոստովանատեղին՝ իր «Հիշատակարան» գրքին: Ահա նա գրում է Լայպցիգում. «Ա՛խ, Ապլայիս մոտը լինեի, կնստեր մոտս ու միշտ ճակատս կշոյեր ու ամենաազիզ կտորը ինձ կբերեր ու գաղտնի կուտար: Ա՛խ, Ապլա ջան, Ապլա՛ ջան»⁵:

Հենց Լայպցիգում նա գրում է քնարական բանաստեղծությունների շարքը՝ կազմված 12 հատվածներից, որոնք զետեղվել են «Հիշատակարանի» 1894 թ. գրառումներում: Սա ևս մի նոր շարք էր Իսահակյանի ստեղծագործությունում, արձակի և չափածոյի զուգադրությամբ, որն սկսվում է մորն ուղղված խոստովանանքով: Ահա մի հատված այդ արձակ բանաստեղծությունից.

«...Ես մենակ եմ, մայրի՛կ ջան, ինձ ընկե՛ր եղիր, թև ու թիկունք եղիր – դու ժայռի պես ամուր ես, թո՛ղ մամռի պես կրծքիդ կանիմ, մայրի՛կ ջան:

⁴ Իսահակյան 2003, 151:

⁵ Իսահակյան 1977, 158:

Իսահակյան Բ.

...Կգամ, կգամ շոտով, թռչնից թև կառնեն, կգամ, մայրի՛կ ջան, քեզ մոտ կգամ – գրկիր ինձ. – սանձիր ձիս, կապիր գրքերս թամբին, կապիր թուրս մեջքիս – համբուրիր ինձ, մայրի՛կ ջան»⁶:

«Հիշատակարանի» այս շարքում է հետևյալ գողտրիկ բանաստեղծությունը, որը երբևիցե չի զետեղվել նրա պոեզիայի հատորներում, սակայն իր ավարտուն գեղարվեստական կառուցմամբ, ասելիքով կարող էր դասվել Իսահակյանի լավագույն քնարական գործերի շարքում.

Մայրի՛կ, դու իմ փոքր հասակում,
Երբ ես քո կրծքում վառ աստղիկի պես
Ժպտում էի ու ձեռքս մեկնում,
Դեպի երկինք՝ աստղերը բռնելու,
Դու միշտ ասում էիր. – քու աստղը բռնիր,
Որ հեռվում, հեռվում պայծառ շողում է...
Ես այն օրվանից նազելի՛ մայրիկ,
Իմ աստղն եմ որոնում անհուն երկնքում,
Ես որոնում եմ ու չեմ գտնում⁷:

Նոր հայրենիք վերադարձած երիտասարդ բանաստեղծին, որպես ազգային-ազատագրական պայքարի գործչի, 1896 թ. մայիսին ցարական իշխանությունները ձերբակալում են և մեկ տարով մեկուսացնում Երևանի նահանգային բանտում:

Զանգվի ափին ընկած խաչածն բերդում 21-ամյա որդուն է ուղղում նոր գարնանամուտին իր խոսքերը պոետի մայրը. «Ա՛խ, կանանչներ, դուք արևերես ելաք, Յարաբ բալես ե՛րբ կելնի բանտեն...»: Այս հարցումը Իսահակյանը որպես բնաբան դրել է «Կռունկները շարա՛ն-շարա՛ն...» բանաստեղծությանը: Որդեկարոտ մայրը բնությանն է հարցնում որդու ճակատագրի մասին, բնության հետ է կիսում իր տագնապն ու ցավը.

...Գարունն եկավ, - արևերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՛խ, յարաբ ե՛րբ ազիզ բալես
Կելնի բանտեն, կռունկներ...
Կռունկները շարա՛ն – շարա՛ն
«Կը՛ռռ, կը՛ռռ» կանչին ու եկան,

⁶ Իսահակյան 1977, 197:

⁷ Իսահակյան 1977, 198–199:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

«Գարունն եկա՛վ, գարունն եկա՛վ»...

Անուշ կանչին ու անցան⁸...

1897

Այսպես նա շոայլ շաղ է տալիս իր քնարական հրաշալիքները՝ հայ պոեզիայի «մայրական սիրո» հավերժ թեմային տալով իր եզակի, խորը մարդկային հնչեղությունը:

Նոր դուրս եկած Երևանի բանտից Իսահակյանին՝ արդեն ճանաչում գտած բանաստեղծին, «Երգերի ու վերքերի»⁹ հեղինակին, իշխանությունները մեկ տարով արքորում են Օդեսա: Եվ ճակատագիրը կրկին որդուն բաժանում է մորից: Իսահակյանի մայրը, այդ աստվածավախ կինը, նամակ է գրում Օդեսայի գեներալ-նահանգապետին որդու արքորի ժամկետի վերաբերյալ, որը «թյուրիմացաբար» տեղական իշխանությունները փորձում էին մեկից դարձնել երեք տարի, և իրազեկ պահում նրան դատական ատյանի նախնական վճռի մասին: Նորից սպասում, նորից անքուն գիշերներ: Իսկ Իսահակյանը գրում է հեռավոր Օդեսայից, հայացքը հառած իր հայրենիքին, իր սուրբ մորը.

Եվ հոգուս մեջ մի ձայն ծորեց,

Մի ձայն՝ քնքուշ, սուրբ սրտից. –

Ախ, այն մայրս էր, կանչում էր ինձ

Հայրենիքիս ափերից¹⁰...

Հաջորդ տարիներին Իսահակյանի կյանքը վճռորոշ կերպով կապված էր հայ ազգային-ազատագրական շարժման հետ: Երիտասարդ բանաստեղծ-քաղաքական գործչի ճամփան դժվարին էր ու տատասկներով ծածկված – սակայն նրա հայրենանվեր հոգու համար ընտրություն չկար: Եվ հենց հայրենասիրական գործունեության պատճառով, Իսահակյանին վիճակվեց տեսնել և քաշել թե՛ բանտ, թե՛ արքոր, թե՛ տարիներ ձգվող պանդխտություն:

Իսահակյանը հայ բանաստեղծներից առաջինն է պատկերում ազգային մարտիկի՝ հայ ֆիդայու դժվարին ճակատագիրը՝ 1900–1910 թթ. իր ստեղծած «Հայրուկի երգեր» շարքով, որը նա ստորագրում էր՝ «Հայ-գուսան» անվամբ:

Ազգային-ազատագրական պայքարի պոեզիայի հիմնական մոտիվներից մեկը դա մայրական սերն է, կարոտը՝ հայրենիքի ազատության համար

⁸ Իսահակյան 2003, 128:

⁹ Ավ. Իսահակյանի անդրանիկ գիրքը՝ «Երգեր ու վերքեր» բանաստեղծությունների ժողովածուն լույս է տեսել Ալեքսանդրապոլում, 1898 թ., «Գ. Սանոյան» տպարանում:

¹⁰ Իսահակյան 2003, 172:

Իսահակյան Բ.

մարտնչող զավակի հանդեպ: Այս տեսակետից հայ քնարերգության ոսկե էջերից է «Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս...» բանաստեղծությունը¹¹, հայրենի ժողովրդի ողբերգական ճակատագիրը ներկայացնող մի անմահ քերթվածք: «Որսկան ախպերը» ահա մոտ մի դար է, ինչ ներթափանցել է ամեն հայ մարդու հոգեկան աշխարհ, այդ երգը իրեն համարժեք հնչեղությունը գտավ նրա հիման վրա կերտած Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայի անմահ մեղեդիների մեջ.

– «Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս,
Սարի մարալ կըփնտրես,
Ասա՛, յարա՛բ դուն չըտեսա՛ր
Իմ մարալըս, իմ բալես:

Դարդի ձեռքեն սարերն ընկավ,
Իմ արևս, իմ բալես,
Գլուխն առավ, քարերն ընկավ
Իմ ծաղիկըս, իմ լալես»...

– «Տեսա, քուրի՛կ, նըխշուն բալեդ
Կարմիր-կանանչ է կապեր,
Սիրած յարի համբուրի տեղ
Սրտին վարդեր են ծըլեր»:

– «Որսկան ախպե՛ր, ասա, յարաբ
Ո՛վ է հարսը իմ բալիս,
Ո՛վ է գրկում չոր գըլուփսը
Իմ մարալիս, իմ լալիս»:

– «Տեսա, քուրի՛կ, դարդոտ բալեդ
Քարն է դըրեր բարձի տեղ,
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր յարի տեղ:

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,

¹¹ Ավ. Իսահակյանի բանաստեղծական այս գլուխգործոցի տեքստի հիման վրա աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը 1944 թ. գրել է իր «Երկրորդ սիմֆոնիան» («Ջանգերով սիմֆոնիա»):

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Ծաղիկներն են վրրան սրգում,
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ»¹²...
(1902)

Մեր պոեզիայի պատմության այս ամենաողբերգական երկերից մեկը՝ «Որսկան ախպերը» երգել են հայ ֆիդայական շարժման զորաղեկավարներից մինչև շարքային մարտիկը, մինչև Հայրենական Մեծ պատերազմի զինվորները... այդ դրդանջները գալիս են և այսօր խոսում հայ մարդու հոգու հետ, տոգորում նրան հայրենիքին նվիրվածության գերագույն զգացումով:

Կովկասում ապրած շրջանում Իսահակյանի հրատարակած լավագույն գրքերից մեկը՝ «Բանաստեղծություններ» (Բաքու) 1903 թ. ունի հետևյալ ընծայականը՝ «Անգին մորս՝ Ալմաստ Իսահակյանին նվիրում եմ բանաստեղծություններս»: Ժողովածուն բացվում է հենց մորը ձոնված «Գուցե իմ հեծանք, հառաչք և մրմունջ...» բանաստեղծությամբ, որն ավարտվում է հետևյալ տողերով.

Դու լըցրիր իմ մեջ ծովի չափ մեծ սեր –
Այրվիլ, որ լույս տալ ամբոխի համար.
Ընկնիլ փոթորկի, հըրաբուխի մեջ,
Ամբոխի համար, Աշխարհի համար...
Ահա՛ իմ սիրտը... Նայիր դու մեկ-մեկ.
Ընդունի՛ր մայր իմ, օրհնի՛ր ինձ, մա՛յր իմ...

Գրքում բազմաթիվ են մորն ուղղված բանաստեղծությունները, ընդամին նրանցից մի քանիսը այլ ժողովածուներում հետագայում չեն զետեղվել: Այո՛, մինչ վտարանդիության սկիզբ ընկած տարիները, այն միակ ու անկրկնելի շրջանը եղավ, երբ մայր ու որդի իրար կողքի էին, սակայն ճակատագիրը նորից պիտի նրանց բաժաներ 1906 թ., երբ Իսահակյանը մոտ մեկ տարի ժամկետով բանտարկվեց Թիֆլիսի տխրահռչակ Մետեխի բերդում:

Եվ հենց այդ շրջանում է նա գրում իր ամենահուղիչ մարդասիրական երկերից մեկը.

Երագիս տեսա, որ մայրս՝ թշվառ,
Շեն պատերի տակ, մեծ փողոցներում,
Ա՛յնպես դողդոջուն, հիվանդ ու անճար,
Անց ու դարձողին ձեռն էր կարկառում:

¹² Իսահակյան 2003, 269:

Իսահակյան Բ.

Երազիս տեսա, որ իմ մայրը՝ ծեր,
Յնցուտիներով պատած մութացկան,
Եվ մարդիկ՝ անգուրթ, անտարբեր, անսեր,
Զբոսնում էին և հրում նրան:

Եվ երազիս մեջ ես դառնն լացի,
Ու ցավից զարթնած՝ լաց եղա անքուն. –
Ա՛խ, որքա՛ն մայրեր՝ խեղճ, առանց հացի,
Մեր շուրջն են դողում ու մենք չենք զգում¹³:
(1908)

Վարպետի որդին՝ Վիգեն Իսահակյանը, հիշում էր, որ Եվրոպայում ապրած տարիներին բանաստեղծը մի առանձին սիրով ու գթասրտությամբ էր մոտենում հայտնի քաղաքների՝ «շեն պատերի տակ» կույզ եկած միայնակ ու ծեր մայրերին, եղած դրամը տալիս նրանց, հուզվում ու աչքերը լցվում էին. «Մայրերը սրբություն են, - ասում էր նա, - ինչ ազգի էլ պատկանեն»: Այսպես, Ապլայի շնորհիվ հարստանում է համաշխարհային պոեզիան...

Հաջորդ բաժանումը եղավ ճակատագրական. 1911 թվականի հունվարին բանաստեղծը պիտի հրաժեշտ տար Ալեքսանդրապոլի հայրական տանը, իր մեծագույն պաշտամունքին՝ Ապլային, և այլևս նրանք չէին հանդիպելու...

Պանդխտության ճամփաները բաժանեցին բանաստեղծին մորից: Մայրը նրան պիտի հայտնվեր արդեն միայն երազներում: Ինչ-որ մի հանգուցում, բնականաբար իրար են միահյուսվում մոր և երազի, հայրենիքի և երազի թեմաները: Պանդուխտ մարդը էլ ուր, եթե ոչ երազում կարող էր տեսնել մոր ու հայրենի եզրի նվիրական պատկերը, և գնալով երազը դառնում է թե՛ Իսահակյանի կյանքի, թե՛ նրա պոեզիայի անբաժանելի մասնիկը, մշտական ուղեկիցը:

Ոչ մի բանաստեղծ այդքան գեղեցիկ ու միաժամանակ այդքան տխուր երազներ չի հյուսել իր երկերում, ինչպես Իսահակյանը: Կյանքի մայրամուտին՝ 1955 թ. հոկտեմբերի 30-ին, ծննդյան 80-ամյակի օրը, Երևանում Պետոպերայի դահլիճում կազմակերպված հանդիսավոր նիստին ասված իր ելույթում, բանաստեղծը խոստովանել է. «Ես երազում էի միշտ ապրել Շիրակում՝ հորս տանը, մորս մոտ. և երգել իմ Շիրակը և նրան իմաստավորող ժողովրդին: Բայց իմ այդ համեստ երազը չկենսագործվեց...»¹⁴:

¹³ Իսահակյան 2003, 360:

¹⁴ Իսահակյան 1977, 291:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Կարելի է ասել, որ այդ փափագն իրականանում էր պանդուխտ բանաստեղծի միայն երազներում:

Եվ հենց այս շրջանում, երբ առավել ուժգնանում էր նրա կարոտը մոր հանդեպ, հայրենիքի հանդեպ, երբ նա գիտակցում էր, որ գուցե այլևս նրանք չեն հանդիպելու – մայրական սիրո և պանդխտության թեման հասնում է Իսահակյանի պոեզիայում առավել վերսլաց բարձունքների:

Դրա փայլուն օրինակներից մեկը «Երազ» բանաստեղծությունն է.

ԵՐԱԶ

Օտար երկիր էր գնացել որդին,
Եվ անցել էին տարիներ տրտում.
Մայրն սպասում էր տենչալի դարձին,
Եվ այսօր որդին ուրախ դարձավ տուն:

Իրար գիրկ ընկան անհուն կարոտով
Եվ համբուրվեցին երկար ու երկար.
Լաց եղան մեռած հորը հիշելով
Եվ ցնծության մեջ մոռացան աշխարհ:

Վառեցին նորից օջախն հայրենի,
Խրճիթը լցվեց խնդրությամբ անդորր.
Խոսեցին անցած օրերի մասին,
Ապա քուն մտան անհոգ, բախտավոր:

Երբ մայրը զարթնեց, սուկումով տեսավ-
Օջախը՝ հանգած, խրճիթն՝ ամայի.
Եվ որդի՛ն, որդի՛ն, կաթոգին որդի՛ն
Նորից բանտի մեջ՝ զարկված շղթայի¹⁵...

1918 թվականին, Ժնևում Իսահակյանը գրել է «Հիշատակարանում». «Ահավոր ուժ է հայրենիքի սերը... Մոր նման միշտ սիրում եմ, միշտ կարոտը թարմ է և միշտ անհագուրդ... Մոր և հայրենիքի սեր – հավիտյան նոր, հավիտյան թարմ, կուսական, անձանձիր...»¹⁶:

Օտարության մեջ էր, հեռավոր Շվեյցարիայում, երբ առավ մոր մահվան բոթը: Սակայն, օ՛, զարմանք, բանաստեղծը կանխազգացել է այդ լուրը, այդ պես է լինում՝ մեծ, սիրող հոգիների մոտ, երբ ինչ-որ գերբնական զգայնությամբ

¹⁵ Իսահակյան 2003, 410:

¹⁶ Իսահակյան 1977, 330:

Իսահակյան Բ.

յամբ նրանք կանխատեսում են իրենց մերձավորի կամ սիրելիի հետ կապված որևէ արտակարգ եղելություն, անգամ եթե նրանց բաժանում են հազարավոր կիլոմետրեր:

Ահա ինչ է գրել Իսահակյանը «Հիշատակարանում» 1919 թվականի հուլիսի 14-ին. «Լուսադեմին երազ տեսա, մայրս ժպտում էր, իր սովորական տխուր, վշտահար ժպիտը աչքերի մեջ. կարծես ձեռքեր չուներ, արմունկից սկսած. այդպես թվաց. զարթնեցի. մի տեսակ զգացում ունեի հոգուս մեջ, որպիսին երբեք չէի ունեցել մորս երազում տեսնելու դեպքում, մի խորհրդավոր, տարօրինակ զգացում (և մորս շատ վաղուց չէի տեսել), այդ զգացումի ազդեցության տակն էի, երբ քիչ անցած, առավոտ, անկողնուս մեջ, լսեցի մորս մահը...

Ջարմանալի խորհրդավոր զուգադիպում...

...Մորս մահից հետո – աշխարհը դատարկվեց աչքիս. ամեն բան թվում է ունայն, սուտ, միամիտ, անցավոր, թռչող, խաբեական...»¹⁷:

Բանն այն է, որ հարազատներն իմանալով, թե ինչ սեր է տաժել Ավետիքը մոր հանդեպ, բանաստեղծին Ապլայի վախճանի լուրը միանգամից չեն հայտնել, այլ մի որոշ ժամանակ անց: Հայտնի է, որ այդ բոթն առնելուն պես բանաստեղծը օրեր շարունակ ծանր ապրումների մեջ է եղել:

Այդ ապրումների ազդեցության տակ Իսահակյանը 1919 թ. հուլիսին ժնևում գրում է. «Ա՛խ, ասացին ինձ, թե մեռել ես դու...» բանաստեղծությունը.

Ա՛խ, ասացին ինձ, թե մեռել ես դու,
Մեռել ես վաղուց, մայրի՛կ, իմ հոգիս...
Մեռել ես, չըկաս... Ծածկել է հավետ
Անհուն խավարը դեմքըդ թախճանուշ,
Ու հող ես դառնում... Ավա՛ղ, այսուհետ
Քեզ չեմ տեսնելու, մայրի՛կ իմ քնքուշ...

Սակայն հանապազ, ինձ հետ անբաժան՝
Մի անհայտ տեղից, ինձ այնպես մոտիկ,
Գիշեր ու ցերեկ, ու ամեն մի ժամ,
Ամեն մի վայրկյան անձայր կարոտով,
Աչերդ լեցուն սիրով ու գթով՝
Անթարթ, անքթիթ հառել ես վրաս,
Սրտով, սրտակից,

¹⁷ Իսահակյան 1977, 339:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Մի՛շտ նայում ես ինձ, մի՛շտ նայում ես ինձ,
Մայրի՛կ, իմ հոգիս¹⁸...
1919 թ., հուլիս, Ժնև

Տասնիններ տարի առաջ նույն Շվեյցարիայում (Յուրիխում), Իսահակյանը գրել էր իր քնարական լավագույն երկերից մեկը (որը ժողովրդի սիրած երգը դարձավ): Սա մի անկեղծ խոստովանություն է՝ տոգորված ներքին պոռթկումով, որդիական սիրով.

Իմ այրող վշտից սիրտըս է մաշվել,
Կյանքըս է մաշվել, էլ ի՞նչս մնաց.
Լամ ու արցունքըս աղի-ծով դառնա,-
Միայն թե մայրըս վիշտս չիմանա:

Ա՛խ, գլուխըս առնիմ, ընկնիմ սարերը,
Զարկե՛մ քարե-քար, զարկեմ քարե-քար.
Սիրտըս գայլերին թող բաժին դառնա,
Միայն թե մայրըս մահս չիմանա¹⁹:
(1900)

Եվ ահա հեռավոր Շվեյցարիայում նա ստանում է մոր մահվան բոթը, պաշտելի Ապլայի, որին նա չէր տեսել երկար տարիներ ի վեր, այս ամենը շատ է տանջում բանաստեղծին և իր որդիական հրաժեշտը նա պիտի տար պոեզիայում, ստեղծելով մեկը մյուսին հաջորդող գլուխգործոցներ:

Իսահակյանի «Զորահավաք էր: Շտապ տուն եկավ...» բանաստեղծության մեջ մայրը, իմանալով որդու ռազմաճակատ մեկնելու լուրը, նրան հրաժեշտ տալիս ուշագնաց է լինում և երբ սթափվում է ու դիմացը տեսնում իր որդուն, նրան մի պահ թվում է, թե որդին արդեն գնացել ու ողջ-առողջ կովի դաշտից տուն է եկել: Ուշագնացության մի քանի վայրկյաններին նա վերապարում է և՛ որդու մեկնումը, և՛ պատերազմը, և՛ վերադարձը: Եվ տարաբախտ մայրն օրհնում է Աստծուն, որ պահեց իր զավակին, սակայն արդեն այդ օրինանքի մեջ տագնապալից հնչում են ապագա կորուստների դողանջները... Պատերազմը դեռևս առջևում է.

Զորահավաք էր: Շտապ տուն եկավ
Զինվորի զգեստ հագած մի տղա.

¹⁸ Իսահակյան 2003, 436:

¹⁹ Իսահակյան 2003, 241:

Իսահակյան Բ.

– Մայրի՛կ, ինձ օրհնի՛ր,- պատանին ասավ,-
ես էլ կովի դաշտ գնալու եղա...

Ուշաթափ ընկավ խեղճ մայրը թշվառ,
Եվ երբ ուշքն եկավ նորեն իր վրան,
Գրկեց զավակին պինդ, կարոտավառ,
Որպես թե վաղուց չէր տեսել նրան:

– Ա՛խ, ի՛նչ ուրախ եմ, փա՛ռք քեզ, աստված իմ,
Որ ողջ ետ դարձավ իմ անուշ որդին²⁰...

(1919)

Իսահակյանի մայրական օրհնանքը բխում է աշխարհի ամենաբարի սրտից: Իսահակյանը նույն գույն ու կարեկցանքն է տածում մայրական սուրբ հոգու առաջ և նույն ատելությունը՝ պատերազմների, բռնությունների, դարի խելահեղությունների հանդեպ: Հենց մայրական փխրուն հոգին է կրում մեծագույն տառապանքը, իր ազգի զավակներին հասած ծանր ճակատագրի համար, բայց նաև մեծագույն հավատը իր ազգի հարատևության համար:

Այդ տեսակետից բնորոշ է Իսահակյանի «Անպարտելի ոգին» պատմվածքը, ուր Եղեռնի ողբերգական իրականության հենքի վրա ցույց է տրվում մի պատկեր, թե ինչպես մի խումբ հայ մայրեր իրենց զավակներին անապատի ավազների վրա սովորեցնում են մայրենի այբուբենի տառերը: Մայրը խորհրդանիշն է մեր ժողովրդի հերոսական ու մաքառող ոգու:

«Երբ մի ժողովուրդ, - գրել է Իսահակյանը, կռվում է իր ազատության, գոյության համար, նա ապրում է, նա չի կորչում, եթե նույնիսկ նա պարտվում է մարտում, գոնե մնում է նրա հերոսական պատմությունը, որ սերունդներին ապրեցնում է, բարձրացնում, հերոսացնում և այդպիսով կորցրածը նորից ետ է առնում: Նա հաղթանակում է»²¹: Եվ մի՞թե այսօր էլ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ամենածանր հարվածը չհասավ հենց հայ մորը, սակայն նա է այն սյունը, որ դարձյալ պետք է հարատևության բարձրացնի իր աղետյալ ազգին, սերմանի նրա մեջ միայն հային հատուկ ապրելու զորեղ կամք:

Այսօր ևս Իսահակյանի պանդխտության թեմայով ստեղծված երկերը մի առանձին իմաստով են հնչում հայ մարդու անպարտելի ոգու հանդեպ:

²⁰ Իսահակյան 2003, 433:

²¹ Իսահակյան 1977, 335:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Հիրավի, այդպես կարող էր գրել միայն ինքը՝ պանդուխտ մարդը, այս տողերի հեղինակը.

Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վրրա
Իմ քարավանըս մեղմ կըղողանջե.
Կանգնի՛ր, քարավանս, ինձի կըթվա,
Թե հայրենիքես ինձ մարդ կըկանջե²²:
(1903)

Որ էլ որ գտնվել է Իսահակյանը, ինչ տրամադրության մեջ էլ որ չի եղել, նրա հայացքը միշտ ուղղված է եղել դեպի հայրենի տունը, դեպի այն սուրբ հողը, որն ամենաքաղցրն է աշխարհում: Ահա ինչ է նա գրում Փարիզում.

Երագիս մեջ Անին տեսա, -
Տեսա մեռած մայրիկիս,
Ինչպես մանուկ գիրկն ընկա,
Համբուրեցի մայրիկիս²³...
(1932)

Կամ թե Վենետիկում.

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինավուրց ի՛մ Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛մ Հայաստան,
Դո՛ւ, ավեր տեսիլների ստեղծագործ ի՛մ Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք ի՛մ Հայաստան²⁴:
(1921)

1926–1930 թթ. Իսահակյանը Խորհրդային Հայաստանում էր, երկար տարիների բաժանումից հետո նա պիտի տեսներ իր նոր շիվեր տվող հայրենի եզրը, իր այնքան կարոտած հարազատներին ու ընկերներին, բայց չկար մեկը, իր ամենապաշտածը, իր ամենասիրելին.

Ոտք եմ դնում հայրենական հարկը հին,
Հին որմերը խոսում են ինձ հոգեթով.
Աչքս եմ նետում մորս նստած անկյունին, -

²² Իսահակյան 2003, 287:

²³ Իսահակյան 2003, 476:

²⁴ Իսահակյան 2003, 444:

Իսահակյան Բ.

– Ու՛ր է մայրս ստեղծագործ իր ժպիտով²⁵...

(1926)

Նույն շրջանում գրված «Հայրենի ծուխը» բանաստեղծության մեջ նա անբեկանելի կարոտով վերհիշում է.

...Կապույտ երեկոն ա՛յնքան է խաղաղ,
Երգում է ծառից մի հավք սրտագոհ,
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Ծանոթ շավիղով քայլում է դանդաղ:

Ինձ տուն է կանչում ծայնը մայրենի,
Խաղըս թողնում եմ. երեկո է ուշ.
Գգվում է մայրս, ժպտում է քնքուշ,
Մի արևի պես, որ նման չունի²⁶:

Մեր ուսումնասիրած թեման մի առանձին հնչերանգ է ստանում նաև Իսահակյանի լեզբենդներում ու բալլադներում: Այս երկերում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, այնպիսի պատումներ, ուր նույնպես տիրապետող է դառնում մայրական սիրո, նրա առաքինության գաղափարը:

Ռոմանտիկ բանաստեղծը ստեղծում է երկեր, որոնց հիմքում ընկած է ժողովրդական այս կամ այն ավանդույթը: Այդպիսի երկերից է «Մայրը» (Շիրակի ավանդավեպ) (1907 թ.) չափածո լեզբենդը: Լեզբենդի հիմքում մի պարզ, մաքուր ժողովրդական ակունք ունեցող պատմություն է այն մասին, թե ինչպես չար հարսի ամենօրյա կռիվների, հորդորների ազդեցության տակ ճարահատյալ տղան համաձայնում է մորը անտառ տանել ու թողնել այնտեղ: Տունդարձի ճամփին որդու ականջին են հասնում մոր վերջին խոսքերը.

– Երթաս բարով, աստված քեզ հետ,
Ոտքըդ քարի թող չըգա.
Տղա՛ս, վերցրո՛ւ պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կըգա²⁷:

«Մոր սիրտը» (Հայկական ավանդավեպ) լեզբենդի (1919 թ.) հիմքում ևս ընկած է հայկական մի հինավուրց զրույց, պարզ ու մատչելի, բայց անհուն

²⁵ Իսահակյան 2003, 463:

²⁶ Իսահակյան 2003, 463:

²⁷ Իսահակյան 2014, 18:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

մարդկային ու ցնցող: Ապացուցելու համար, որ մոր սիրտը աշխարհի ամենաբարին է ու գթառատը, որ մոր բարոյական բարձունքին ոչ մի զավակ չի կարող հասնել, հարկավոր չէ կարդալ առանձին խոհական տրակտատներ կամ հատուկ սոցիոլոգիական ուսումնասիրություններ կատարել, բավական է կարդալ Իսահակյանի այս 32 տողանոց լեգենդը և հիշել նրա եզրափակիչ տողերը.

Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կըտար
Սիրտը՝ ձեռքին,
Ուտը սահեց, ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
— Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չըցավա՞ց²⁸...

Ժամանակին այս երկը խորապես ցնցել է չիլիացի բանաստեղծ Պաբլո Ներուդային, ով հանդիպել է Ավետիք Իսահակյանի հետ Երևանում 1956 թվականին: Նման երկ կարող էր ստեղծել միայն այն հեղինակը, այն մարդը, որն իր մոր կերպարն ամեն ինչից վեր է դասել, համարել գերագույն սրբություն: Հենց այդպիսի հեղինակ էր ինքը՝ Իսահակյանը, մայրական սիրո մեծագույն երգիչը հայ պոեզիայում:

Կարելի է ասել մինչև խոր ծերություն, մինչև կյանքի վերջին օրերը շենշող ու կենդանի է եղել բանաստեղծի սերը մոր հանդեպ: Իր ստեղծագործական ուշ շրջանի ծոցատետրերից մեկում մեծ սիրերգակը թողել է հետևյալ գրառումը. «Աշխարհիս ամենագեղեցիկ բանը մոր աչքերն են»:

Մայրական սիրո թեմայով Իսահակյանի երգերը խոր արձագանք էին գտնում, բերում էին հոմանիզմի հուժկու ավանդներ, որոնք իրենց արտացոլումը գտան առաջին հերթին Հովհաննես Շիրազի ստեղծագործության մեջ:

Մեր խոսքը կցանկանայինք ավարտել Իսահակյանի «Պանդուխտ որդին» (1902 թ.) բալլադով, ուր լավագույնս միահյուսված են մայրության ու պանդխտության թեմաները.

²⁸ Իսահակյան 2014, 35:

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Դարդը՝ սըրտիս, աղքատ ու խեղճ, ցուպը ձեռիս, գլխակոր,
Շա՛տ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծըռած, միտքըս շվար ու մոլո՛ր,
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսա մանկույթ ընկերիս.-
Ա՛խ, ընկեր իմ, կարոտ սրտով նըրա առաջ վազեցի,
Ասի.-«Բարո՛վ, անգի՛ն ընկեր, չե՛ս ճանաչում դուն ինձի»:
-Ախրը ես շա՛տ փոխվեր էի... չըճանաչեց նա ինձի:

Յուպը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
Տեսա յարըս վարդը ձեռին՝ մենակ կանգնած դռան մոտ.
Ասի.-«Քուրիկ, ազիզ տեսքիդ արժանացա ես բարով...»:
Նա էլ ինձի չըճանաչեց...- աղքատ էի ու փոշոտ...

Դարդը սրտիս հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորս.
Ասի.- «Նանի, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր կընդունե՞ս»:
Ա՛խ, մերի՛կ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց,-
«Ա՛խ, բալա՛ ջան, դարիք բալա՛, էդ դո՛ւն ես...»²⁹:

(1902 թ., Շուշի)

Պատահաբար չէ, որ այս բանաստեղծությունը, ինչպես և մեր գրվածքում բերված բոլոր երկերը, առանձնապես սիրված են մեր ժողովրդի կողմից: Քանզի Իսահակյանի քնարերգության լարերը ուղիղ խոսում են հարազատ ժողովրդի սրտի հետ: Մայրական սեր, որդիական սեր, պանդուխտի սեր՝ հայրենյաց եզրի հանդեպ, - սրանք ոչ միայն զգացմունքներ են, այլև հայ ժողովրդի պատմությամբ պայմանավորված վսեմ ու առանձին խորհրդանիշներ են, առավել բնորոշ հայ մարդուն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իսահակյան Ավ. 2003, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 1, Երևան, «Գիտություն», հրատ., 848 էջ

Իսահակյան Ավ. 1977, «Հիշատակարան», Երևան, «Հայաստան» հրատ., 477 էջ:

²⁹ **Իսահակյան** 2014, 15:

Իսահակյան Ավ. 1977, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. V, Երևան, «Սովետական գրող», 490 էջ:

Իսահակյան Ավ. 2014, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 340 էջ:

ТЕМА МАТЕРИНСКОЙ ЛЮБВИ И СКИТАЛЬЧЕСТВА В ПОЭЗИИ АВЕТИКА ИСААКЯНА

ИСААКЯН Б.

Резюме

Ключевые слова: Аветик Исаакян, мотивы творчества, материнская любовь, родина, изгнанничество, чужбина, тоска.

В поэзии Исаакяна тема материнской любви занимает одно из центральных мест.

Образу матери посвящено множество лирических стихотворений поэта: «Моей матери» (пер. А. Блока), «Что над огнем ты варишь, мать?» (пер. А. Блока), «Колыбельная» (пер. А. Блока), «Караван мой бренчит и смеется» (пер. А. Блока), «Мне грезится: вечер мирен и тих...» (пер. А. Блока), «Сон» (пер. А. Яшина), «Мне сказали: «Давно умерла твоя мать...» (пер. А. Ахматовой).

Помимо стихов, образу матери А. Исаакяном посвящены великолепные строки в поэме «Абул Ала Маари» (пер. В. Брюсова), а также в легендах и балладах: «Скиталец сын» (пер. В. Иванова), «Сердце матери» (армянское предание), «Мать» (Ширакское предание), «Сыновняя любовь», в рассказе «Непобедимый дух», а также в стихах более позднего периода: «Мать увидела меня – очень грустным...», «Смотри мама – как солнце...», «Печаль со мной, и со мной идет...».

Другой ключевой темой его поэзии была тема скитальчества – любви и тоски по далекой родине. Образ матери – Алмаст – часто олицетворяет образ родины поэта – Армению, а скиталец является олицетворением образа армянина – борца за освобождение родного народа от турецкого гнета.

THE THEME OF MATERNAL LOVE AND WANDERING IN THE
POETRY OF AVETIK ISAHAKYAN

ISAHAKYAN B.


Summary

Key words: Avetik Isahakyan, motives of creativity, maternal love, homeland, exile, foreign land, longing.

In Isahakyan's poetry, the theme of maternal love occupies one of the central places. Many lyrical poems of the poet are devoted to the image of the mother: "My Mother" (trans. A. Blok), "What are You Cooking over Fire, Mother?" (A. Blok lane), "Lullaby" (trans. A. Blok), "My Caravan is Jngling and Laughing" (trans. A. Blok), I dream: the evening is peaceful and quiet... (trans. A. Blok), "Dream" (trans. A. Yashin), "I was Told: "Your mother died a long time ago... " (trans. A. Akhmatova). In addition to poems, the image of A. Isahakyan's mother is portrayed with the magnificent lines in the poem "Abul Ala Maari" (trans. by V. Bryusov), as well as in legends and ballads: "The Wanderer Son" (trans. V. Ivanov), "Mother's Heart" (Armenian tradition), "Mother" (Shirak tradition), "Filial Love", in the story "Invincible Spirit", as well as in poems of a later period: "Mother Saw Me – Very Sad ...", "Look at My Mother – like the Sun ...", "Sadness is with Me, and with Me Goes ...". Another key theme of his poetry was the theme of wandering – love and longing for a distant homeland. The image of the mother – Almast – often personifies the image of the poet's homeland – Armenia, while the wanderer is an embodiment of an Armenian, the fighter for the liberation of his native people from the Turkish yoke.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

BOOK REVIEWS



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1915–1923 ԹԹ.
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

(1991–2015 ԹԹ.)

**(Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,
2020, 384 էջ)**

HOVHANNISYAN LILIT

THE ELUCIDATION OF THE ARMENIAN QUESTION, 1915–
1923, IN HISTORICAL SCIENCE OF THE REPUBLIC OF
ARMENIA (1991–2015)

(Yerevan, Institute of History NAS RA, 2020, 384 p.)

In 2020 our expert society got a chance to acquaint itself with a monograph “The Elucidation of the Problems of History of the Armenian Question, 1915–1923, in Historical Science of the Republic of Armenia (1991–2015)” by Lilit Hovhannisyana. This volume embraces a collection of 31 primary sources in the Armenian, Russian, English and German languages, with 96 books and 61 articles by practically all the leading specialists, who deal with the given topic. The author explores thoroughly and in all details her sphere, attributed to the international relations in 1878–1923 and subdivides this period into three stages: developments

during World War I in 1915–1918; functioning of the Republic of Armenia in 1919–1920, when the Quadruple Alliance had been defeated; and the Armenian diplomatic collapse of 1921–1923, when the Ottoman Empire had successfully transmuted into Kemalist Turkey through the highly fruitful negotiations with all its partners.

It should be noted that the scope of the material and processes presented in this work prove the diligence of L. Hovhannisyan and give an ample opportunity to formulate the very gist of the selected diplomatic processes, theoretical equipment and quality of scholarship in contemporary Armenia. This great amount of material serves the author as a solid base for correct evaluation and theoretical approaches, and the very wording of the book arouses the desire to read the analysed works of the enlisted specialists by all means. At the same time, thought **and ideas of L. Hovhannisyan don't interfere with the original thinking of the reader. For example, the author doesn't contest** an opinion of L. Khurshudyan that recovery of our political independence was a cause and an aim of the Armenian Question (pp. 23–24). However, she reasonably notes, that our national question, when perceived as an exact term in the history of international relations, had been principally focused on the implementation of reforms in Western Armenia. We can also add, that a postulate by G. Galoyan, regarding the independence as a constant priority of the Armenian liberation movement in the middle of the XVI–XX centuries, also raises questions, since ensuring of the physical security, peaceful labor and safekeeping of the private property were the main tasks and actual bounds of all social-political projects, designed for Western Armenia.

We do realize that the memorandum by Hovhannes Lazarian (Ivan Lazarev) for A. Suvorov, dated January 10.01.1780, “Conception of the Treaty between Two Nations” by Archbishop Hovsep Arghuthian (Iosif Argutinskii), composed in 1783; and particularly “The Snare of Glory,” composed by Shahamir Shahamirian at Madras in 1773, manifested the sharp vision of Statehood by Armenians; however, it was well-grounded to speak about political movement only in the XIX century, when the Social Democrat Hnchakian Party coined an independent republic in its program of 1888. And this thesis, however courageous, did not yet become a guideline for the society. Even the sessions of 1917–1918, held by the Central Armenian National Council in Tiflis, together with the first and only Armenian Independence Proclamation Act, declared on February 13, 1918, in Karin, indicate

that there existed contradictions between approaches and political thinking of Western and Eastern Armenians; it also demonstrates the disinclination of our national elite in the XX century to enter a new political stage of higher status. We were rather falling behind, than ahead of current events; and this was comprehensible. It is embarrassing to demand independence, when you lack means to protect people and need external military aid. Actually, independence of 1918–1920s was produced by the historic catastrophe beyond our control and will; it was not a result of purposive Armenian activity. Independence was an outcome of Russian revolution, burst in 1917, of the World War motion in 1918, as well as of the following Entente-Turkish relations together with the Russian Civil war. And, analogously, its consummation was determined by the politics of the Russian Soviet Federation in 1920–1921, rather than by our internal developments.

In L. Hovhannisyan's view, independence is an aim of liberation struggle, and its achievement should be apprehended as a criterion of success (p. 26). However, the review does not consider independence to be a panacea or some guarantee of security; it is only a tool to attain other vitally important goals. **This status didn't rescue the first Republic from the Turkish invasion in 1918 and 1920; it doesn't eliminate the risks of an assault today: independence brings** a wider opportunity and promotes initiative, but it excepts nothing.

At the same time it should be noted that L. Hovhannisyan started doing historiography as a trained expert in primary sources and writing some positive and solid study. She had initiated her research on "The Armenian Question and the Great Powers in 1914–1917" (Yerevan, Zangak-97, 2002) first, and only then proceeded with the evaluation of other publications related to somewhat broader subject.

Her own good knowledge enables her to analyse thoroughly a qualitative drift, that took place in the international relations at the beginning of the XX century in regard to Western Armenia and the Ottoman Empire in general. Thus, the author not only adduces **G. Galoyan's** opinion that "every time, when Russia presented threat to the interests of European Powers in Asiatic Turkey, the latter put aside their contradictions and stood up against Russia who defended Western Armenian" (p. 29). L. Hovhannisyan verifies that this Western opposition was not permanent. Being an expert in the Sykes-Picot Agreement, our researcher narrates the Russian-English approachment in 1907–1916 and inability of the Entente to impose neutrality upon the Ottoman Empire.

The long-lasting opposition between the West and Russia is definite; though the Power of Tsars constantly improved its position in Western Armenia by steady undulatory advance. Its undulatory movements inflicted enormous losses to the indigenous population; and the greatest Russian successes of 1916 were combined with abominable Armenian losses wreaked by the **Genocide of 1915**. **Let's note**, it was no one but Turkey, who repelled Britain in 1914, altered the substance of the Russian-British relations (pp. 53–54), and the coalition of these two countries was also reiterated during the World War II. Besides, if up to to the World War I Russia could not endure *competition*, then it appeared during these war-years that it had no vigour to *co-operate* with the West. The Russian Revolution of 1917 was an outcome of its thorough overstrain. As a whole, the long-lasting Russia-West antagonism led Lenin to the new strategy of the Russian-Turkish collaboration, incarnated in the Treaties of Brest (1918) and Moscow (1921). Now the RSFSR was a **strong and decisive part in its new alliance**. **Let's confirm that all** neighboring States have an undoubted right to live in peace and friendship, if they **don't** achieve their partnership at the expence of the third countries and nations.

As a merit of the monograph by L. Hovhannisyan her analyses of two terms: the Armenian Question and the Armenian Cause, deserve praise. The author records that the first term applies to international relations, and the second focuses on domestic policy, liberation movement, on the legal issues, in common with the problems of overcoming the consequences of the 1915–1923 Genocide and on the possibility for the exiled people to repatriate. We can add, that up to 1988–1991 the first term had always prevailed over the second and determined the bounds of our possibility. It was only the Armenian All-National Movement for the unification of Artsakh with the whole Motherland, that put an end to passivity of the people, who had served earlier for an object of political settlements. The All-national Movement transformed us into active co-authors of the developments; now we gave methods how the tasks should be solved, and completed our part of domestic and foreign policy. Independence of 1991–2021 has become an immediate result, main toolkit and successor of the All-National, unprecedented by its embrace and international reaction Movement, aimed to achieve freedom, security, self-determination and consolidation of Artsakh with the rest of Armenia.

Appraising the theoretical advantages of the monograph, we are compelled to notice, that the circumstantial description of books by G. Galoyan, V. Ghazakhetsyan, Hakob Hakobyan, K. Khachatryan in the introduction of L.

Hovhannisyan's book, and then of the work by H. Avetisyan in Chapter I (pp. 117–133, 142–152) appears to be too bulky, and it seems that the discussion of the first publications could be included in the main body, according to chronology, and H. Avetisyan's book "The Armenian Question in 1918" might have been represented more abridged. Yet, when L. Hovhannisyan examines the works of contemporary authors, she strives to mark out their practical significance (pp. 31–34). Though, to what extent the past and contemporary conditions are similar, so the current situation is worse politically to the same degree. The reiteration itself means that we have neither solved the problem earlier, nor do we use contemporary procedures, so as to evade unprofitable distribution of forces.

Simultaneously we have to record that together with numerous advantages, you can meet some errors in the book. So, when L. Hovhannisyan describes the Brest-Litovsk Treaty of 1918, she criticizes its Soviet interpretations as a deal, or "necessary respite," allegedly "wreched out of the imperialistic Powers" (pp. 75–76). Then she associates this wording with the author of the present review, rather than with a book by A. Chubaryan, explored in my article. Nevertheless, G. Makhmourian actively contests the apology of the Brest Treaty and readily shares the opinion of N. Adontz, H. Avetisyan, N. Esayan, R. Hovannisian in regard to diplomatic defeat of the RSFSR, disgraceful and capitulative document, that sacrificed the interests of our people. My own definition of the Treaty asserts that it reduced the defence capacity of Armenians and once again converted them into a small change in **international negotiations**. G. Makhmourian's point is, that the text of Brest-Litovsk "had not ceased the war, but rather brought to Transcaucasia an enemy assault on Tiflis and the occupation of Baku." Later on L. Hovhannisyan quite adequately represents the conception of the article on page 132 of her book.

Chapter II offers the historiography of the Armenian Question in its new appearance of 1919–1920, when the leading role in its political shaping passed from the German-Turkish alliance to the States of Entente and the U.S. (p. 159) – their activity was successively studied by A. Ghambaryan. L. Hovhannisyan, in her turn, pays appropriate attention to the concept of single American mandate; it would substitute the sole inspector for a partition of Ottoman possessions. They envisaged semi-independent, undermandatory Armenia in both cases, which would be later established as an utterly independent State; though this time Russia would be replaced with the USA. The latter strived to unite whole Transcaucasia with its sphere of influence (pp. 165–167); so that all this vast area would be re-

oriented from the North onto the West. Besides, separation and different mandatories would cause rivalry in the whole region and a single surveillance might facilitate economic co-operation.

Speaking in general, the reviewer shares an interpretation by L. Hovhannisyan and thinks it proper to verify, that W. Wilson did not consider the RSFSR to be a passive object of his politics; and that's why realization of his course was mostly reliant on Moscow's position. It was Turkey, that could be managed at the victor's discretion; but Russia was different and confrontation with this, recurring State did not enter into American strategy. To begin with 1918, American Congressmen considered that the Bolsheviks would not hail unification of Western and Eastern Armenia; so the legislators cautiously evaded confrontation with England and reserved the whole Mesopotamia as its zone of interests.

Nearly all the issues, associated with the Treaty of Sevres (signed on August 10, 1920), are thoroughly elucidated in the monograph under review (pp. 191–196, 201–202, 208, 215). It involves the works by L. Khurshudyan, S. Poghosyan, K. Poghosyan, A. Marukyan, A. Papyan, who pay special attention to the shaping of Armenian-Turkish relations, depending on Western or pro-Russian orientation of the Republic of Armenia (G. Galoyan, V. Melikyan, A. Hakobyan). While G. Galoyan wrote that **Erevan should neglect the Bolshevik's negative attitude** towards Sevres and kept pro-Russian political course (pp. 197–198), A. Hakobyan asserts on the implementation of the genuine national, Armenian-centered policy, and G. Makhmourian affirms a necessity for the Republic of Armenia to negotiate not only with the RSFSR and the West, but also to deal directly with Kemalist Turkey. This context also includes a valuable essay on the Armenian-Greek relations by H. Bartikyan.

Besides, the monograph under review gives a serious consideration to the juridical significance of the Treaty of Sevres, as well as to the arbitrary award of W. Wilson, dated November 22, 1920, together with the right of the exiled people to repatriate. These topics were studied in the publications by Hakob Hakobyan, A. Melkonyan, A. Marukyan, L. Hovhannisyan herself and, to some extent, by V. Melikyan. In contrast to their optimism, we have to record that legal demands, when they are not ensured with political and economic strength, become just a provocation against our adversary, which would stimulate his military activity and increase the danger to our **homeland and the people. That's how the Turkish-**

Armenian war of 1920 occurred (see pp. 220-223 on works by E. Zohrabyan, H. Hakobyan, A. Melkonyan, who address to the Russian factor in the empowerment of the Kemalists); then the huge Turkish assistance to the Azerbaijani assault was stimulated in 2020.

It seems quite natural, that after the juridical section we find Chapter III on tragic consummation of the Armenian Question in 1921–1923. This chapter describes a chain of documents, signed in Alexandropol (2. 12. 1920) – of the Franco-Turkish Cilicia Peace (9. 03. 1921), Italo-Turkish (12. 03) Treaties and Russian-British (16. 03) agreement in London – of the Treaties of Moscow (16/18. 03) – of Kars (13. 10.) – of the Franco-Turkish Ankara agreement (20. 10. 1921) – and of the Treaty of Lausannes (24. 07. 1923). We should naturally separate from this corps of papers the Treaties of Alexandropol, Moscow and Kars, since they are distinguished by enormous historiography of the Soviet era, by publications composed in the Diaspora, and by studies, created in 1991–2015, during the years of independence (pp. 249–251). Thus, if G. Galoyan tried to cushion negative results of the Russian-Turkish rapprochement then A. Hakobyan emphasizes contradictions and rivalry among these two sides. Unlike them, H. Avetisyan traces all agreements back to 1918 and reasonably takes into his chain decision of the Caucasus Bureau of the Central Committee of the RCP(B) on Artsakh, dated July 5, 1921. K. Khachatryan, H. Sukiasyan and G. Badalyan point out, in their turn, the extension of the same course into the 1930s and accentuate the problem of Nakhijevan. L. Hovhannysian reasonably identifies V. Ghazakhetsian, Ararat Hakobyan, A. Papyan as active critics of the Treaty of Moscow, though S. and K. Poghosyans considered its denouncement to be impossible.


At the same time, and in common with A. Hakobyan, E. Zohrabyan, L. Hovhannysian we have to exact: contrary to the opinion by A. Papyan, Azerbaijan ratified the Treaty of Kars on March 3, 1922, i. e. before the establishment of the Federative Union of the Republics of Transcaucasia; this union recognized independence and sovereignty of each contracting side. It was only on December 13, 1922, that this Union was reorganized into the unified Transcaucasian Federative Republic; and Armenia together with Georgia carried out their ratifications on March 20 and June 14 of the same year (see pp. 274–276). As a merit of the work by L. Hovhannysian we should also appreciate her analysis of the agreements, signed in 1921–1923; this documents are examined in the framework of contemporary problems and current Armenian-Turkish relations.

Her conclusions at the end of the book, seem to be well-balanced and just.

To sum up, we have to comment that the monograph “The Elucidation of the Problems of History of the Armenian Question, 1915–1923, in Historical Science of the Republic of Armenia (1991–2015)” by L. Hovhannisyan gives identical and interesting description of the quality of Armenian investigations in the selected area; thus, we can certainly recommend her book to the expert community as well as the wide range of readers.

GAYANE MAKHMOURIAN

*Doctor of Sciences in History,
Institute of History of the NAS RA
ggmakhm@hotmail.com*



ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀԱՆՋԻ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ՆԵՐՈՒԺԸ

Տիգրան Մեծ հրատարակչությունը 2020 թ. լույս է ընծայել Հրանուշ Հ. Հակոբյանի «Հիշում ենք և պահանջում» ստվար աշխատությունը (839 էջ)՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի առաջաբանով և բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվայանի խմբագրությամբ: Ընթերցողի գրասեղանին է դրվել հայ հանրությանը հայտնի հասարակական-քաղաքա-

կան ու պետական գործիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հրանտի Հակոբյանի գիտական ու հրապարակային զեկուցումների և ելույթների ժողովածուն: Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը: Այն փաստորեն հանրագումարի է բերում այս դարասկզբից մինչև 2018 թվականը Հայաստանի Հանրապետության քաղաքականության ընթացքը հայկական սփյուռքի ու ցեղասպանության, այլև վերջինիս հետևանքների արժեվորման ուղղությամբ:

Նշված ժամանակաշրջանում աննախընթաց սերտ և բազմակողմանի կապեր ստեղծվեցին հայրենիքի և սփյուռքի միջև՝ հատկապես Հայաստանում գործառույթային իրավասությամբ օժտված պետական կառույցների կայացմամբ, ներառյալ Սփյուռքի նախարարության ստեղծումով: Իր ներածականում վերջին հանգամանքը արժեքավորել է ակադ. Ա. Մելքոնյանը՝ նկատելով ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի լայն իրազեկությունը շնորհիվ այն բանի, որ «Գրքի հեղինակը երկար տարիներ եղել է հայոց պահանջատիրությանն առնչվող գործընթացների կիզակետում և այս գրքում ի մի են բերվել նրա գիտական, հրապարակախոսական, քաղաքական, մշակութային բնույթի հոդվածներն ու զեկուցումները, ելույթներն ու այլ նյութեր՝ նվիրված հայոց ցեղասպանության հիմնահարցին»:

Հիշողության և պահանջի անժամանցելի ներուժը

Ժողովածուում հիմնականում ընդգրկված են առանցքային կարևորություն ունեցող խնդիրներ, որոնք վերաբերում են հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման կարևորագույն հիմնահարցին, որոնք ուղեկցվում և իմաստավորվում են հեղինակային գործնական ու կազմակերպչական բովանդակության լրջմիտ առաջարկներով, հարցադրումներով և պատմաքննական վերլուծումներով ու դրանցից բխող արդիական եզրակացություններով: Այս ուղղությամբ գրքում անցյալն ու ներկան միավորող նշանակություն ունեն ցեղասպանության հարյուրամյակի նախապատրաստումն ու տարելիցը վերհանող զեկուցումները, ելույթները, նախաձեռնություններն ու հայրենիքում և սփյուռքում կազմակերպված բազմաթիվ միջոցառումները, որոնց ոչ քիչ դեպքերում մտահղացել և իր գործուն մասնակցությունն է բերել աշխատության հեղինակը: Գրքում հավուր պատշաճի են ներկայացված ընդհանրական արժեք ունեցող վավերագրեր ու հաղորդագրումներ, անդրադարձ է կատարվել ցեղասպանության տարելիցի առթիվ ոգեկոչման համահայկական հոշակագրին, նրա բովանդակությանն ու հիմնական սկզբունքներին, ինչպես նաև ազգային հնչեղություն ունեցող համապատասխան ձեռնարկներին ու դրանց նշանակությանը: Ավելացնենք, որ աշխատության էջերում ի թիվս թվարկված բազմաժանր նյութերի, տեղ է գտել հեղինակի նաև մեկ այլ՝ «Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում» գրքից մի հատված՝ նվիրված հայոց ցեղասպանությանը:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, չորս ծավալուն գլուխներից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Դրա առաջին հատվածներում ներկայացվում են Հր. Հակոբյանի զեկուցումները, ելույթները միջազգային համահայկական և այլ գիտաժողովներում: Այստեղ ընդգրկված անդրանիկ զեկուցումը հնչել է 2008 թ. դեկտեմբերի 12-ին՝ «1946–1948 թվականների հայրենադարձությունը և նրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» խորագրով գիտաժողովում: Այստեղ նա համոզիչ կերպով պարզաբանում է հայրենադարձության այս փուլի ընթացքում պետության թույլ տված սխալները, ինչպես նաև այն հանգամանքները, երբ մեր հազարավոր հայրենակիցների չմարող հայրենասիրությունը, երազած հայրենիքում վերապրելու մեծ ցանկությանը հակադրվեցին ԽՍՀՄ-ում տիրող քաղաքական վարչակարգը, անհիմն ու անկազմակերպ գործելակերպը: Ըստ հեղինակի հայեցակարգի, խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած հայրենադարձությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի. առաջին փուլն ընդգրկում է 1921–1936 թվականները, երբ տարբեր

Խառատյան Ա., Կարապետյան Ա.

երկրներից Հայաստան տեղափոխվեցին շուրջ 42.286 տարագիրներ: Երկրորդ փուլը իրականացվեց Առաջին աշխարհամարտին հետևած երկու-երեք տարիներին՝ սփյուռքահայերի ամենամեծ և առ այսօր իր չափերով անգերազանցելի մնացած հայրենադարձությունը, երբ հայրենիք վերադարձողների քանակը հասավ 89.750 մարդու: Հայրենադարձության երրորդ փուլը՝ ժամանակի իմաստով ամենից ընդգրկունը, բայց ամենևին էլ ոչ մարդաշատը, հեղինակը գետեղում է 1962–2008 (ընդհուպ մինչև զեկուցման տարին) թթ. միջև ընկած ժամանակահատվածում՝ իր 31.920 հայրենադարձներով: Իսկ ընդհանուր առմամբ 1922–1982 թթ. հայրենիք էր վերադարձել շուրջ 168 հազար մարդ: Շատ կարևոր է հեղինակի այն դիտարկումը, որ հեռանկարում հայկական պետության խնդիրը պետք է լինի հասնել զարգացման այնպիսի մակարդակի, ստեղծել այնպիսի պայմաններ, որ հայրենիքում բնակվելը դիտվի որպես առավելություն՝ իր ազգային ինքնությունը պահպանած հայ մարդու համար: Ճշմարտություն բոլոր ժամանակների համար, հատկապես ներկա ժամանակների, երբ հայրենիք-սփյուռք իրական կառույցներին փոխարինել են մեզ անծանոթ մնացած առաքելության և առաքինության քարոզները:

Հր. Հակոբյանի ելույթներում և ուսումնասիրություններում հիմնավոր դիտարկումներ են արվում հայոց ցեղասպանության երևույթի, դրա պատճառների ու հետևանքների ինքնատիպ շեշտադրումներով իմաստավորման և պարզաբանման առումներով: Նա քանիցս փաստարկում է, որ Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածների և տեղահանության տարիներին երիտթուրքական իշխանությունը նպատակաուղղված կերպով ձգտում էր ոչնչացնել նաև հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները, և որ սույն գործընթացը շարունակվել ու շարունակվում է նաև մեր օրերում: Այս ամենի բոլորովին նոր և բարբարոսական դրսևորումներն ենք տեսնում Արցախի տարածքներն օկուպացրած ադրբեջանական զավթիչների էյֆորիկ հայտարարություններում և գործողությունների մեջ: Չկարողացանք պահպանել մեր իսկ տնօրինության տակ գտնվող այդ տարածքների մեծ մասն ու դրանց իրական պատկանելությունը վկայող նյութական ու հոգևոր արժեքները, և ցավոք, պետք է դառնանք մեր՝ բողոքելու կրավորական ու մաշված իրավունքին: Գոնե դրանից առաջ և առաջնային համարենք նոր արժեքներ կորցնելու սպառնալիքի առջև մեր թույլ տված սխալները սթափությամբ վերհանելու և դրանցից ձերբազատվելու ճշմարտությունը:

Վերադառնանք, սակայն, գրքում արձանագրված ժամանակին և նույն ժամանակի սահմաններում գտնվող հեղինակային մտորումներին: Ցավոք,

Հիշողության և պահանջի անժամանցելի ներուժը

այսօր առավել քան կորսված են թվում հեղինակի անկեղծ ակնկալիքները ցեղասպանության ճանաչման և դրա հետևանքները ի շահ մեր ժողովրդի մեղմելու կամ վերացնելու ուղղությամբ, «որպեսզի աշխարհում սկսվի նոր, համակարգված գործընթաց թուրքական ժխտողականության դեմ, ճշմարտության վերհանման նպատակով, ինչը կստիպի Թուրքիային ճանաչել մեկ դար առաջ կատարված ցեղասպանությունը» (էջ 145): Ավելացնենք, որ դրա նախադրյալներից ամենակարևորը՝ հայոց պետականությունը, գոնե այսօրվա դրությամբ, չկարողացավ անցնել կորսված հայրենի եզերքներին մերձենալու հնարավոր սահմանները, ընդհակառակն, այսօր մեր ընդարմացած ժողովրդի անտարբեր հայացքի ներքո մեծապես սպառնալիքի տակ են գտնվում Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանները և հոասահատվելուց առաջ հարկ է իմաստավորել արդիական զարգացումներն ու չկոտրվել՝ հոգու և մտքի մեջ անթեղված պահելով ազգի գոյության իրավունքի և դրա նախապայմանների գիտակցումը:

Վերստին վերադառնալով խնդրո առարկա աշխատությանը, նկատենք, որ Հ. Հակոբյանի պետական, հրապարակախոսական ու գիտական մտահոգությունների առանցքում հայկական սփյուռքն է՝ իր բարդ և բազմաբնույթ խնդիրներով, մտահոգություններով ու տազնապներով: Դրանք հենվում են հեղինակի լայն իրազեկության, սփյուռքի ճանաչման փաստական խորը իմացության և առանձնահատկությունների հաշվառման վրա: Այդ հեղինակին հնարավորություն է տվել ճշմարտացի ձևակերպել սփյուռքահայությանը նետված մարտահրավերները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք գործակցության հիմնախնդիրները՝ թեև այստեղ պետք է հաշվի առնել փոփոխված իրականությունը, ինչպես և հեղինակային մտայնության և գրքի հրատարակության ժամանակային գործոնը: Փոխարենը, գիտական ակնհայտ արժեք ունի Հ. Հակոբյանի ներկայացրած՝ հայկական սփյուռքի պատմության ժամանակագրական պատկերը՝ հատկապես 1895–1923 թթ., երբ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության արդյունքում հարյուր հազարավոր հայեր ցրվեցին աշխարհով մեկ: Կարևոր է հայկական սփյուռքի ինքնության պահպանության գործոնների վերհանումը՝ նրա բազմաթիվ ենթակառուցվածքների կենսունակ գործառույթներով (ազգային լուսավորական-կրթական հաստատություններ, եկեղեցի, ավանդական կուսակցություններ, լրատվամիջոցներ), հայրենիքի հետ հարատևող մշակութային փոխադարձ կապեր և այլն: Այս վերջինը՝ հեղինակը հիմնավորում է պատմականորեն համոզիչ այն իրողությամբ, որ «Հայկական սփյուռքի կազմավոր-

Խառատյան Ա., Կարապետյան Ա.

րումը կառուցվածքային առումով և Հայաստանի Անկախ Հանրապետության վերածնունդին իրականություն են դարձել գրեթե միաժամանակ» (էջ 264):

Հ. Հակոբյանի աշխատության մեջ առանցքային նշանակություն ունի հայրենիք-Սփյուռք կապերի շարունակական հղկումն ու խորացումը: Այսօր ևս, չնայած փոփոխված աշխարհաքաղաքական, մասնավորապես Հայաստանի Հանրապետության բեկված արտաքին և ներքին քաղաքական իրականությանը, իր կարևորությունը չի կորցրել հայերի ցեղասպանությունը աշխարհին ճանաչեցնել տալու խնդիրը: «Հայկական համայնքների խնդիրն է,- գրում է հեղինակը,- ակտիվացնել լոբբիստական աշխատանքները՝ ցեղասպանության ճանաչման գործընթացին նոր թափ հաղորդելու համար: Թուրքերը և թուրքական կառավարությունը պետք է հասկանան, որ հայերը երբեք, ոչ մի դեպքում չեն լռելու» (էջ 481):

Անշուշտ, վերը նշված փոփոխությունների համեմատ՝ առաջիկայում կմշակվեն Սփյուռքի հետ Հայրենիքի փոխհարաբերությունների և առնչությունների նոր հայեցակարգեր՝ դրանց համապատասխան դրսևորումներով ու առանձնահատկություններով: Բոլոր դեպքերում, կարծում ենք, դրանց հիմքում պետք է ընկած լինի կորսված հայրենիքի մասին հիշողության և պահանջատիրության կենսունակության գիտակցումը, առանց որի չի կարող լինել Սփյուռքի հարատևման որևէ փիլիսոփայություն և կարծում ենք, հայրենիքի հետ նրա կապերի ու առնչությունների որևէ շարունակականություն: Այդ է վկայում նաև այս աշխատության ամբողջ ուղղվածությունն ու առողջ տրամաբանությունը:

Աշխատության մեջ պակաս ուշագրավ չեն նաև Հայաստանի հանրապետությունների՝ տարբեր ժամանակներում սփյուռքի հետ աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծած կառույցների և դրանց գործունեության վերաբերյալ ուրվագծումները՝ սկսած Հայ օգնության կոմիտեի (1921), և ապա, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի (1964) կազմակերպմամբ, այնուհետև՝ 2008 թ. հոկտեմբերին Սփյուռքի նախարարության ստեղծումով: Այս վերջինիս գործունեության ակունքների մոտ է կանգնած ինքը՝ գրքի հեղինակ Հրանուշ Հակոբյանը, որի հայրենանվեր աշխատանքը և այս գրքում ցայտունորեն ընդգծված մոտեցումներն ու վերաբերմունքը սփյուռքի նկատմամբ՝ հաղթահարում են անձնական ազնիվ գործունեության շրջանակները և վերաձվում հայկական սփյուռքի, նրա պատմության և ինքնության պահպանության անդաստանում հայոց պետականության ազգաշահ քաղաքականության մի ամբողջ դարաշրջանի անդրադարձը: Նոր մարտահ-

Հիշողության և պահանջի անժամանցելի ներուժը

րավերներ են դրված և հայրենի պետականության, և անխուսափելիորեն՝ սփյուռքի գոյատևման քառուղիներում և այս պայմաններում Հրանուշ Հակոբյանի «Հիշում ենք և պահանջում» գրքի վերնագիրը հնչում է իբրև ահազանգ ու բնաբան՝ զգայող ու մտածող յուրաքանչյուր հայի համար:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

*Պարմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՀՀ ԳԱԱ պարմության ինստիտուտ*

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Պարմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պարմության ինստիտուտ*

ՀՈՒՅՆՆԵՐ

JUBILEE



ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

2021 թ. ապրիլի 27-ին լրացավ պատմաբան Էդիկ Մինասյանի 65-ամյակը:

Շնորհալի գիտնականն ու նվիրյալ քաղաքացին ապրել է իրադարձություններով հարուստ կյանք, եղել կրթական գործի կազմակերպման ոլորտում՝ դրսևորելով նվիրում ու եռանդ, նշանակալի ներդրում ունեցել հայագիտության զարգացման գործում և գտնվել հասարակությանը հուզող հիմնահարցերի կիզակետում:

Նա ծնվել է 1956 թ. Թալինի Ոսկեթաս գյուղում՝ Հայոց ցեղասպանությունից փրկված հայրենասեր ու քաջ նահապետի գերդաստանում: Սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում և այն գերազանցությամբ ավարտել 1979 թ.: 1985 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, 2003 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1991 թ. ստացել է դոցենտի, իսկ 2005 թ. պրոֆեսորի կոչում: Աշխատել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի օգնական (1979–1982 թթ.), հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ (1987–1994 թթ.), դեկանի տեղակալ (1999–2009 թթ.): 2009 թ. մինչև օրս ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանն է: Երկար տարիներ նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է:

Էդիկ Գարեգինի Մինասյան Ծննդյան 65-ամյակի առթիվ

Մեծ է նրա ներդրումը ուսանողության կրթության գործում: ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում նա դասավանդել է «Հայոց պատմություն», «Հայ դիվանագիտության պատմություն», «Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն», «Հայաստանի և Արցախի հանրապետությունների պատմություն», «Հայոց նորագույն պատմության հիմնահարցեր» և «Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն» առարկաները: Հընթացս հեղինակել կամ որպես համահեղինակ հանդես է եկել Հայոց պատմության դպրոցական (IX և XII դասարաններ) և մի շարք բուհական դասագրքերի, ինչպես օրինակ՝ «Հայոց պատմության հիմնահարցեր» (2000 թ.) և «Հայոց պատմություն» (2012, 2014) խորագրով դասագրքերի:

Է. Մինասյանը շուրջ 40-ամյա գիտական գործունեության ընթացքում ընթերցողին է ներկայացրել մեկ տասնյակից ավելի ծավալուն մենագրություններ և երկու հարյուրից ավելի գիտական հոդվածներ: Նրա հետաքրքրությունների շրջանակում են հայ դիվանագիտության պատմությունը, Հայոց պատմության արդի շրջանը, հայրենիք-սփյուռք առնչությունները, հայ ազատամարտը, ինքնապաշտպանական կռիվները, 19-րդ դարավերջի և 20-րդ դարի հայոց ազատագրական կռիվներում հերոսուհի կանանց մասնակցությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Արցախյան ազատամարտը և այլն:

Նրան հատկապես մեծ հռչակ բերեց «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990–2003 թթ.» աշխատությունը¹: Նման հիմնահարցին անդրադառնալը գիտնականից պահանջում էր մի կողմից գիտական խիզախություն, իսկ մյուս կողմից՝ քրտնաջան աշխատանք, յուրահատուկ մեթոդական մոտեցումներ, ընդհանրացումներ կատարելու հմտություններ, արդիական ու ցավոտ հիմնախնդիրների լավագույն իմացություն և ըմբռնում: Պատահական չէ, որ աշխատությունը լայն ընդունելություն գտավ մեր հասարակության շրջանում, իսկ ուսանողի համար դարձավ ուղղակի անփոխարինելի դասագիրք ու շտեմարան:

Է. Մինասյանի ուսումնասիրությունների շրջանակը տարիների ընթացքում գնալով ավելի ու ավելի էր ընդլայնվում. 2005 թ. նա Մ. Մուրադյանի համահեղինակությամբ հրատարակեց «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18-19-րդ դդ.)» ուսումնական ձեռ-

¹ Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990–2003 թթ., Եր., 2003:

Եղիազարյան Ա.

նարկը²: Այդ խիստ շահեկան աշխատությունը կիրառվում է ԵՊՀ մի շարք ֆակուլտետներում՝ որպես գիտաառումնական ձեռնարկ:

Նրա ուշադրության կենտրոնում միշտ էլ եղել են հայրենիք-սփյուռք առնչությունները: 2010 թ. նա Ա. Վարդանյանի համահեղինակությամբ հրատարակեց «Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991–2009 թթ.)» աշխատությունը³, որտեղ տեղ էին գտել նրա երեք ծավալուն հոդվածները՝ նվիրված հայրենիք-սփյուռք հարաբերությունների հիմնական ուղղություններին, մշակութային և գիտական առնչություններին: 2018 թ. հրատարակվեց նրա «Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001–2017 թթ.)» խորագրով մենագրությունը⁴:

Է. Մինասյանը հետաքրքրվում է նաև առանձին հայկական գաղթօջախների պատմությամբ: 2018 թ. նրա համահեղինակությամբ լույս տեսավ հյուսիսկովկասյան հայ համայնքների՝ 20-րդ դարի պատմությանը նվիրված աշխատությունը⁵, իսկ 2020 թ.՝ Դոնի հայ համայնքի՝ նորագույն շրջանի պատմությանը նվիրված ուսումնասիրությունը⁶:

2013 թ. լույս աշխարհ եկավ Է. Մինասյանի երկար սպասված «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն» ֆունդամենտալ աշխատությունը⁷, որտեղ ՀՀ-ի արդի փուլի պատմությունից բացի ամենայն մանրամասնությամբ ներկայացված է նաև Արցախի արդի պատմությունը: Այն իր ծավալով և քննարկված հիմնահարցերով եզակի աշխատություն է, որում ընթերցողը կարող է գտնել հայկական երկու հանրապետությունների 20-րդ դ. վերջի և 21-րդ դ. սկզբի պատմության գործնականում բոլոր հարթությունները՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, դիվանագիտության և սփյուռքի հետ առնչությունների: Նման ընդգրկուն ուսումնա-

² Է. Մինասյան, Մ. Մուրադյան, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18–19-րդ դդ.), Եր., 2005:

³ Է. Մինասյան, Ա. Վարդանյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991–2009 թթ.), Գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010:

⁴ Է. Մինասյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001–2017 թթ.), Եր., 2018:

⁵ Է. Մինասյան և այլք, Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմություն և մարտահրավերներ, Եր., 2018:

⁶ Է. Մինասյան և այլք, Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն, Եր., 2020:

⁷ Է. Մինասյան, Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013:

Էդիկ Գարեգինի Մինասյան Ծննդյան 65-ամյակի առթիվ

սիրությունը օրվա պահանջ էր, որի հիմամբ, վստահ ենք, շատ ու շատ հետագոտողներ կկարողանան պատրաստել ու հրատարակել նորանոր ուսումնասիրություններ, իսկ ուսանողությունը ձեռք կբերի հենքային գիտելիքներ մեր նորօրյա պատմության վերաբերյալ: Պատահական չէ, որ շուրջ երկու տասնյակ ասպիրանտներ և հայցորդներ է. Մինասյանի ղեկավարությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության վերաբերյալ: Այդպիսով ձևավորվել է այդ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության յուրահատուկ դպրոց:

2018 թ. է. Մինասյանը հրատարակեց «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը» մենագրությունը՝ այնտեղ ամփոփելով Հայաստանի երրորդ հանրապետությանը նվիրված իր երկարամյա հետազոտությունների արդյունքները⁸:

Պատմաբանը մշտապես հետևել է Արցախյան հիմնահարցին, որի վերաբերյալ հանրությանն է ներկայացրել կարևոր ուսումնասիրություններ⁹: Բացի այդ, նա միշտ արցախահայության կողքին է: Հաճախ էր այցելում այնտեղ և հանդիպումներ ունենում պետական գործիչների ու բանակի հետ:

Նրան մշտապես հուզել է Արցախյան հիմնահարցի վերաբերյալ ադրբեջանական կեղծարարության դեմ գիտական պայքարի կազմակերպման խնդիրը: Այս ուղղությամբ նրա հրապարակումները¹⁰ կարևոր ներդրում են հայոց պատմության նենգափոխման և կեղծարարության դեմ պայքարում:

Է. Մինասյանը լավագույնս տեղեկացված լինելով Լեռնային Ղարաբաղի հանրապետության սոցիալ տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ՝ վերջինիս է նվիրել առանձին հետազոտություն¹¹:

⁸ Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Եր., 2018:

⁹ «Արցախյան շարժման պատմությունից», «Երիտասարդ երկրապահ», N 106, Եր., 2014, էջ 26–31: «Արցախյան գոյամարտի պատմության ուսումնասիրության խնդիրները», «Լրատու» գիտական հոդվածների ժողովածու, N 1, Եր., 2012, էջ 72–85: «Արցախյան ազատագրական շարժումը և «Դեպի երկիր» կարգախոսը», «Հայ դատ» մատենաշար, N 3, Եր., 2011, էջ 150–162: «1988–1994 թթ. Արցախյան ազատամարտի առանձնահատկությունները», «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 5–6, Եր., 2005, էջ 120–127:

¹⁰ «Фальсификация истории Арцахского движения и Нагорно-Карабахской республики в Азербайджанских учебниках», «Բանբեր հայագիտության», 2013, N 1, էջ 180–193: «ԼՂՀ պատմության նենգափոխումը Ադրբեջանական դասագրքերում», «ԼՂՀ դատական իշխանություն», N 2 (6), Եր., 2012, էջ 5–15:

¹¹ «ԼՂՀ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական վիճակը անկախության տարիներին 1991–2008 թթ.», «Լրատու» գիտական հոդվածների ժողովածու, N 1 (8), Ստեփանակերտ, 2010, էջ 3–16:

Եղիազարյան Ա.

Գիտնականը զբաղվել է նաև հայկական բանակին նվիրված վերլուծություններով¹², ներկայացրել այնտեղ տեղի ունեցող բարեփոխումների գործընթացը՝ պատերազմի մշտական սպառնալիքի առկայության պայմաններում:

Նա առանձնաբար ուսումնասիրել է ՀՀ ներքին իրադրության խնդիրները, ինչպես նաև մեր պետության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հիմնահարցերը¹³:

Հայտնի է, որ հայոց դիվանագիտության պատմության վերաբերյալ մեզանում անհնար է գտնել մեկ ամբողջական ուսումնասիրություն: Տարիներ ի վեր դասավանդելով «Հայ դիվանագիտության պատմություն» առարկան՝ է. Մինասյանն անհրաժեշտաբար զբաղվել է հայոց դիվանագիտության հանգուցային հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Արժեքավոր են նրա դիտարկումները Տիգրան Մեծի ռազմադիվանագիտական գործունեության, ՀՀ-Ռուսաստանի Դաշնություն, հայ-վրացական, հայ-բուլղարական և հայ-ֆրանսիական հարաբերությունների ներկա փուլի վերաբերյալ¹⁴:

¹² «Հայաստանի երրորդ Հանրապետության ազգային բանակի ստեղծման պատմությունից», «Հայկական բանակ», N 4, Եր., 2003, էջ 3–18: «Պատերազմի սպառնալիքը և բարեփոխումները հայկական բանակում 21-րդ դարասկզբում», «Զայն Կիլիկիո Հայոց», N 1, Եր., 2012, էջ 11–15: «Պատերազմի սպառնալիքները և բարեփոխումները հայկական բանակում 21-րդ դարասկզբում», «Զայն Կիլիկիո Հայոց», Բ մաս, Եր., 2013, N 2, էջ 12–17:

¹³ «ՀՀ ներքին դրությունը. տնտեսական վիճակը (2001–2011 թթ.)», «Լրատու», N 1 (12), Եր., 2012, էջ 105–114: «Հայաստանի հանրապետության անկախության 20-ամյա ուղին», «Լրատու», N 11, Ստեփանակերտ, 2011, էջ 20–32: «Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա», «Լրատու», N 2 (29), Ստեփանակերտ, 2010, էջ 41–52: «ՀՀ ժողովրդագրական և սոցիալական ապահովության հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները», «Լրատու», Եր., 2007, N 1: «Ազրարային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում 1991–2002 թթ.», «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (107), Եր., 2002, էջ 146–157 և այլն:

¹⁴ «Տիգրան Մեծի ռազմադիվանագիտական գործունեության պատմությունից», Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 51–58: «ՀՀ և ՌԴ հարաբերությունները (1991–2001 թթ.)», «Պատմություն և մշակույթ», N 1, Եր., 2011, էջ 3–22: «Հայ-վրացական հարաբերությունները 1991–2011 թթ.», «Լրատու», 2015, էջ 142–149: «Հայ-բուլղարական հարաբերությունները 1991–2008 թթ.», «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2009, էջ 48–62: «Հայ-ֆրանսիական միջպետական կապերը և դիվանագիտական հարաբերությունները (1991–2016 թթ.)», «Լրատու», 2017, էջ 160–176:

Էդիկ Գարեգինի Մինասյան Ծննդյան 65-ամյակի առթիվ

Իր մի շարք ուսումնասիրություններում նա հատկապես արժևորել է ազգային-ազատագրական շարժման հերոսական դրվագները¹⁵ և պետական ու ռազմական գործիչների (Ա. Օզանյան, Մ. Սիլիկյան, Ա. Մանուկյան, Գ. Նժդեհ, Մ. Խրիմյան) գործունեությունը¹⁶: Առանց այդ հետազոտությունների վերջիններիս կենսագրությունները չէին ստանա ամբողջական կերպարանք:

Հայ դատի աշխատանքներին նպաստելու հրամայականը հայրենասեր գիտնականին մղել է վերահրատարակելու հայ դատի վավերագրերն ընդգրկող հայտնի ուսումնասիրությունները՝ հանդես գալով ընդարձակ մուտք-նախաբաններով¹⁷:

Նա 2018 թ. համահեղինակել և խմբագրել է Երևանի պատմության նոր հրատարակությունը¹⁸, իսկ 2020 թ. հրատարակել մայրաքաղաքի արդի փուլի պատմությանը նվիրված մենագրություն¹⁹:

Վերջին տարիներին Է. Մինասյանը զբաղվել է նաև հերոս հայրուհիների սիրանքների վերհանման և հանրության լայն շրջանակներին հասու դարձնելու աշխատանքով²⁰, ինչպես նաև խորհրդային ժողովուրդների Հայրենական

¹⁵ «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ.», «Հայկական բանակ», Եր., 2015, N 1–2, էջ 88–135: «Վասպուրականի հերոսամարտը», «Էջմիածին», N 5, 2015, էջ 101–115: «Խնուս գավառի հերոսամարտերը 1915 թ.», «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2016, էջ 3–17: «Խնուս գավառի հայկական գյուղերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ.», «Լրատու», 2016, էջ 133–154:

¹⁶ «Զորավար Անդրանիկի գործունեության պատմության դասերը», «Անդրանիկ Օզանյան – 150» գիտաժողովի նյութեր, Եր., 2015, էջ 160–183: «Մովսես Սիլիկյանը ռազմական գործիչ», «Պատմություն և մշակույթ», N 3, Եր., 2012, էջ 77–86: «Արամ Մանուկյանի պետական գործունեությունը», «Արամ Մանուկյան. Ազգային-պետական գործիչը», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2010, էջ 5–18: «Խրիմյան Հայրիկը ազատագրական պայքարի գաղափարական առաջնորդ», ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Գ, Եր., 2010, էջ 191–205:

¹⁷ «Լեո. հայկական հարցի վավերագրերը», Եր., 2014: «Ալեքսեյ Զիվելեզով, Թուրքիան և Հայկական հարցը», Եր., 2014:

¹⁸ Սիմոնյան Հ., Մովսիսյան Ա. և այլք, Երևանի պատմություն, Եր., 2018:

¹⁹ Է. Մինասյան, Մայրաքաղաք Երևանը ՀՀ անկախության տարիներին (1991–2018 թթ.), Եր., 2020:

²⁰ Է. Մինասյան, Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին, Եր., 2016: «Հայ հերոսուհի կանայք», Եր., 2016: «Героическая деятельность армянок в годы освободительного движения конца XIX – начала XX века», Москва, 2020 և այլն:

Եղիազարյան Ա.

մեծ պատերազմի տարիներին ԵՊՀ գործունեությանը և համալսարանականների սխրանքներին²¹:

Ի վերջո, Է. Մինասյանի գիտական գործունեության մեջ հատկապես կարևոր է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ներկա փուլի առանձնահատկությունների խորքային ուսումնասիրությունը²²: Գիտնականը նաև քննարկել է այդ գործընթացում ՀՀ-ի դերի հարցերը²³: Քննության է առել նաև 20-րդ դ. վերջին Սումգայիթում և Բաքվում հայերի ցեղասպանության հարցը, տվել այդ դեպքերի իրավաքաղաքական գնահատականը²⁴:

Նա մասնակցել ու մասնակցում է հանրապետական բազմաթիվ գիտաժողովների, որտեղ հանդես է եկել հետաքրքիր և բովանդակալից զեկուցումներով:

Իր կատարած մեծածավալ գիտական աշխատանքի համար նա հինգ տարի անընդմեջ (2016–2021 թթ.) ճանաչվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող:

Գիտաուսումնական աշխատանքից բացի Է. Մինասյանը հայտնի է իր հասարակական գործունեությամբ: Նա երկար տարիներ «ԻՆՈՍ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է և այժմ է ընկնում կազմակերպական ու ստեղծագործ աշխատանքով:

Մինչև 2018 թվականը նա «Երկրապահ» կամավորական միության վարչության անդամ էր, որտեղ խոսքով ու գործով մշտապես աջակցել է միության աշխատանքներին և մասնակցել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործին:

²¹ Է. Մինասյան Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.), Եր., 2019:

²² «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները», «Պատմություն և մշակույթ», N 1, Եր., 2011, էջ 325–352: «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը. դատապարտում և հատուցում», «Քրիստոնյա Հայաստան», Բացառիկ, էջմիածին, 2015, էջ 47–53:

²³ «Հայաստանի երրորդ Հանրապետությունը և Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը», ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., 2005, էջ 49–63:

²⁴ «Սումգայիթյան և Բաքվի ջարդերի իրավաքաղաքական գնահատականը», «Մեծ Եղեռն. դատապարտումից հատուցում», գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2011, էջ 36–50: «Բաքվի 1990 թ. հունվարյան ջարդերը և դրանց իրավաքաղաքական գնահատականը», «Տարեգիրք» ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Եր., 2010, էջ 8–21:

Էդիկ Գարեգինի Մինսայան Ծննդյան 65-ամյակի առթիվ

Նա եղել է նաև նաև ՀՀ հանրային խորհրդի անդամ (2013–2018 թթ.), որտեղ հանդես է եկել հասարակական տարաբնույթ նախաձեռնություններով:

Է. Մինսայանը մեր հեռուստատեղիների հայրենասիրական հաղորդումների մշտական սիրված հյուրն է, որոնց ընթացքում հանրությանն է ներկայացնում հայոց պատմության այս կամ այն անհայտ դրվագը, արժևորում և նորովի մեկնաբանում մեր ժողովրդի սխրագործություններն ու նվաճումները: Նա նաև «Մեր մեծերը» հաղորդաշարի մշտական մասնակիցն է:

Նա պարգևատրվել է «Լեոնային Ղարաբաղի ազատագրության համար» ոսկե մեդալով, ԵՊՀ ոսկե մեդալով, ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալով, ՀՀ ազգային ժողովի նախագահի պատվոմեդալով, ՀՀ վարչապետի հուշամեդալով, «Գարեգին Նժդեհ» և «Դրաստամատ Կանայան» մեդալներով, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով և, վերջապես, «Մովսես Խորենացի» մեդալով:

Եռանդաշատ գիտնականին և հանրապետության արժանավոր քաղաքացուն մաղթենք երկար տարիների կյանք և գիտական նորանոր նվաճումներ:

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևանի պետական համալսարան
armyegh@yahoo.com*

Գիտական խորհուրդ	Научный совет	Scientific council
Աղայան Արարատ	Авагян Арцрун	Aghasyan Ararat
Ավագյան Արծրուն	Аветисян Павел	Avagyan Artsrun
Ավետիսյան Պավել	Агасян Арагат	Avetisyan Pavel
Բարդակչյան Գևորգ	Айрапетян Серго	Bardakchyan Gevorg
Գևորգյան Համլետ	Арутюнян Владимир	Dedeyan Gerard
Դեդեյան Ժիրայր	Бардакчян Геворг	Donabedian Anahid
Դում-Թրագուտ Յասմին	Геворгян Гамлет	Dum-Tragut Jasmine
Ջեքիյան Լևոն	Дедеян Жирайр	Gevorgyan Hamlet
Իսահակյան Ավետիք	Дум-Трагут Ясмин	Harutyunyan Vladimir
Կատվայան Վիկտոր	Зекиян Левон	Hayrapetyan Sergo
Հայրապետյան Սերգո	Исаакян Аветик	Hovannisian Richard
Հարությունյան Վլադիմիր	Катвалян Виктор	Hovhannisyan Henrik
Հովհաննիսյան Լավրենտի	Маэ Жан-Пьер	Hovhannisyan Lavrenti
Հովհաննիսյան Հենրիկ	Мелконян Ашот	Hovsepyan Liana
Հովհաննիսյան Ռիչարդ	Минасян Эдуард	Isahakyan Avetik
Հովսեփյան Լիանա	Мутафян Клод-Армен	Katvalyan Viktor
Մահե Ժան-Պիեռ	Овсебян Лиана	Mahé Jean-Pierre
Մելքոնյան Աշոտ	Оганесян Генрик	Melkonyan Ashot
Մինասյան Էդիկ	Оганесян Лаврентий	Minasyan Eduard
Մուֆաֆյան Կլոդ-Արմեն	Оганесян Ричард	Mutafian Claude-Armen
Շիրինյան Աննա	Погосян Геворг	Poghosyan Gevorg
Պողոսյան Գևորգ	Сафрастян Рубен	Safrastyan Ruben
Սաֆրաստյան Ռուբեն	Симонян Арам	Simonyan Aram
Սիրինյան Արամ	Суварян Юрий	Sirinian Anna
Սովարյան Յուրի	Тонапетян Анаит	Suvaryan Yuri
Տոնապետյան Անահիտ	Ширинян Анна	Zekiyan Levon Boghos

Հրատ. պատվեր N 1110
Ստորագրված է տպագրության 02.08.2021 թ.:
Չափեր՝ 70x100^{1/16}: 17 տպ. մամուլ:
Տպաքանակը 150 օրինակ:

*Խմբագրության հասցեն. 375019, Երևան-19,
Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, հեռ. (+374 10) 521362, 010.564180*
*Адрес редакции: 375019, Ереван-19,
пр. Маршала Баграмяна 24/4, тел.: (+374 10) 521362, 010.564180*
*24/4, Marshal Baghramyan
Ave., Yerevan, 375019. Tel: (+374 10) 521362, 010.564180*
www.hayagithimnadram.am
Email: joas2015@yahoo.com, info@haygithimnadram.am
*ՀՀ ԳՄ «Գիտություն» հրատարակչություն Երևան, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.*
*Printing House of the "Gitutuyun" Publishing of the NAS RA, 375019,
Yerevan, Marshal Baghramian ave., 24.*
*Типография издательства «Гитутюн» НАН РА, 375019,
Ереван, пр. Маршала Баграмяна, 24.*